Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

[illegible]
[illegible] 14
[illegible] 232
[illegible] 3
[illegible] 17 [illegible]
[illegible] 147
[illegible] 153 [illegible]
150. [illegible] 16[illegible]
[illegible] 24
[illegible] 29.

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] 482
[illegible] 9
[illegible]
[illegible] 186.
[illegible]
[illegible]
[illegible]

I Ш. № 5

~~3587~~

4581

# ԺԱՄԱԳԻՐՔ

Համառօտեալ աղօթից Հայաստա-
նեայց Սուրբ Եկեղեցւոյ:

## ՏՊԱԳՐԵԱԼ

Ի Հայրապետութեան Տեառն Ներսեսի
Աստուածընտիր Կաթուղիկոսի ամենայն
Հայոց և զանազան նշանաց ասպետի:
Հրամանաւ Վիճակային Հայոց Կոնսիստորիային
Շիրվանու:

Ի ՇԱՄԱԽԻ:

Ի տպարանի երից ընկերացն Մովսէսի
Զօհրաբեանց Մինասի Տաղլեջեանց
և Մարգարէի Գուլեանց:

1851 — ՌՅ

# ՀՐԱԺԱՐՈՒՄՆ

Հրաժարիմք ՚ի սատանայէ, և յամ՟ խաբէութենէ նր՟, ՚ի պատրանաց նր՟, ՚ի խորհրդոց նր՟. ՚ի գնացից նր՟, ՚ի չար հրեշտակաց նր՟, ՚ի չար պաշտօնէից նր՟, ՚ի չար կամարարաց նր՟, և յամ՟ չար զօրութենէ նր՟ հրաժարելով հրաժարիմք։

Դաւանութիւն ուղղափառ հաւատոյ Հայոց։

Խոստովանիմք և հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Ա՟Ծ՝ անեղ, անծին և անսկիզբն. այլ և ծնօղ որդւոյ՝ և բղխօղ հոգւոյն սբյ։ Հաւատամք զԲանն Ա՟Ծ՝ անեղ, ծնեալ և սկսեալ ՚ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ոչ յետոյ և ոչ կրտսեր այլ՝ որքան Հայրն՝ Հայր, ընդ նմին և որդին՝ որդի։ Հաւատամք զՍբ Հոգին՝ անեղ, անժամանակ. ոչ ծնեալ, այլ բղխեալ ՚ի Հօրէ. էակից Հօր՝ և փառակից որդւոյ։ Հաւատամք զԵրրորդու՟ն սբ՝ մի բնու՟ի, մի ա՟ծու՟ի. ոչ երեք ա՟ծք, այլ

մի Ած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, արարիչ երևելեաց և աներևութից: Հաւատամք յեկեղեցի սբ՝ զթողութիւն մեղաց, հաղորդութիւն սրբոց: Հաւատամք զմին յերից անձանց զԲանն Ած՝ ծնեալ ՚ի Հօրէ նախքան զյաւիտեանս. ՚ի ժամանակի իջեալ յԱծածին կոյսն Մարիամ. առեալ յարենէ նր՝ միաւորեաց ընդ իւրում Ածուեն. իննամսեայ ժուժկալեալ յարգանդի անարատ կուսին. և եղև Ածն կատարեալ՝ մարդ կատարեալ հոգւով և մտօք և մարմնով. մի անձն, մի դէմ, և միաւորեալ մի բնութիւն: Ածն մարդացեալ առանց փոփոխման, առանց այլայլութե. անսերմն յղութիւն, և անապական ծնունդ. ոպ ոչ է սկզբն Ածուե նր և ոչ վախճան մարդկութե նր: Զի Յս Քս երէկ և այսօր՝ նոյն և յաւիտեան: Հաւատամք զՏրն մեր Յս Քս՝ շրջեալ ՚ի վերայ երկրի: Յետ երեսուն ամաց եկեալ ՚ի մկրտութի. Հայր ՚ի վերուստ

վկայեալ՝ դա է Որդի իմ սիրելի. և Հոգին որպէս աղաւնակերպ իջեալ ՚ի վերայ: փորձեալ ՚ի սատանայէ, և յաղթեալ նմա: Քարոզեաց մարդկան զփրկութիւն: Աշխատեալ մարմնով, վաստակեալ՝ քաղցեալ և ծարաւեալ: Յետոյ եկեալ կամաւ ՚ի չարչարանս, խաչեալ՝ մեռեալ մարմնով. և կենդանի աստուածութեամբ: Մարմինն եդեալ ՚ի գերեզմանի՝ միաւորեալ աստուածութեամբն, և Հոգւովն իջեալ ՚ի դժոխս՝ անբաժանելի աստուածութեամբ: Քարոզեաց հոգւոյն՝ աւերեաց զդժոխս. և ազատեաց զհոգիսն: Յետ երից աւուրց յարուցեալ ՚ի մեռելոց, և երևեալ աշակերտացն Հաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս՝ նովին մարմնովն համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր: Այլ և գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս: Որ և յարութիւն ամ մարդկան: Հաւատամք և զհատուցումն գործոց՝ արդարոց կեանք յաւիտենականն և մեղաւորաց տանջանք յաւիտենականս:

## Զղջումն:

Մեղայ ամենասբ. Երրորդութեանն՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ. մեղուցեալ եմ Այ: Խոստովանիմ առաջի այ՝ և սրբուհւոյ Ածածնին, և առաջի քո հայր սբ. զամ մեղս՝ զոր ես գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով բանիւ և գործով, կամայ և ակամայ: գիտութ̅ և անգիտութ̅ մեղայ այ: Մեղայ հոգւով՝ և զօրութ̅ նր̅, մտօքս և շարժմամբ նր̅, մարմնով՝ և զգայութ̅ նր̅. մեղայ զօրութ̅ հոգւոյս՝ խորամանկութ̅, անզգամութ̅, յանդգնութ̅ և երկչոտութ̅, շռայլութ̅ և ժլատութ̅, զեղխութ̅, անիրաւութ̅, չարահաւանութ̅, յուսահատութ̅ և թերամտութ̅ մեղայ այ:

Մեղայ չար խորհրդով մտացս՝ նենգութ̅, ատելութ̅, խեթիւ, մախանօք, յաչաղանօք թշուառութ̅ պոռնկական խորհրդով՝ արուական, իգական, անասնական, դիւանական, գաղտնական. 'ի գիշերի և 'ի

տունջեան. երազական գիճուբ՟, և անըր-
ջական գարշաղտեղուբ՟ մեղայ ք՟յ:

Մեղայ ցանկուբ՟ մարմնոյս՝ հեշտութբ՟
պղերգուբ՟ յօրանջմամբ քնոյ, շարժուբ՟
մարմնոյս, և զազրագործութբ՟ 'ի պէս
պէս ախտս. հեշտալրուբ՟ լսելեացս, ա-
րատուբ՟ աչացս, ցանկուբ՟ սրտիս, խղուբ՟
ունգացս, պագշոտուբ՟ բերանոյս, անժուժ-
կալուբ՟, շուայտութբ՟ և արբեցութբ՟ մե-
ղայ ք՟յ:

Մեղայ չարաբանութբ՟ լեզւիս՝ ստա-
խօսուբ՟, սուտ երդմամբ, երդմնազան-
ցուբ՟, հակառակուբ՟, վիճաբանուբ՟, բաս-
նարկուբ՟, շոգմոգուբ՟, քսու, դատարկա-
բանուբ՟ և ծաղու, զրախօսուբ՟, հերձա-
խօսուբ՟ և անիծաբանուբ՟, տրտնջելով,
դժգոհելով, բամբասելով և հայհոյե-
լով մեղայ աստուծոյ:

Մեղայ գողուբ՟ ձեռացս՝ ագահելով,
զրկելով, հարկանելով, սպանանելով
և ընդ գարշս ածելով մեղայ ք՟յ:

Մեղայ ամենայն յօդուածովք շինուա-
ծոյս, եւ ամենայն անդամօք մարմնոյս,
եօթնեակ զգայարանօքս, եւ ՚ի վեցեկի շարժ-
մամբս, վերամբարձ ոտնահարութ՟, եւ
վայրաքարշ մեղկութեամբ, յաջ եւ
յահեակ խոտորելով՝ առաջնոյն մեղան-
չելով եւ վերջնոյն չարնշանակ գոլով
մեղայ աստուծոյ:

Նաեւ մեղայ եօթնիցս յանցանօք մա-
հացու մեղօք. հպարտութեամբ եւ մա-
սամբք նորին. նախանձու՝ եւ մասամբք
նորին. բարկութ՟՝ եւ մասամբք նորին
նորին. ծուլութեամբ՝ եւ մասամբք
նորին. ագահութեամբ՝ եւ մասամբք
որկրամոլութ՟ եւ մասամբք նորին բոզ-
ջախոհութ՟ եւ մասամբք նորին. մեղայ այ՟

Նաեւ մեղայ ըստ պատուիրանացն այ՟
յանձնառնելեացն եւ հրաժարելեացն. զի
ոչ զյանձնառականն կատարեցի, եւ ոչ
՚ի հրաժարելեացն հեռացայ: Զօրէնս
առի, եւ յօրինացն հեղգացայ. ՚ի կարգս

քրիստոնէութեան հրաւիրեցայ, և գործովս անարժան գտայ. զլանելով զչարն՝ կամաւ կորացայ, և ՚ի բարեաց գործոց իմնէն հեռացայ, վայ ինձ. վայ ինձ. վայ ինձ: Զո՞րն ասեմ՝ կամ զո՞րն խոստովանիմ. զի անթիւ են յանցանք իմ. անասելի՛ են անօրէնութիւնք իմ, աներելի են ցաւք իմ. և անբժշկելի՛ են վէրք իմ մեղայ աստուծոյ:

Հայր սուրբ՝ զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան, և բարեխօս առ միածին որդին աստուծոյ. զի իշխանութիւդ՝ որ տուեալ է քեզ՝ արձակեսցես զիս ՚ի կապից մեղաց իմոց. աղաչեմ զքեզ:

## ԱՐՁԱԿՈՒՄՆ

Ողորմեսցի քեզ մարդասէրն աստուած, և թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, խոստովանեցելոցն և մոռացելոցն: Եւ ես կարգաւս քահանայական իշխանութեան,

և հրամանաւն ա՟ծային՝ Թէ զոր ար-
ձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յեր-
կինս: Նովին բանիւն արձակեմ զքեզ
յա՟մ մասնակցութ՟է մեղաց քոց, 'ի խոր-
հրդոյ՝ 'ի բանից՝ և 'ի գործոց, յանուն
Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ:

Եւ դարձեալ՝ տամ զքեզ 'ի խոր-
հուրդս սուրբ եկեղեցւոյ. զի զոր ինչ
գործիցես բարիս, եղիցի քեզ 'ի բարե-
գործութ՟ի և 'ի փառս հանդերձեալ կե-
նացն, ամէն:

Օրհնեալ տէր մեր Յ՟ս Ք՟ս ամէն:
Հայր մեր՝ որ յերկինս ես. ս՟բ եղիցի
անուն քո. եկեսցէ արքայութ՟ի քո. եղիցին
կամք քո որպէս յերկինս և յերկրի:
Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այ-
սօր. և թող մեզ զպարտիս մեր. որ՟պ և
մեք թողումք մերոց պարտապանաց. և
մի՛ տանիր զմեզ 'ի փորձութ՟ի այլ փրկեա՛
զմեզ 'ի չարէ: Զի քո է արքայութ՟ի և
զօրութ՟ի, և փառք յաւիտեանս ամէն:

# ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ։ Որ կատարի ՚ի մէջ գիշերի ՚ի դէմս Հօր աստուծոյ։

Էր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւն քո։ Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւն քո։ Օրհնեալ համագոյ, և միանական անբաժանելի սուրբ երրորդութիւն՝ հայր և որդի և հոգի սուրբ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

ՇԳ
Տէր զի՛ բազում եղեն նեղիչք իմ, և
բազումք յարեան ՚ի վերայ իմ։
Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ
չի՛ք փրկութիւն սորա առ աստուած իւր։
Այլ դու տէր օգնական իմ ես, փառք
իմ, և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։
Ձայնիւ իմով ես առ տէր կարդացի. և
լուաւ ինձ ՚ի լեռնէ սրբոյ իւրմէ։
Ես ննջեցի և ՚ի քուն եղէ. զարթեայ
և տէր ընդունօղ իմ է։
Ո՛չ երկեայց ես ՚ի բիւրաւոր զօրաց նոցա
ոյք շուրջանակի պատեալ պաշարեալ
պահէին զիս։
Արի՛ տէր և փրկեա՛ զիս աստուած իմ. զի դու
հարեր զամենեսեան՝ ոյք էին ընդ իս թշնամութեամբ
՚ի տարապարտուց. և զատամունս մե-
ղաւորաց փշրեցեր։
Տեառն է փրկութիւն ՚ի վերայ ժողովր-
դեան քո օրհնութիւն քո։
Տէր աստուած փրկութեան իմոյ, ՚ի տուէ կար-
դայի և ՚ի գիշերի առաջի քո։

Մտցեն աղօթք իմ առաջի քո Տր. խո-
նարհեսցի ունկն քո ՚ի խնդրուածս իմ:
Զի լցաւ չարչարանօք անձն իմ. և
կեանք իմ ՚ի դժոխս մերձեցան, և հա-
մարեցայ ես ը̅ այնոսիկ՝ որք իջանեն ՚ի գուբ
Եղէ ես որպէս մարդ առանց օգնակա-
նի. և ՚ի մեռեալս ազատ:
Ոպ̃ վիրաւորս որք ննջեն ՚ի գերեզմանի:
Զորս դու յիշեցեր. նոքա ՚ի ձեռանէ
քումմէ մերժեցան:
Եդին զիս ՚ի գբի ներքնումն ՚ի խաւա-
րի, և ՚ի ստուերս մահու:
Յիս հաստատեցաւ սրտմտութի քո. զամ̃
զբօսանս քո ածեր ՚ի վերայ իմ:
Հեռի արարեր յինէն զծանօթս իմ. և
եդին զիս նշաւակ իւրեանց:
Մատնեցայ և ո՛չ ելանէի. աչք՛ իմ տկա-
րացան յաղքատութենէ:
Աղաղակեցի առ Տր զօրհանապազ, և
համբարձի առ քեզ զձեռս իմ:
Մի՛ թէ մեռելոց առնիցես զսքանչելիս

քո, կ՟մ բժիշկք յարուցեալ խոստովան
առնիցին առ քեզ:
Մի՛ թէ պատմիցէ ոք երբէք 'ի գե-
րեզմանի զողորմութ՟ն քո. կ՟մ զճշ-
մարտութ՟ն քո 'ի կորստեան:
Մի՛ թէ ճանաչիցին 'ի խաւարի սքան-
չելիք քո. կամ արդարութ՟ն քո յերկիր
մոռացեալ:
Ես առ քեզ տ՟ր աղաղակեցի. առաւօտու
աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ:
Ընդէ՞ր տէր մերժես զանձն իմ. կամ
դարձուցանես զերեսս քո յինէն:
Տնանկ և վաստակաւոր եմ ես 'ի մանկու՟է
իմմէ. 'ի բարձրու՟է խ՟նրհեցայ և ապշեցայ:
Յիս հաստատեցաւ բարկութ՟ն քո. արհա-
ւիրք քո խռովեցուցին զիս,
Շրջեցան զինեւ որպէս ջուր. զօր ամ՟
պաշարեցին զիս 'ի միասին:
Հեռի արարեր յինէն զբարեկամս իմ,
և զծանօթս իմ վ՟ն թշուառութ՟ե իմոյ:
Օրհնեա՛ անձն իմ զտէր. և ամ՟ ոսկերք

իմ զանուն սուրբ նորա:

Օրհնեա անձն իմ զՏէր. և մի՛ մոռանար զամենայն տուրս նորա:

Ո՛ քաւէ զմեղս քո. բժշկէ զամենայն հիւանդութիւնս քո:

Ո՛ փրկէ յապականութենէ զկեանս քո. պսակէ զքեզ ողորմութեամբ և գթութեամբ:

Ո՛ լնու ՚ի բարութենէ զցանկութիւն քո. նորոգեսցի որպէս արծուոյ մանկութիւն քո:

Առնէ ողորմութիւնս Տէր. և իրաւունս ամ զրկելոց:

Ցոյց Տէր զճանապարհս իւր Մովսէսի. և որդւոյն Իսրայէլի զկամս իւր:

Գթած ողորմած է Տէր. երկայնամիտ և բազումողորմ:

Ո՛չ իսպառ բարկանայ մեզ Տէր. և ո՛չ յաւիտեան պահէ ոխս:

Ո՛չ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր և ո՛չ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ:

Ըստ ո՟պ բարձր են երկինք յերկրէ՝ այն՟պ զօրացոյց Տ՟ր զողորմու՟ի իւր ՚ի վ՟ր երկիւղածաց իւրոց:

Որչափ հեռի են արեւելք յարեւմտից. այնչափ հեռի արար ՚ի մէնջ զանօրէնութիւն մեր

Ո՟պ գթայ հայր ՚ի վ՟ր որդւոց իւրոց. այնպէս գթասցի Տ՟ր յերկիւղածս իւր:

Զի նա գիտաց զստեղծուածս մեր, եւ յիշեաց թէ հող եմք:

Մարդոյ ո՟պ խոտոյ են աւուրք իւր, ո՟պ ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկի:

Շնչէ ՚ի նմա հողմ, եւ ո՛չ է, եւ ո՛չ եւս երեւի տեղի նորա:

Բայց ողորմու՟ի Տ՟ն յաւիտեանս յաւիտենից ՚ի վ՟ր երկիւղածաց իւրոց, եւ արդարու՟ի նր՟ յորդւոց մինչեւ յորդիս:

Որք պահեն զուխտս նր՟. յիշեն զպատուիրանս նորա եւ առնեն զնա:

Տէր յերկինս պատրաստեաց զաթոռ իւր. արքայու՟ի նր՟ ամենեցուն տիրէ:

Օրհնեցէք զՏ՟ր ամ՟ հրեշտակք նորա.

հզօրք զօրութ՟, որք առնէք զբան նր՟
՚ի լսել ձայնի պատգամաց նորա։
Օրհնեցէ՛ք զՏ՟ր ամ՟ զօրու՟նք նր՟. պաշ-
տօնեայք և արարօղք կամաց նորա:
Օրհնեցէ՛ք զՏ՟ր ամ՟ գործք նր՟. ի՟ ամ՟
տեղիս տէրութե՟ նր՟ օրհնեա՛ անձն իմ զՏ՟ր։
Տ՟ր լո՛ւր աղօթից իմոց. ունկն դիր խընդ-
րուածոյ իմոյ ճշմարտութ՟ քով,
Լո՛ւր ինձ արդարութ՟ քով. և մի՛ մտա-
ներ ՚ի դատաստան ը՟ ծառայի քում. զի
ո՛չ արդարանայ առաջի քո ամ՟ կենդանի։
Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ
արար յերկիր զկեանս իմ, և նստոյց զիս
՚ի խաւարի որպ՟ մեռեալ յաւիտենից։
Ձանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ,
խռովեցաւ յիս։
Յիշեցի զաւուրսն զառաջինս. խոնարհե-
ցայ յամ՟ գործս քո. յարարածս ձեռաց
քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ
զձեռս իմ։

Անձն իմ որպէս երկիր՝ ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լո՛ւր ինձ Տէր. զի նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. նմանիցիմ այնոցիկ՝ ոյք իջանեն 'ի գուբ։

Լսելի արա՛ ինձ առաւօտու զողորմութիւն քո. զի ես 'ի քեզ Տէր յուսացայ։

Ցո՛յց ինձ Ճանապարհ՝ յոր և գնացից. զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս 'ի Թշնամեաց իմոց Տէր. զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո. զի դու ես Աստուած իմ։ Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ։

Վասն անուան քո Տէր կեցուսցես զիս. արդարութեամբ քով հանցես 'ի նեղութենէ զանձն իմ։ Ողորմութեամբ քով սատակեա զԹշնամիս իմ. և կորո՛յս զամենայն նեղիչս անձին իմոյ. զի ես ծառայ քո եմ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

Նուագ առաջին Ներսէսի հայոց հայրապետին:

Յիշեսցուք ՚ի գիշերի զանուն քո Տէր:

Բղխեսցեն սիրտք մեր զբան բարի. և լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր Թագաւորիդ:

՚Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք քեզ Տէր:

Զաղօթս մեր տայցուք քեզ Տէր. ՚ի գաւիթս քո ՚ի մէջ նոր երուսաղէմի:

՚Ի գիշերի համբարձուք զձեռս մեր սրբութեամբ առ քեզ Տէր:

՚Ի ձայն գոչման իմ՝ Հոգիք օրհնեցէք զՏէր:

Զարթի՛ք փառք իմ, զարթի՛ք. և ես զարթեայց առաւօտուց ալէլուիա:

Զարթի՛ք ընդ զուարթունս, մանկունք վերինն Սիօնի. ալէլուիա:

Զարթի՛ք որդիք լուսոյ՝ ՚ի յօրհնութիւն հօրն լուսոյ. ալէլուիա:

Զարթի՛ք փրկեալք արեամբ. և տուք զփառս փրկողին. ալէլուիա:

Զարթի՛ք նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգողին. ալէլուիա:

Զարթի՛ք հարսունք հոգւով սպասեալք գալոյ որ փեսային ալէլուիա:

Զարթի՛ք վառեալք լուսով ըստ իմաստուն որ կուսանայն ալէլուիա:

Զարթի՛ք պատրաստեցէ՛ք իւղ լապտերաց զջերմ արտասուս ալէլուիա:

Զարթի՛ք և մի՛ ննջէ՛ք, նման յիմար կուսից նիրհէ՛ք. ալէլուիա:

Զարթի՛ք երկիրպագցուք. և արտասուօք զայս ասասցուք. ալէլուիա:

Զարթի՛ր ընդէ՛ր ննջես. տէր մի՛ մերժեր զմեզ իսպառ:

Արի՛ տէր օգնեա՛ մեզ. տացո՛ւք անուանդ քում զփառս:

Այժմ և յաւէտ. հօր և որդւոյ և սուրբ հոգւոյն. ամէն:

Զարթուցեալքս 'ի զբաղմանէ գիշերային հանգստենէ:

Շնորհեսցէ մեզ մարդասէր տէր մխիթա-

բութիւն և 'ի փափանս եկեղեցւոյ։
Ահիւ ե դողութ՟ կայցուք 'ի յաղօթս։
Ընկեալ խոստովանեսցուք զյանցանս։
Եւ գտցուք 'ի քէն զքաւութի՟ և զմեծ
ողորմութիւն։
Ամէն. ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։
Ամէն. ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա։

## Քարոզ։

Զարթուցեալքս ամ՟քն 'ի հանգստենէ քնոյ, որ շնորհեաց մեզ մարդասէրն ա՟ծ 'ի մխիթարութի՟ և 'ի սփոփանս տկարու՟թե մերում. և եկեալքս միաբան հոգևոր երգով 'ի փառաբանութի՟ և 'ի պատիւ ամենաս՟բ անուան ա՟ծն մերոյ և փրկչին յի՟ ք՟ի։ Ահիւ և դողութ՟ կացցուք յաղօթս առաջի նորա։ և գոհացարուք զնմանէ 'ի գիշերային ժամուս յայսմիկ, վ՟ն երախանց և արդարութե՟ն նր՟։ Որ ընտրեաց

զմեզ ողորմութ՟ն իւրով. և շնորհե՟ց մեզ բերել զնմանութի՟ երկնային հրեշտակայն փառաբանիչս տ՟ն տ՟յ ամենեցուն և մեզ լինել։ Եւ մեք այսուհետև սրբելով զանձինս մեր ՚ի խղճէ և ՚ի չար գործոց։ Համբարձցուք զձեռս մեր ՚ի սրբութի՟ առանց բարկութե՟ և երկմտութե՟։ Հաւատով խնդրեսցուք ՚ի նմանէ զքաւութի՟ և զթողութի՟ յանցանաց մերոց, խոստովան լինելով զգաղտնիս սրտից մերոց ծածկագիտին տ՟յ։ Որ զի ընդունելով զպատուիրանս աղօթիւք և բարեխօսութ՟ ամ՟ սբց։ Շնորհեսցէ մեզ մարդասէրն ա՟ծ կեալ առաքինութ՟բ, և անարատ վարուք ը՟ կամաց նր՟ յայսմ աշխարհիս։ Եւ արժանաւոր լինելով յաւիտենական և երկնային խորանաց։ Զոր խոստացաւ սիրելեաց իւրոց Ճշմարիտն ա՟ծ՝ յ՟ս ք՟ս. տ՟ր մեր կեցո՛ և ողորմեա՛։ Կեցո՛ տէր։

Զմնացուած գիշերիս խաղաղութ՟ անցնել յաւ՟տ ՚ի տ՟նէ խնդրեսցուք։ Շնորհեա՛ տ՟ր։

Զհրեշտակ խաղաղութեան՝ պահապան անձանց մերոց. ՚ի Տեառնէ խնդրեսցուք։

Զքաւութիւն և զթողութիւն յանցանաց մերոց. ՚ի Տեառնէ խնդրեսցուք։

Զսրբոյ խաչին մեծ և կարող զօրութեամբ՝ յօգնութիւն անձանց մերոց. ՚ի Տեառնէ խնդրեսցուք։

Եւ ևս միաբանութիւն ճշմարիտ և սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք։

Տէր ողորմեա։

Զանձինս մեր և զմիմեանս՝ Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։

Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։

Ողորմեայ մեզ Տէր Աստուած մեր՝ ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա

Նորին ասացեալ Ներսիսի Հայոց հայրապետին ողբերգութիւն անձին ողորմելոյ, և բողոք ապաշխարութեան դէմ խոստովանութեանն:

ՏԷՐ շխարհ ամ. առ իս նայեցեալ. ախտակից լերուք: Բանամ զշրթունս բարբառիմ լեզուաւս. բողոքեմ զանձնէս. տէր ողորմեա. տէր ողորմեա. տէր ողորմեա:

Գող եղէ մեղաց. գտօղ կորստեան. գուբ ինձ փորեցի: Գաւեցի զանձն իմ. զաւաճանեցի. զարան գործեցի. տէր ողորմեա:

Նորբեմն էի լոյս. և այժմ եմ խաւար. և ստուերմահու: Զիարդ պատմեցից զթիւ մեղաց իմոց. զի բազում են յոյժ: տէր ող:

Երկինք և երկիր. եկայք ողբացէք. եղկելի զանձն իմ: Ընտրեցի զչարն. ընկալաւ կամաւ. զհոյլս մեղաց. տէր ող:

Թաւթաւիմ տղմով. թաւալիմ 'ի մեղս. թօթափել չկարեմ: Քանո ախտիւ լցեալ ժահահոտ եղէ ժանկս բազմաց. տէր ող:

Ի բաց մեկնեցայ. ՚ի ս̄բ խորհրդոյ. ՚ի բարեաց գործոց: Լաւ վարկաւ անձն իմ. լուսոյն հեռանալ. լինել ընդ խաւար: Տէր ողորմեա:

Խորհուրդք չարին. խաբեն զհոգիս. խռբատոյզ առնեն: Ծածկեն անդնդօք. ծիծաղին գլորմամբս. ծանակ զիս առնեն. Տէր ողորմեա:

Կամաւ կորացայ. ակրկամեալ ս անձամբս. կանգնիլ ոչ կարեմ: Հուր մեղաց կիզօղ. հրդեհեաց որ յիս. հոգեւոր բարիս. Տէր ող:

Զաղկեցայ մեղօք. ձաղեցին տեսօղք. ձանձրացաւ հոգիս: Գեղի զառնուն. զօզեալ ՚ի սիրտս. զամբար իմ շիջաւ. Տէրդ Դաշակմամբ մեղաց. Հաշեցի զմնահ. Հոլաս աղքատացայ: Մեռեալ եմ հոգւովս. մոլորեալ մտօքս. միայն կամ մարմնովս. Տէր:

Յորդայնե ժահու. յորսոդ են տնկայ. յաղթեցայ յախտից. Նետից թշնամւոյն նշանակ եղէ. նոր միշտ խոցոտիմ. Տէր ող:

Շուրջ պատեալ զինև. շունք բազում եղեն. շաղախմն արեամբ քս։ Որս եղէ չարին. ուռկանաւ մեղաց. որսացաւ զանձն իմ։ տէր ողորմեա։

Զարաչար վշտօք. չարչարեն անձն իմ. չունիմ դադարումն։ Պարտապան գտայ. պարտուց յանցանաց. պարտեալս՝ի մեղաց. տէր ողորմեա։

Գանամ զղջանալ. ջեռանիմ դարձեալ. ջեռնուլ հրով մեղաց։ Ռաբբի կոչեցայ. ռակայ անուանիմ. ռամկական վարուքս. տէր ողորմեա։

Սիրով ցանկումն. սաստիկ բարկումն. սիրտ իմ խոցեալ է։ Վիրօք յանցանաց. վշտանաց հոգւս. վարանեալ շրջիմ. տէր ող։

Տիրեցին ինձ չարք. տարագիր հանին. տիրական գրկացն։ Րաբունւոյն բարւոյ. րախ Ճակատն ձայնին. րոտինս ոչ լուայ տէր ող։

Ցանկումն չարեաց. ցանկալ ի դիմ օք. ցաւեցոյց զաչս իմ։ Իւրաքանչիւրոց. ււս-մամբ խուռն ախտից. ունձնել է հոգւս. տր։

Փութացի՛ր անձն իմ. փախչիլ ՚ի չարեաց. փափագել բարեաց։ Քեզ միշտ մերձ ծանի՛ր. քուն մահու եկեալ. քննօղ դատաւոր. Տէր ողորմեա՛։

Ընծանին բարեխօսութեամբ. Յիսուս տէր և ողորմեա՛։

Նորին տեառն Ներսէսի հայոց հայրապետին երգ աղօթական ՚ի վերայ այբուբենից, որ և երաժշտական երգոյ դէմ այբուբենիցն առանձնապէս։

Առաւօտ լուսոյ. արեգակն արդար. առ իս լոյս ծագեա՛։ Բղխումն ՚ի Հօրէ. բղխեա՛ ՚ի հոգւոյս. բան քեզ ՚ի հաճոյս։

Գանձդ ողորմութե՛ան. գանձիդ ծածկելոյ. գտօղ զիս արա՛։ Դրունն ողորմութեան. դաւանողիս բաց. դասեալ վերնոցն։

Երրեակ միութի՛ւն. եղելոց խնամօղ. և ինձ

ողորմեա՛։ Զարթի՛ր որ յօգնել. զար-
թո՛ զթմրեալս. զուարթնոց նմանիլ։
Ի՛ղ հայր անսկիզբն. էակից որդի. և
միշտ սուրբ հոգի։ Ընկալ զիս գթած.
ընկա՛լ ողորմած. ընկա՛լ մարդասէր։
Թագաւոր փառաց. թողութեանց տուող.
թո՛ղ ինձ զյանցանս։ Քողուլօղ բարեաց.
ժողովեա՛ և զիս. ժողովս անդրանկաց։
՚Ի քէն տէր հայցեմ. ՚ի մարդասիրէդ.
ինձ բժշկութի՛։ Որ կեանք մեռելոյս.
լոյս խաւարելոյս. լուծանող ցաւոյս։
Խորհրդոց գիտող խաւարի շնորհեա՛ խոր-
հուրդ լուսաւոր։ Ծնունդ հօր ծոցոյ.
ծածկելոյս ստուերաւ. ծածկեա՛ լոյս
փառաց։
Ամենարար փրկիչ. կեցո՛ զմեռեալս. կանգ-
նեա՛ զգլորեալս։ Հաստեա՛ հաւատով.
հաստատեա՛ յուսով. հիմնեա՛ սիրով։
Զայնիւս աղաչեմ. ձեռօքս պաղատիմ.
ձիր բարեաց շնորհեա՛ Գ՝ամ բարամբ լու-
սոյ. զնկաւար ճարտար զօղնլս ամինայ

Ճառագայթ փառաց. ճանապարհ ինձ ցոյց. ճեպել՚ի յերկինս։ Մածինդ հօր. մոյծ զիս յաստուածդ. մաքուր հրամանիդ

Յորժամ գաս փառօք. յահագին աւուրն. յիշեա՛ զիս ք՟ս։ Նորոգող նուե՟ց. նորոգեա՛ և զիս. նորոգ զարդարեա։

Շնորհատու բարեաց. շնորհեա՛ զքաւութի՟. շնորհեա՛ զթողութի՟։ Ուրախացո՛ տ՟ր ոգ-ւոյս փրկութե՟. որ. վ՟ս եմ՚ի սուգ։

Չար մշակողին. չար սերմանց նորին. չորայ՛ զպտուղն։ Պարգեւիչ բարեաց. պարգեւեա՛ իմ՟ց. պարտեացս թողութի՟։

Ջուր շնորհեա՛ աչացս. ջերմ հեղուլ զարտօսր. ջնջել զյանցանս։ Ռետինդ քաղցու. ռամ հոգւոյս արբօ. ռահ ցո՛յց ինձ լուսոյ։

Սէր անուն յ՟ս. սիրով քո ձմլեա՛. սիրտ իմ քարեղէն։ Վասն գթութե՟. վ՟ս ողորմութե՟ վերստին կեցո՛։

Տենչալով տեսլեամբ. տո՛ւր ինձ յագենալ. տէր յ՟ս ք՟ս։ Րաբունդ երկնաւոր.

լուեալ զաշակերտս. լամից երկնայնոց
Ցօղ արեան քո տէր. յօղեա՛ 'ի հոգիս.
ցնծասցէ անձն իմ։ Խիւծեալս մեղօք.
ւիւծեալ աղաչեմ. ւիւանլ ինձ բարիս։
Փրկիչ բոլորից. փութեա՛ զիս փրկել։
փորձութեց մեղաց։ Քաւիչ յանցանաց քա-
ւեա՛ զօրհնաբանս. քեզ երգել զփառս։
Աստուածածնին բարեխօսութեամբ քն՝
յիշեա՛ տէր և ողորմեա՛։

Զկնի ասէ աղօթս։

Զքէն գոհանամք տէր տէր մեր, որ շնոր-
հեցեր մեզ հանգիստ քնոյ խաղաղութե̄ն։
Եւ զարթուցեալ ժամանեցուցեր զմեզ
կանխել յերկրպագութի̄ն ահաւոր և փառա-
ւորեալ անուանդ քում սրբոյ։ Տո՛ւր մեզ
տէր աղաչեմք զքեզ՝ զմնացուած գի-
շերիս խաղաղութե̄ անցուցանել. և զամ
ժամանակս կենաց պանդխտութե̄ մերոյ,
երկիւղիւդ քո ամրացո՛ և պահեա՛։ Ող
ջիւ զգուշութե̄՝ և անարատ վարուք կե-

նաւորեալք յայսմ՝ աշխարհիս՝ ժամանեսցուք յանքոյթ և խաղաղ նաւահանգիստ յաւիտենական 'ի կեանսդ։ Շնորհօք և մարդասիրութբ տն մերոյ՝ և փրկչին յի քի։ Ընդ որում քեզ հօր և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք՝ իշխանութի և պատիւ այժմ և միշտ, և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Խաղաղութի ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Նայեաց տէր բարերար ողորմութբ քով յերկրպագուս և 'ի փառաբանիչս անըւանդ քում սրբոյ. տր զօրութեց՝ խաղաղացո՛ զանձինս մեր յամ սատանայական խռովութեց. և յաշխարհական զբօսանաց։ Զհրեշտակ խաղաղութեն քոյ առաքեա՛ առ մեզ. անխռովս 'ի տուէ և 'ի գիշերի՝ յարթնութե և 'ի հանգստեան մերում։ Որպէս զի բարեպաշտութբ՝ և արժանապէս քեզ տն ծառայելով 'ի կեանս յայսմիկ, ժամանեսցուք յաւի-

տենական երկնից արքայութե̃ քոյ. զոր պատրաստեցեր 'ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց: Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

Օրհնեալ տէր մեր Յ̃ս Ք̃ս. ամէն:

## Մաղթանք պահոց:

Քրիստոս է իմ ա̃ծ, և փառաւոր առնեմ զնա. ա̃ծ հօր իմոյ. և բարձր արարից զնա: Մարդասէր տէր:

Տուք փառս ա̃յ. տուք օրհնութի̃ մարդասիրին՝ Թագաւորին յաւիտենից. որ փրկէ զծառայս իւր, և կեցուցանէ:

Մարդասէր:

Դու ես ա̃ր մեր. դու ես ք̃ս փրկիչ մեր. զքեզ օրհնեն անձինք մեր: Մարդասէր: Բարձրացաւ եղջիւր իմ յա̃ծ փրկիչ իմ.

Հաստատեցաւ սիրտ իմ ՚ի տէր. փրկաւ է և հաւատամ: Մարդասէր:

Խաղաղութեան տուող քո, զխաղաղութիւն և զողորմութիւն քո պարգևեա մեզ: Մար.

Յոյս կենդանութեան՝ յոյս և ապաւէն փըրկութեան տէր ես, փրկեա և փարատեա զցաւս անձին իմոյ: Մարդասէր:

Ընկալցին աղօթք մեր ՚ի տաճար սուրբ քո խոնարհեսցի ունկն քո ՚ի խնդրուածս մեր: Մարդասէր:

Լուր մեզ տէր՝ լուր մեզ տնայնս ողորմութեամբ, և գթութեամբ քով լինայեա յաղաչանս քո: Մարդասէր:

Սուրբ աղօթքն Ներսեսի հայոց կաթողիկոսի տասացեալ յաղագս մեծի Ուրբաթու Գիշերին
Աւետարանացն

Իշխանք ժողովեցան ՚ի միասին. վասն տեառն և վասն օծելոյ նորա:

Այսօր անճառ լուսոյն ծագումն 'ի փրկութեան մեր կատարումն. խոնարհի 'ի վերնատունն 'ի ստուերական տանից ըն-թրումն. Նախքան զընթրիսն խորհրդոյ սփածաւ զենջակ արկօղն լուսոյ. և ջուր առեալ ծառայաբար զոտս լուանայր աշակերտացն:

Բանին հօր փառաց լուսոյ պետրոս մեր-ժիլ յոտս ոչ ներէր. այնմ ձեռաց որոց են գործք երկնից երկինք և երկրաւորք. որով կուրաց աչըք բացան խուլք և համերք արձակեցան. որ վերածեաց զխն-քըն 'ի ծովլն սաստեաց ալեացն և լը-ռեցին:

Գլխոյն ընտրեալ հօտին փոքու սաստէր զխորհուրդն ոչ գիտելոյ. որով դառնայր և հնազանդէր զոտս և զգլուխս մաք-րէր մաղթէր. գըլխոյս ասէ՞ չէ ինչ պիտոյ լուացումն ջրոյ զի լուացեալ է. ոտիցդ պէտք են մաքրութեան յօդնել'ի գլուխըս սրբութեամբ:

Դասուց իւրոց աշակերտաց զոր նախ քա-նիւ վարդապետեաց. այսօր գործով ըզ-ծայրագոյն եցոյց յինքեան զխոնարհութ. սպասաւորեա՛լ հողեղինաց այն որ անտեսան է հրեղինաց. տարեալ պաշտօն իւր ծա-ռայիցն այն որ պաշտի 'ի սրբէից։

Եթէ տէրս ամէ էից և վարդապետը բոլորից. զաշակերտացդ և զծառայից զոտս լուայի 'ի հնոյ աղտից. միմեանց և դուք համբերութե՛ ցուցէք զնոյն խո-նարհութի. բարձրացելոյն 'ի կործանումն և անկելոց բնութենդ կանգնումն։

Զոր մնաքրեցեր յաւազանին մաքուր ձեռօք զոտս նոցին. և ուսուցեր խոնար-հութե՝ յաղթօղ լինել չար հպարտին.՛ և զիմ լուա զոտից մեղաց աղաչանօք սրբոյ գնտին. և զգնայս ուղղեա՛ զոտին խոնարհութե ելեւք յերկինս։

Օրհն։ Աւետարան յօհ։ Ճճր։ Ժգ. 16։

Ամէն ամէն։ ՀէրՁ. և աշակերտքն իւր։

Երկրորդ սաղմոս՝ 40: Երանի որ խորհի:

Որպէս փափագէ: Դատ ալ:

Բան անօրէնութեան եդին ՚ի վերայ իմ. որ

տէր մի՛ թողուր զիս:

Լուից զօրէնսն մովսիսի՝ զոր խօսեցաւ ՚ի սինայի. եկեր զզատն օրինակին և ըզբաղարջն ընդ եղեգին. զհացն ՚ի Նորս փոխելով զատուէն ՚ի լոյս ճշմարտելով. փոխան զառինն ինքն զոլով զառն ոյ նուիրելով:

Ընդ բաղարջին հաց անխմոր ետ զմարմինն իւր զերկնաւոր. զկուսածինն անսերմնաւոր զանապականն և զհոգևոր. ընդ ոչխարին արեանն ուխտին ետ մեզ զարիւն իւր ուխտ կրկին. և եղ ական զբանագունին փոխան զվարս ածային:

Թագաւորն աշխարհածոյ զհացն կենաց ետ քաղցելոց. և զբաժակն ուրախարար որք յագեցման տրտմելոց. այս նոր ուխտէ իմոյ արեան փոխան հնոյ ուխտին արենոյ. զոր յիշատակ իմ առնիցէք մինչև եկից

Եւ միասանգամ:

Ժողովեալքս 'ի քէն հայցեմք Տր. ժողովեալ մտասանին. որ կենարարդ քո մարմին բաշխեալ եղեւ Տր. բաժակին. շնորհեա և մեզ տր Տր. նորին հաղորդ լինել քում սեղանին. կենաց հացիդ յոր փափագեմք և ըմպելւոյդ ում ծարաւեմք:

'Ի յընտրելոց աշակերտացն յուղաւ մեկնեալ 'ի մջ դառանոյն. զ Բարձող մեղաց զ գառն այ՝ մատնէր 'ի մահ Տր. արծաթոյ 'ի յընթրիսն Տր. հոգևոր մերձ 'ի ժողովրդն և նենգաւորն. ուտելով Տր. վարդապետին յանձնէ զ խաբէութիւն:

Այսօրն խօսէր աղերսալի խաւարելոյն վասն դարձի. մի ոմն 'ի ձէնջ ասէ եղբարք զիս մատնելոց է առ 'ի մահ. պետրոս լուեալ զայն զարհուրէր և անկանէր առ յովհաննէս. հարցանել թէ ով իցէ զաւաճանօղ վարդապետին:

Օրհնի: Աւետարան Ղուկաս: Մկ: իբ. 1:
Մերձեցաւ տօն բաղ: Տէրը հայհոյութ:

Սաղմոսք ասելով՝ 58 փրկեա զիս 'ի։ Ած մերժեցեր։ Փառք ած աղօ։

փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց ած. և 'ի հալածչաց իմոց ապրեցո զիս։

Խնամակալ սիրոյն յիւր ստեղծելոցն զօրու-թեանն փութալեալ. թողացեալ պատուաստ տալ յուդայի 'ողջունեալ զգողն մատնիչ. զոր առեալ և մերկացեալ յանձայն հօ-գւոյն շնորհաց. մատնեցաւ նախաշարի ընդ մահուան վարդապետն։

Ծայրագոյն լուսոյն զրկեալ խաւարա-սէրն արտաքս ելեալ. որն յայտնէր լոյս եղելոյն զխայթողին 'ի գիշերի. պետ-րոս խօսէր խրախուսելի և կշտամբէր հաւախօսի. զելսն յաշխարհէ զփոխելն ասէր և զգալուստ հոգւոյն պատմէր։

Կենդանատու յայնկոյս ձորոյ 'ի վերնատանն ել խորհրդոյ. եմուտ պարտէզ. 'ի պար-տիզի եմուծ զադամ յադէն դրախտէն. մինչդեռ և զմեզ որ 'ի նմին ուստի հանէր 'նախս զառաջինն. զի ժառանգել զհայ-

բնակին արժանաւորութք մեր վերստին։

Հոգայր զկրկին տրտմնքար երկուքն եղ-
եալ առանձնաքար. փրկել զ՚ոչ խարհս
հոգիս յոժար բայց է բնոյն մարմնոյ
տկար. ոչ ոմն ուժեղ և զօրաւոր և ոմն
անզօր վարանեալ. այլ մի և նոյն զ՚ւ
միաւոր կրէր զկրկին կամաւոր։

Զայնու մաղթէր աղօթական ՚ի խմ աւ-
հայր իւր էակից. ծունր դնէր խոնար-
հական որում կրկնի ծունր ամ. եթէ
փրկել մարդկան հնարէ՞աւանց մահու. որ
իմ դրեալ է. բաժակ մահուս յինէն անց-
ցէ ոչ իմ կամաւ այլ քոյդ տեսչէ։

Վ ոզեալ յերկիւղ քրտանց հատման ոլո-
ռնաձև կայլակ վիժման. ՚ի զօրանալ հրեշ-
տակ մերձել զօրհնական գիրն լցեալ.
զի կատարել էառ զբնութ՚ անձըն բան
զմարդկութ. պարունէր զերկիւղ և զտըր-
մութ՚ յիւրում կրել անօրէնութ։

Օրհն։ Ս—էառարան Տաղէա՛ ձկր։ Ժղ. 27։

Իւ. աւէ յնա յ՚ն հէ՞ջ. և սկսա. Լաւ։

Չորրորդ տաղին՝ 78։ Ա՛ծ մտին հե։ Որ հովուեսդ։ Ցնծայցէք առ ա̃ծ։

Նոքա 'ի ձեռանէ քում՝մէ մերժեցան. մեք ժողովուրդք և խաշն արօտի քո։

Ճառագայթ փառաց էին որ ը̅ բնուե̃րս մարդկայնի. տագնապեցար 'ի գիշերին աղօթեցեր առ հայր յերկինս ծածկեա՛ 'ի մեզ զլոյսդ երկնային և փարատեա՛ զերկիւղ չարին. մասունք հոգւոց մեր և մարմին յերկիւղ քո սուրբ բևեռեսցին։

Մերձեալ յուդաս որ մատնելոյ հանդերձ դասուն փարիսեցւոց. անկան նմ՝ան սորանկելոյն որ յուխտեան չեն կանգնեց յուդաս նենգաւ համբուրելով. առիթ մահու նշան տալով. փոխան սիրոյ զնա մատնելով չար ը̅ բարեաց վճարելով։

Յայնժամ առ գութ սիրոյն պետրոս ըղծառային անուն մաղքոս. եհատ սուսերբ զականջն աջոյ որ ոչ լուաւ տ̃ն խրոյ. իսկ տ̃րն մեր արագապէս յունկըն մերձեալ բժշկապէս. առողջ ցուցոյց ա̃ծապէս

զոր ոչ տեսին կուրայն հանդէս։

Նոր հօտին փոքու ցրուեալ քան զի ըզհովիւըն քաջ հարեալ. պետրոս միայն զհետ երթեալ 'ի յաղջկանէ վիմին շարժեալ. Նշանակեալ հաւըն խօսէր առ 'ի պետրոս տէրն ակնարկէր զբանըն յիշէր. դառն արտասուէր 'ի գլորմանէն դարձեալ կանգնէր։

Շնորհէ ըւ վիմին եկեղեցւոյ զոր պահեցեր 'ի հոսելոյ. և կանգնեցեր 'ի գլորելոյ վասն սրտին արտասուելոյ. կանգնեա՛ և զիս որ է նմին 'ի գլորմանէ այլթաւաքողին. տալով աչացս յորդ արտասուս և ջուր նման ծովու գլխոյս։

Ով կամաւ զանկապելին կապեալ ըզձեռս արձակողին. 'ի յապարանսն տանէին կայիափայ և աննային. ծառայն զերեսն այն ապտակէր յորմէ սրովբէն թեւաքօղէր. թուք արձակէր պիղծ բերանովն յայն որ կուսէն լոյս ծագեաց թքովն։

Օրհն։ Առաքելական հրամանաւ։ մՃր։ խզ. 31։

Յայնժամ ասէ ցնո։ Վերջ. և փախեան

Հինգերորդ սաղ՝ 108։ Ա.ծ օրհնութ։ Ասաց տէր ցտէր իմ։ Խոստովան եղեր։

Խօսեցան զինև լեզուաւ նենգաւորաւ. և բանիւ ատելութ զիս պաշարեցին։

Զոր կապանաց մարդկան լուծիչ որ կապեցար ի կապելոյն. զիս արձակեա յինք նախապէս մեղաց կապեց դժոխայնոյն. որ ի մեղօք պարտաւորին կայեր անմեղդ 'ի յատենի. յորժամ փառօք գաս հայրենի՝ մի՛ դատեսցես զիս ի նոցին։

Պատկառանօք հինն ադամայ որ ձաղեցար վս նր. 'ջնջեա զամօթ մեղաց լրբին որով զերեսս իմ ծածկեցին. որ ներեցեր չար ծառային ածել ձեռօք քեզ ապտակին. հար ուժգնակի զդեմս չարին որպէս և զիս եհար ուժգին։

Ջահն լուսոյ յառաւօտին 'ի յուրբաթուն հնոյ զատկին. կայր առաջի դա-

տաւոլին ծառայն նստէր ՚ի յատենին. ՚ի հարցանել զկից ատոռն որն ոչ առնէր պատասխանի. զի. կամ խաւսայ զինն լսել՝ եղէ ես մարդ որ ոչ խօսի։

Ռամկական դասք զհնուորացն արկին հանդերձ նախատանաց. այնմ որոյ զգեստն է՝ լոյս փառաց իբրև զօձոյ զինքեամբ արկած ՚ի ծունր իջեալ՝ կատակէին ըզգլուխն եղեգամբ հարկանէին. պսակ ՚ի փշոյ բոլորէին զփուշ մեղացն բարձողին Սոսկալին քրով բէից բառնայր ինքեամբ զփայտ խաչին. մինչ ՚ի տեղի գողգոթային յորում եղեւ մարդն առաջին. ետուն ըմպել զինի զմռսեալ և կերակուր լեղեաւ խառնել. որով զպտղոյն զառն ճաշակ փոխեաց մեզ քաղցր և ախորժակ։

Վերնականքն զարհուրեալ տեսին զՏէրն մերկացեալ. և զհանդերձն բաժանել պատմուճանին վիճակ արկեալ զձեռն և զոտսն ծակեցին ըստ յայտնապէս դաւթենն ձայնին։ ընդ փայտ խաչին բեւեռեցին ըզ-

Մատունսն որ գրեալ 'ի դախտակին։
Օրհն։ Ռուբէարան Տաաբեթա՝ Յդ։ Եդ. 57։
Խոկ ն՜ծ կալեւլ։ Վերջ. Եղաց դառնապէս։

Վ. էջէրորդ ած՝ 117 Խոստովան եղերուք ան. մինչև ցայն ասանի որ ասէ՝ Բայեք ինձ հյորդ։

Տարածեալ ձեռք և ձեռաց ոտք և ոտից ընթանալեաց. փայտ ընդ փայտի դառըն պտղոյ կեանք և մահու փոխարկելով. 'ի մէջ երկոցունց անօրինաց կայր մերկացեալ տուօղն օրինաց. զոր ինչ տեսին ազգըն կուրաց բաց 'ի միայն աւազակաց։ Բոբեից արեգականն զլոյսն արար դիշե-րանման. զըստուերն քօղ արկ մերկութե զի մի՛ տեսցէ ակն անարժան. 'ի մէջօ-րեայն նըսեմայր. յորժամ ադամ մե-ղօք մեռաւ. 'ի յիններորդն 'ի լոյս դար-ձաւ յորժամ մահուամբ մահն լուծաւ։ Ցօղէր արտօսըր ցաւագին մայր ածն որ կայր մերձ առ խաչին. յորժամ լսէր

զծարաւին բարբառելոյ իւր մտածնին. եռուն քայլս խառնեալ լեղի այնմ որ բղխեաց գետ յաղենի. և 'ի վիմէն վըտակ բարի արբոյց տոհմին դառնայողէ:

Խիւծեալ յերրորդ ժամու օձին զմիտս նախնւոյ մօրն Եւայի. 'ի վեցն անկեալ մարդն առաջին հաւանական բանիւ նորին. 'ի սոյն ժամու տէրն 'ի խաչի զէն քաւեսցէ զմեղս նոցին. և յորժամ եւ աղամն հէն եդ զաւազակն 'ի մէջ դըրախտին:

Փարելի բարբառ ընդ իմ ելի ելի առ հայր գոչէր. զհոգին կամաւ հօր աւանդէր զհոգիս մարդկան նոյն ընծայէր. երկիր հիմամբք սասանեցաւ և վարագոյրն ը̈ մէջ հերձաւ. վէմք 'ի յինքեանց պատառեցան և գերեզմանք մահու բացան:

Քարոզելի 'ի սքանչելեացս ած մարմնով վս իմ խաչեալ. մերով բնութբս մեռանի ած անմահ խոստովանի. կրկնակ բռնակ

կողին աղբերք եկեղեցի իւր հաստատի.
ջրովն մաքրի՝ զարեանն ըմպէ՝ զորդին
ընդ հօր փառաւորէ։

Օրհն։ Աւետարան յոհան՝ ԺԹ Է։ Ժը. Զ։
Գիտէր և յուդա։ Վերջ. հաւ խօսեցաւ։

## Նորին երգ՝ Ժամի Ուրբաթու ցերեկին։

Նորոգօղ տիեզերաց որ զգեցուցեր մեզ՝
լոյս փառաց. արկար զքեւ ՚ի զինուո-
րաց քղամիտ կամիր նախատանաց. մեր-
կեալ յինէն զքուրձ մեղաց զտրտմագին
արեամբ ներկած. և զգեցո՛ զուրախա-
լին զպատմուճանն իմ զառաջին։
Երկնաւոր թագաւորիդ ՚ի ծունր իջեալ
խաղ առնէին. ծածկեալ զգլուխդ կըռ-
փէին և եղեգամբ հարկանէին. և զիմ
անկեալ մինչ ՚ի գետին ՚ի հնազանդել
կամաց չարին. մի՛ թողուցուս խաղ ա-
ռնելին այլ կազմեսցես զիս վերստին։

Ըամեալ բոլորով քո մարմին յետ վճռոյ դատաւորին. սաստիկ էառ զհարուած գանին վն̃ գանից նախատեղ ծէին. զ իս որ յոտից մինչև ցգլուխ ցաւօք նեղ իմ անհնարին. առողջացո՛ դարձեալ կրկին ով շնորհօք յաւազանին:

Արքափայլ պճնեալ զորդուն զոր զգեցուցեր ահարոնի. փոխան պսակ 'ի փշոյ եղին մշակք այգույն իսրայէլի. զ փուշ մեղաց հանցես յինէն զոր յիս եհար իմ թշնամին. և ողջացո՛ զխայթուած վերին զի սպիք մեղացն ջնջեսցին:

Օրհն: Նուէրատուն տառաչելոյ՝ յԺէ: Իէ. 1:
Իբրև այգ եղև: Ջերջ. և մայր որդւոյն:

Լառուն ըմպել քեզ զլեղին և ըղքացախն 'ի ծարաւին. արբեր կամաւ զ ի քաղցրացելն ճաշակ պտղոյն դառնադունին. զ դառնուլ թիւնաւորին զոր 'ի մասունս հոգւոյս արկլին. հերքեա՛ 'ի բաց հան դերձ սովին և քաղցրացի սերքո 'ի սմին:

Սոխակնե՛ր, ծառոց մանչաբերին այնմ որ բու-սաւ 'ի մէջ դրախտին. փոխան բարձեր ըզ փայտ խաչին 'ի գողգոլթայ հանեք տեղին. զիմ առ 'ի մեղս անկեալ զոգի և ծայրագոյն բարձօղ բեռին. բարձր 'ի յուսոյդ զի ոչ խաբին հան 'ի յերկինս յուխտել տե՛ղին:

'Ի յուրբաթու ժամ երրորդին բևեռեցար տէր 'ի խաչին. լուծեր զկապանս նախաստեղծին և կապեցեր զթշնամին. զիս ամրացո՛ ընդ հովանեաւ կենդանաբար քո նշանին. և 'ի ծագելն յարևելից լուսաւորեա՛ լուսով նորին:

Իրանեալ աւազակին բացեր զդուռն ադեն դրախտին. զի հաւատոյ սրտի նորին կատարեցեր զխնդրելին. տուր և ինձ տէր ընդ նմին լսել զնոյն պատասխանին այսօր ընդ իս իցես յայգին 'ի հայրենիս քո առաջին:

Օրհնե: Ն.-էտաւրան Տարէոա՝ Ճղր: ժե. 1:
Նա վաղ վաղակի: Վերջ. եկեալ էին յեղեմ:

Բարբառելով զեղլի ելին հիմունք երկ-
րի տատանէին. և վայրագոյր հին օրի-
նէն վերուստ 'ի վայր պատառէին. որպ
Է վէմայն որ շարժէին շարժեալ զան-
շարժ սիրտս 'ի քարէն. Է պատառել վա-
րագուրէն զխմ պատառեալ զդէր պարտէն
Արեգական լոյս քողարկեալ խաւարա-
նայր միջօրէին. և գերեզմանքը բանային
մարմինք սրբոյն յառնէին. Է խաւարել
լուսաւորայն մաքրեալ յինէն զգործ խա
ւարին. ընդ մեռելոյն որ յառնէին կանգ
նեալ զմեզ օք մեռեալ հոգիս:

Նոր սիրոյ պատուիրանին գործով լցոլ
եղեր բանին. աղօթելով առ հայր յեր-
կինս թողուլ զմեղս որ 'ի խաչէին. ինձ
որ հոգւովս հաւատացեալ երկրպագեմ
քեզ միածին. թող զլուծումն հրաման-
նին մի' յիշեսցին մեղքն առաջին:

Սարսեցին ամենաշարամեալք 'ի յաւանդելն
առ հայր զհոգիդ. որ 'ի դժոխս իջեր

ներքին 'ի բանդ մահու և խաւարին. կա-
պեալ զիշխանըն մահածին հաներ զհո-
գիսն որ 'ի բանտին. և զիս հանցես տր̅
ը̅ նոսին բանտէ մեղաց աղջամղջին։

Օրհն։ Աւետարան Ղուկասու՝ մղ ե։ Իբ. 66։
Եւ իբրև այդ եղև։ Վերջ. տեսանէին զայն

Աղբերայն անապական որ ես մահուն
անմահարար. բղխեալ 'ի քէն վտակ կըր-
կին 'ի նորոգումն կողածնին. բաց զբե-
րան իմ յարբուցումն քո արեան կենա-
րարին. ըրա դարձեալ յաւազանին թէ
ոչ շնորհօք այլ արտասուօք։
Յանմահէդ մեռանելդ զմեռեալ հոգիս
կենդանացո. թաղմամբ 'ի նոր գերեզ-
մանի՝ զթաղեալս 'ի մեղըս վերածեա.
'ի գբի ներքոյն իջանելով՝ 'ի գբոյն
մեղաց վերաբերեա. 'ի ստուեր մահու քո
բնակելով՝ լուսաւորեա և զիս հոգւով։
Սիրտ իմ առ քեզ աղաղակէ բան որ ի̅
հօր իսկզբանէ. որ կամաւոր վ̅ն մարդ-

կամն կրեցեր մարմնով զայս ամ. ինձ լը-սելի՞ արա զձայն՝ յարքայութիւնդ քո կոչ-ման. ընդ ժողովոյն անդ անդրանկացն օրհնել զքեզ միշտ յաւիտեան։

Օրհն։ Աստուածածին բան յոր։ Եւ նոքա։

Ո՛վ տէր անժամանակ հայր անսկիզ-բըն և անքննին. որդւոյ պատճառ ծը-նընդեամբ. անձառ հոգւոյն բղխմամբ ան-քննաբար. աղաչեմք զքեզ գթած եր-կայնամիտ և ողորմած. ողորմեա՛ քո ըս-տեղծուածոյս ՚ի քեզ յուսով ննջեցելոյս Բանիդ որ ՚ի ծոց հօր միածին և կերպա-րան սկզբնատպին. որով երկինք գոյա-ցան աշխարհ լրիւ հաստատեցան. հայ-ցեմք ՚ի քէն տէր և փրկիչ ամենողորմ և կեցուցիչ ող։

Գերագոյն շնորհաց բաշխօղ երկնաւո-րաց և երկրայնոց. կեանք և կենաց տը-

ւոյ հոգւոյ հօր և որդւոյ արարչակից․ խընդրեմք 'ի քէն աղբիւր բարեաց արբուցանողդ ծարաւեաց ող։

Գոհանամք ը̄ սրովբէից զկենդանարարդ համայնից․ երեքսրբեան մի տէրութ̄ի զհայր և զորդի և սբ̄ զհոգին․ յոր հանգուցեալս մկրտեալ և հաւատով խոստովանեալ․ ող։

Նորակի Թիւ կատարեալ յերիս անձինս բաժանեալ․ երրորդութ̄ միաւորեալ միով բնութ̄ հաւասարեալ․ յորմէ կազմեալք և արձակիմք և վերստին անլոյծ կազմեմք․ ողորմեա։

Ողջակիզդ հօր զորդի փառաւորեմք անբռնելի․ որ իջեր յարգանդ կուսին զադամայինն առեր մարմին․ աղաչանօք ա̄ծածնին անապական քում ծնողին․ ող։

Երևեցար մարմնով յերկրի որ 'ի հօրէ անմեկնելի․ ը̄ հողեղէնս բնակչ̄ր 'ի հրեղ̄ինց երկրպագեալդ․ պաղատանօք երկնաւորաց փառաբանիչ քոյ հրեշտակաց․ ող։

Ըստ օրինացն մովսէսի ընծայեցար 'ի տաճարին. զի զբնութիւն մարդկային ընծայեսցես հօր 'ի յերկինս. խնդրեածովք ոք ծերունւոյն քեւ 'ի կապից արձակեցաւ. ող:

Թագաւորըդ հրեղինաց որ է մարդկան հողեղինաց. շրջեցար տնօրինաբար կրեցեր զկիրըս մարդկաբար. որ 'վս մեր զայս ամ 'ի յանձն առեր խոնարհութի. ող:

Փողովեալքս 'ի հրաժարումն ծառայի քո յաշխարհէ. հայցեմք 'ի քէն արտասուելով եւ պաղատիմք զայս ասելով. ձանապարհ է քեզ ելից ննջեցելոյս լեր ուղեկից. 'ի յօթեւանս հօր քոյ լուսոյ զննջեցեալըս մեր հանգո:

'Ի փրկութ մերոյ սկըզբան մկրտեցար 'ի յորդանան. զոր շնորհեցեր նոր աւազան 'ի մաքրութի մեղաց մարդկան. հայցմամբ կրկին կարապետին մեծին 'ի ծնունդըս մկըրտչին. 'ի:

Լուսաւոր ձայնիւ յերկնից զքեզ զա-

ւանեալ հայր էակից. աղաւնակերպ հո-
գին իջեալ առ հաւասարդ իւր հանգուցիւ
զմկրտեալս նովին հոգւով յորդեգրութեան
հօր հաւատով. 'ի։

Խաւար մեղաց հալածեցաւ լոյս գիտութեան
քեւ ծագեցաւ. խայթուած օձին բժշկե-
ցաւ հիւանդութիւն մեր ողջացաւ. կենդանա-
րարդ մեռելոց եւ լուսատու խաւարե-
լոց. 'ի։

Ծագումն անուն առ 'ի հօրէ՝ որ ընտրե-
ցեր 'ի յաշխարհէ. լուսաւորիչ տիե-
զերաց՝ զդաս ընտրեալ աշակերտացն.
աղաչանօք առաքելոցն՝ փող յարութեան մեր
մեռելոցս 'ի։

Կեանք 'ի կենաց լոյս 'ի լուսոյ որ ըն-
տեղծեր զմեզ 'ի հողոյ. նորոգեցեր զար-
ձեալ կրկին ծննդեամբ սրբոյ աւազա-
նին. զոր պեյուցեր շնորհիւ քոյին՝ 'ի
մինհաւանէն այն առաջին. 'ի։

Հոգւով լցեր զմարդն առաջին զոր կո-
րուսեալ խաբմամբ չարին. զնոյն հաւե

բանիւ քո հեղեր յոգիս մեր զհրաշալին նովին հոգւովդ սուրբ և բարի՝ առաջնորդեա հոգւոյ սորին. ՚ի։

Զայնեցեր առ Ղազարոս որովհետեւ մեռելոյ յոյս. կենդանութիւն չորեքօրեայն՝ կենդանացան որք յադամայն. կենաց ձայնիւ վերջին փողոյ՝ կոչեա զսա յայսմ՝ հողոյ. ՚ի։

Դողեալ սարսեաց սպահակ մահու՝ ՚ի կենարար ձայնին քո. արտաքսեալ զնոյ ը բանին՝ եւ զմեռեալն ը հրամանին. Իշխանք սոսոյս այս սարսեցեն՝ զհոգէ սորա մի՛ արգելցեն. ՚ի։

Ճանապարհ մոլորելոց՝ և ճառագայթ խաւարելոց։ Հրաւիրեցեր զորդիս լուսոյ՝ ՚ի յերկնային հարսանիս քո. ը զըւարճալից անդ ժողովոց՝ արժանացո զսա դասուց. Լի լապտերօք մեծ յաւաքատ՝ ը իմաստուն ոք կուսանացն։

Անձով բնութն զոր զգեցար ՚ի փայտ խաչին բեւեռեցար. Լուծանելով զմեզ ՚ի

մեղայ՝ 'ի նախահօրըն կապանաց. Լոյծ և զսա՞ 'ի յանցանաց վասըն քո սուրբ չարչարանաց. Լ։

Յետ կամաւոր մահու խաչին՝ եղար 'ի նոր գերեզմանի. երեքօրեայ Թաղմամբ երկրին՝ նոր ստեղծեր զմեզ կենդանի. զիջեալս ընդ քեզ 'ի հող մահու վերակոչեա ձայնիւ փողոյ. Լ։

Երեւեալ կանանցն իւղաբերից՝ և ողբային արտասուալից. իբր զմեռեալն յուսալից՝ զկենդանիդ յաւիտենից. վա նոյին ոք արտասուաց՝ մաքրեա զսա 'ի յանցանաց. Լ։

Դարձեալ հիմանցըն դըժոխոյ' 'ի տեսանել զքեզ ներքնոց. հաներ զհոգիսն որ 'ի բանտին՝ կապեալ զիշխանըն մահածին. Է հանգուցեա՛լ հոգիս սբյ՝ հանգո՛ զհոգիս ննջեցելոյ. Լ։

Ուրախութ զօրք երկնայինյ երկնից յերկիր իջանէին. յորժամ յարեար 'ի մեռելոց՝ Լոյս ծագեցար աշխարհածոյ. սուրբ

՚յարուցի՛ քո կենարար՝ յարո՛ ընդ սմա ՚ի կեանս անմահ. Լե։

Զըհանդուրժեալ պահապանացն ՚ի յեր-կիւղէ երկնաւորայն. որք աւետիս տայ-ին կանանց թէ մահ լուծաւ մահկանաց-ուաց. սա որ մահճու քո ընկակից Լե-ցի կենաց հաղորդակից. Լե։

Գործակցեալ անմարմնականքն առ կենա-տու նը գերեզմանն. տան աւետիս ազ-գի մարդկան վասն կենայն յաւեժա-կան. դասաւորեա՛ պարուց նոցին զնըն-ջեցեալս յօրն վերջին. Լե։

Զահաւորեալ նշան խաչին յարեւելից փայլեալ ծագին. հաւատացեալք ՚ի քեզ քերկրին եւ ուրացօղքն կոծեսցին. զեր-կրրպագօղս սրբոյ խաչին պայծառացո՛ լուսով նորին. Լե։

Ահա գործեալ երկնաւորացն զան առա-ջի քո նախընթաց. զընտրեալըս քո ժո-ղովելով քեզ ՚ի առաջ բերեն ամպով. Է

աղաւնեա՞ց օդապարից խառնեա՛ ընդ սո ձք երամից. դասաւորեա՛ զսա վերնոյն երգել զփառս ընդ զուարթնոցն։

Սարսափին տարերք երկրի՝ յորժամ փառօք գաս հայրենի. արեգական լոյս խաւարի՝ լուսինն աստեղբքըն նըւաղին. զսա յաւո՞ւրն աներեկի՝ լուսաւորեա՛ լուսով քոյին. Դա։

Վերնական զօրացն պետ՝ փող է բարբառ աւետաբեր. արիք մեռեալք որք յադամայ՝ քանզի աՀա եկն փեսայ. Է Հարմանցեա՞լ մաքուր հոգւոյ՝ կարգեա զսա 'ի թիւ սրբոց. Դա։

Տիրական յաթոռ նըստիս՝ յարարածոց երկրպագիս. արդարութ̃ զաշխարհ դատիս՝ վարձս ըստ գործոյ հատուցանես. յայնժամ շնորհեա՞ ողորմութ̃ի՝ ննջեցելոյս մեր թողութ̃ի. Դա։

Բամեալ մարդկան ազգ ժողովին՝ որք յադամայ ծնեալք լինին. եւ հրեղինաց դասք երկնային՝ համանգամայն վայրա-

բերեն. 'ի յայնմ ահե՞ղ հրապարակին յի-շեա՛ զսա յօրն ահագին։ Դա։

Ցուցանեն գաղտնիք մարդկան իւրա-քանչիւր որ գործեցան. բարեաց գոր-ծօղքն պսակեն՝ չարեացն 'ի հուր ան-շէջ մատնեն. յայնժամ՝ յիշեա՛ զսորա բարին գործըք մեղացն ջընջեսցեն. Դա։

Լուսին պսակք զանազանեալք՝ և պատ-մուճանք լուսափայլեալք. ո՛ք վկայիցն 'ի գլուխ եդեալ՝ և արդարոյն զար-դարեալ. հաղորդս արա՛ հայցմամբ նոցին զսա լուսոյ փառաց նոցին. Դա։

Փառաց 'ի փառըս բարձրանան՝ աջակող-մեանքըն վերանան. յորժամ լսեն զե-րանական՝ ձայն օրհնութե 'ի քեն կոչման նընջեցելոյս մեր լսելն զձայն բար-բառըդ քո. Դա։

Քահանայք և ժողովուրդք հայցեմք 'ի քէն տէր բարեգութ. ընդ նընջեցեալ որըն հաւատով ընկալ զմեզ նովին յու-սով. յերուսաղէ՞մ քաղաք վերին յո-

րում արդարքըն ժողովին. փառս վեր երգել միշտ ընդ նոսին երրորդութեդ երրեակ անձին.

Արարիչ և մարդասէր անոխակալ և բարեգութ. որ գովիսդ 'ի սրոբէից որ դատաւոր արդարուն. ըէ մեզ առաքելոց որ պսակեա՛ զմեր նընջեցեալսըն ողորմած տէր ողորմեա՛ հոգւոյն մեր նընջեցելոյ։

Յորժամ գրեալքըն կատարին որ զայնմ աւո՞ւր մեզ պատմեցին. մարգարէից բանքըն յարգին առաքելոցըն վճարին. ող։

'Ի վերինն երուսաղէմ 'ի բնակարանըս հրեշտակաց. ուր ենովք և հեղիաս կան ծերացեալ աղաւնակերպ 'ի դրախտին եդեմական պայծառայել արժանապ. ող

Թագաւոր փառաց քս. որ ժամանեալ գաս 'ի յերկնից. 'ի վերայ Թևոց հողմոց քո հայրենի՛ կերպարանօք. և առնես հրափորձութի՛ւ զքըննութի՛ւ որդւոց մարդկան. ող։

'Ի գնել բեմին բազմի փեսայն. և առագաստըն զարդարի. գաբրիէլեան փողըն գոչէ. սբք ամ անդ հաւաքին. արդարոց դասքըն բերկրին. իսկ մեղսասէրքըն թախաձին. ող:

Յորժամ հընչիւն փողոյն լինի ըղևտական գիրըն յայտնի. Ճառագայթ սբյ խաչին. յարևելից փայլեալ ծագի. հըրեշտակաց գունդք ծաւալին հրեշտակապե՞տք պարունակին. ող:

Ահեղ խորհուրդ քահանային բազկատարած կայ 'ի բեմին. առաջի սբ սեղանոյն. հուր շիջանի՞ խաւար մերժի. ողըրմեալ հոգիքն ուրախանան զի թողուն մեղաց լինի. ող:

Մովսէս ածախօս և ահարօն ըղևտացին. մարգարէքըն իսրայէլի և քահանայք հին օրինին. յառաջագոյն մեր ծանուցին զգալուստ սբ միածնիդ. 'ի փըրկուն մեր յայտնեցին յանապատի՞ կերակրէին. ող:

Տրտմահոգորդ չարչարանօք. ՚ի յանձն առեր զմահ խաչին. և փայտին բարձող եղեր վ̅ն ադամայ նախաստեղծին. ող:

Զարհուրեցան զօրք երկնային. յորժամ տեսին զտ̅րդ ՚ի խաչին. արեգական լոյս քօղ արկեալ. և լոյս լուսնին նըւաղեցաւ յահեղ փառաց ա̅ծորդւոյդ խաւար եղև ընդ տիեզերս. ող:

Ուրախացան ազգք մարդկան. յորժամ լուան զքո յարութ̅դ. նորափետուր զարդարեցան ՚ի յարու̅ե ո̅ր միածնիդ. ող:

Աղաչանօք ս̅բյ խաչին. և անբարբառ բարեխօսին. և ս̅բյ ա̅ծածնին և յով-հաննու կարապետին. և ս̅բյն ստեփան-նոսին և առաջին մարտիրոսին. և ս̅բյ լուսաւորչին հայաստանեայց հայրապե-տին. և ս̅բց առաքելոց. և համօրէն մարտիրոսաց. ողորմեա:

Մաղթանք:

Հոգւոյն հաղորդելոց ք՟ն ա՟ծ՝ արա՛ հաղխա և ողորմնի և մեզ մեղաւորացս՝ շնորհեա՛ զթողութի յանցանաց:

Եւ ես խաղաղութ՟ զտ՟ր աղաչես:

Վ՟ան հանգուցեալ հոգւոյն աղաչեսցուք զփրկիչն մեր ք՟ս՝ զի զնոսա ընդ արդարսն դասեսցէ. և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութ՟ իւրոյ: Ամենակալ տ՟ր ա՟ծ մեր կեցո՛ և ողորմեա՛:

Տէր ողորմեա: Երիցս:

Քրիստոս որդի ա՟յ անոխակալ և բարեգութ՝ զթա՛ քո արարչական սիրով զ՚ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց: Յիշեա՛ յաւուր մեծի գալստեան արքայութ՟ քոյ: Արա՛ արժանի ողորմութ՟՝ քաւութ՟ և թողութ՟ մեղաց: Դասաւորեալ պայծառացո՛ ը՟ն ս՟րբս քո յաջակողման դասուն: Զի դու ես տ՟ր և արարիչ ամենեցուն. դատաւոր կենդանեաց և մեռելոց: Եւ քեզ վայել է փառք իշխանութի և պատիւ.

այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն

Իսկ աստ ասի Օրհնութիւն ըստ պատշաճի աւուրն հաս 'ի չափն. և ըստ նմին՝ Մաղթանս, Քարոզն, և Աղօթս։

Մաղթանս տէրունական տօնից։

Փառք հրաշափառ ծննդեան քո Տէր. զօրհնեալ և զփառաւորեալ, զհրաշալի և զյաղթօղ զծնունդ քո մեք օրհնեմք և փառաւորեմք։

Մարդասէր Տէր՝ վասն սրբուհւոյ անարատի մօր քոյ և կուսի և վասն խաչի քոյ պատուականի, ընկալ զաղաչանս մեր. և կեցո զմեզ։

Մաղթանս 'ի տօնս սրբոց։

Բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին. և յովհաննու Մկրտչին. սրբոյն Ստեփաննոսի Նախավկային. և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին։ Յիշատակաւ և աղօթիւք սրբոց (այս աւուրս), որոց այսօր է յիշատակ։ Եւ վասն խաչի քոյ պատուականի, Տէր ընկալ զաղաչանս մեր. և կեցո զմեզ։

Քարոզ՝ երանեալ եւ էջքն հանգստեան:

Վասն ի վերուստ խաղաղութեան՝ եւ փրկութեան անձանց մերոց. զՏէր աղաչեսցուք:

Տէր ողորմեա:

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց, զՏէր աղա:

Վասն քաւիչ եւ ներող լինելոյ Աստուծոյ ի վերայ մեղաց մերոց, զՏէր աղա:

Վասն թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր, զկամայ եւ զակամայ, զՏէր աղա:

Վասն զի մի՛ ի խոտորման դառնցիմք յաւուրն պատասխանատուութեան. զՏէր:

Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին, զՏէր աղա:

Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ, զՏէր աղա:

Զանձինս մեր՝ եւ զմիմեանս, Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Ողորմեա՛ց մեզ տէր աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում՝ ասասցուք ամենքն միաբանութեամբ: Տէր ողորմեա՛. տէր ողորմեա՛. տէր ողորմեա՛:

## Աղօթք:

Տէր տուընջեան՝ և գոյացուցիչ գիշերոյ. որ արարեր զտիւ 'ի զբօսանս բարեգործութեան՝ 'ի փրկութիւն անձանց մերոց, և զգիշեր 'ի հանգիստ քնոյ՝ տկարացեալ բնութեան մերոյ: Իսկ այժմ զարթուցեալ բացեր զբերանս մեր յօրհնաբանութիւն՝ ահաւոր և փառաւորեալ անուանդ քում սրբոյ: Ընկալ և այժմ զաղաչանս մեր, և յաջողեա՛ մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք 'ի նոյն պաշտօն քո կանխել միշտ. և նովին կանոնիւս անդադար փառաւորել զհայր և զորդի և զսուրբ հոգին. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## Խաղաղութիւն ամենեցուն:

Զքեզ, որ յամենայնի գթած և մարդասէր տէրդ ես աղաչեմք հանապազ, զի զօ-

րացուսցես զմեզ որ ը֊ օրէ կալ՚ի կարգի կրօնաւորութեան մերում։ Թեթեւացո տէր՝ զքաղցր լուծ քո՝ զոր եդեր ՚ի վր̅ մեր զի կարասցուք կալ ՚ի պատուիրանի քում եւ զհաճոյսն առնել առաջի քո յա̅մ ժամ ՚ի տուէ եւ ՚ի գիշերի։ Հրեշտակային երգակցութբ̅ զքեզ օրհնել՝ զքեզ գովել եւ զքեզ գոհանալ եւ փառս մատուցանել ամենազօր տէրութեանդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Մաղթանս։

Սաղմոսիւք եւ օրհնութբ̅՝ եւ երգօք հոգեւորօք անդադար փառաւորեմք զհայր եւ զորդի եւ զս̅բ հոգին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ տէր մեր յս̅ քս̅. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

---

Քարոզ՝ Նորհնծայաւ մտին, եւ Տէրունական հանգստեան

Վ֊ս ՚ի գիշերի եւ ՚ի տունջեան, եւ յա̅մ ժամու խօսիլ մեզ զ բան ճ̅ն. զ տէր աղաչեսցուք։

Վ՟ս չանկանելոյ մեզ ՚ի փորձուԹ՟, որում
ոչ կարեմք հանդուրժել. զոէր։
Վ՟ս անբիծ և անդատապարտ կալ մեզ
առաջի ահեղ ատենի քո. զոէր։
Վ՟ս առաջնորդելոյ մեզ ՚ի նաւահանգիստն
կենաց անխախճանից. զոէր։
Վ՟ս արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն՝
և երկնից արքայուԹ՟ն. զոէր։
Վ՟ան հոգւոյն։ Նո՟ւ և միաբան։ Զ՟ան
ձինս։ Ողորմեա։

Աղօթք։

Ի գիշերի և ՚ի տունջեան և յամ ժա-
մու զքեզ աղաչեմք, և ՚ի քէն խնդրեմք
մարդասէր տէր։ Տուր մեզ ա՟ծ փրկիչ
մեր. խոնարհեսցի՛ ունկն քո ՚ի խնդրուա
ծըս մեր. զի մի՛ ունայն լիցին վաստակք
ծառայից քոց. այլ համբարեա զաշխա-
տուԹս մեր ՚ի գործ արդարուԹ՟ն, և ՚ի
պտուղ ա՟ծպաշտուԹ՟ն։ Ընկալ տէր՝ զա-
ղօԹս և զերկրպագուԹս մեր, և հասո՛
մեզ զողորմուԹ՟ քո առատապէս. ծած-

կեա՛ց զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյ քոյ. զօրացո՛ զմեզ տէր՝ զօրութիւնդ հոգւոյդ. պահեա՛ զմեզ որպէս բիբ ական: Եւ արա՛ առ մեզ նշան բարի, 'ի գովեստ և փառաբանութիւն անուանդ քում՝ տէր: Զի 'ի քո փառս կատարի ամենայն արարածոց մշտնջենաւոր փառաբանութիւն 'ի բարձունս. Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.

ամէն:

Խաղաղականին աղօթիցն:

Հովիւ քաջ՝ հովիւ բարի և յաւիտենական՝ նայեաց և ի՛յս արա բանաւոր հօտի քո, զոր ժողովեցեր առ քեզ գթութ քով: Զի քո առաջի կամք էր, և առ 'ի քէն ողորմութեանդ և գթութեանդ ակն ունիմք: Զամենեսեան օրհնեա՛ զամենեսեան խնամոցդ, զամենեսեան լուսաւորեա՛. և ամենեցուն պարգեւեա՛ զերկնից արքայութիւնդ: Վասն զի դու ես տէր կենաց, և ած ողորմութեան. և քեզ վայել է փառք

իշխանութի և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Աղօթք։

Ի գիշերի և ՚ի տունջեան և յամ ժամու անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զՍ՟բ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

Քարոզ և աղօթք՝ Ա՛ն նախանձելի, և Խաղաղ ձայն հանդերձայն։

Վ՟ն ուղղելոյ զգնացս մեր ՚ի ճանապարհս խաղաղութե՟՝ զՏ՟ր աղաչեսցուք։
Վ՟ն ցրելոյ ՚ի մէնջ զա՟մ խորհուրդս չարին՝ զՏէր։
Վ՟ն պարգևելոյ մեզ առողջ խորհուրդս և առաքինի վարս՝ զՏէր։
Վ՟ն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ՝ զՏէր։
Վ՟ն խորտակելոյ զհակառակորդն վաղվաղակի ը՟ ոտիւք մերովք՝ զՏ՟ր։ Վ՟ն Հոգւոյն։ Եւ ես միաբան։ Զ՟անձինս։ Ողորմեա։

## Աղօթք:

Տէր երկնի և երկրի արարիչ ամենայն արարածոց երևելեաց և աներևութից: Առ քեզ կարդամք յամենայն ժամ. զի ընդ ամենայն տեղիս է տէրութիւն քո, և արքայութիւն քո ամենեցուն տիրէ: Շնորհեա մեզ երկիւղիւ 'ի պաշտօն քո կանխել համապազ, սիրել զքեզ 'ի բոլոր սրտէ և 'ի բոլոր մտաց, և յամենայն զօրութենէ մերմէ պահել զպատուիրանս քո: Համբառնալ առ քեզ զձեռս մեր 'ի սրբութեան առանց բարկութեան և երկմտութեան, և գտանել 'ի քէն զշնորհս և զողորմութիւն, և զառաքինասէր գործոյն յաջողութիւն: Մ̃ զի դու ես տէր կենաց և ամենայն ողորմութեանց. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## Խաղաղութիւն ամենեցուն:

Քում ամենազօր և յաղթօղ տէրութեանդ կրկնի ամենայն ծունր յերկրպագութիւն. և փա

ռաւորի յամենեցունց Թագաւորութիւնդ քո: Նայեա՛ յերկրպագութիւնս մեր, և ուսո՛ մեզ առնել զարդարութեան ճշմարտութեան: Վասն զի դու ես Աստուած խաղաղութեան, որ բարձեր զթշնամութիւն 'ի միջոյ, և արարեր զխաղաղութիւն յերկինս և յերկրի. Հեռաւորաց և մերձաւորաց աւետարանեցեր զնոր պարգևս քոյին բարերարդ: Որում և զմեզ մեծի շնորհացդ արժանաւորս արասցես, դասելով ընդ ճշմարիտ երկրպագուս քո, Աստուած մեր և Տէր մեր փրկիչ Յիսուս Քրիստոս: Որ ես օրհնեալ ընդ Հօր և ընդ Սուրբ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Մաղթանք:

Յերգս օրհնութեան և 'ի ձայն սաղմոսաց անդադար փառաւորեմք զՀայր եւ զորդի և զՍուրբ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քարոզ և աղօթք՝ Ողորմեա՛ և 'Ի ննջելումն ժամանակիս

Վասն գտանելոյ մեզ զշնորհս և զողորմութիւն 'ի բարերար Տեառնէ մերմէ՝ զՏէր աղաչեսցուք

Վասն փրկելոյ զմեզ 'ի գրպարտութենէ
մարդկան և յորոգայթից սատանայի՝ զՏէր:
Վասն ամենայն անձանց քրիստոնէից և սանց
հաւատացելոց՝ զՏէր:
Վասն որք 'ի լերինս յայրս և 'ի փապարս
բնակեալ են սուրբ հարքն մեր՝ զՏէր:
Վասն որք սաղմոսիւք և օրհնութեամբ կատարեն
զամենայն ժամանակս կենաց իւրեանց՝ զՏէր:
Վասն հոգւոյն: Եւ ևս միաբան: Զան-
ձինս: Ողորմեաց:

Աղօթք:

Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր, որ զար-թուցեր զմեզ 'ի հանգստենէ քնոյ շնոր-հիւ ողորմութեան քո: Զարթո՛ զմիտս արդարութեամբ առ քեզ Տէր Աստուած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն քո: Եկեսցէ և բնակեսցէ առ մեզ Աստուածութիւն քո. և ողորմութիւն քո հովանի և պահապան լի-ցի 'ի վերայ պաշտօնէից քոց: Եւ զմեզ զծառայս քո արժանի՛ արա 'ի տուէ և

՚ի գիշերի և յա՟մ ժամու միշտ խորհիլ ՚ի սէր պատուիրանաց քոց։ Եւ գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, այժմ և։

### Խաղաղութիւն ամենեցուն։

Կենդանարար զօրութի՟ն և աղբիւր անմահութեա՟ն, դու ես ք՟ս ա՟ծ փրկիչ մեր։ Որ շնորհեցեր մեզ ՚ի մէջ գիշերի յառնել և խոստովան լինիլ առ քեզ վ՟ն իրաւանց և արդարութե՟ն քո։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տէր ա՟ծ մեր, արա՛ զմեզ արթունս և պատրաստ ՚ի ժամ առաւօտու ընդ ո՟բս քո։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյդ սրբոյ, այժմ և։

### Մաղթանք։

Գոհութ՟ք և ճշմարիտ խոստովանութ՟ք անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և սուրբ Հոգին, այժմ և։

Թագաւորք ապաշխարութեան։ ԲՀ

Թ. ագաւոր յաւիտեան։ Տուր մեզ տ̃ր փրկիչ մեր. և կեցո զմեզ, որ յա̃մի կարող ես։

Տուր մեզ տ̃ր փրկիչ մեր՝ յոյս ա̃մ ծագաց երկրի, և որ 'ի ծով հեռի։

Ո՞ պատրաստէ զլերինս զօրութ̃ իւրով և զգեցեալ է զզօրութի̃. և կեցո զմեզ որ յա̃մի կարող ես։

Տուր աղաչանաց մերոց տ̃ր մարդասէր, և գթա՛ 'ի մեզ։

Մի՛ զիս անտես առներ, այլ օգնեա՛ ինձ մարդասէր։

Մի՛ ընկենուր զիս տ̃ր յերեսաց քոց, և զհոգի քո ս̃բ մի՛ հաներ յինէն։

Այլ տուր ինձ ցնծութի̃ փրկութե̃. և հոգւով պետութե̃ քո՛ հաստատեա՛ զիս. այլ օգնեա՛։

Մի՛ անտես առներ զիս տ̃ր ա̃ծ փրկիչ իմ,

այլ շնորհեա՛ ինձ թողութի բազմապատիկ մարդասէր, և կեցո՛

Երկինք և երկիր գոհանան զքէն տէր. արարածք ամ․ քեզ երկրպագանեն. և հրեշտակք ՚ի բարձունս աղաղակեն և ասեն ողորմեա՛ գու ստեղծեր, մի՛ կորուսաներ:

Երկինք երկնից, ջուրք որ ՚ի վերայ քան զերկինս, օրհնեցէք զանուն տեառն:

Զի նա ասաց և եղեն. հրամայեց և հաստեցան. և հրեշտակք ՚ի բարձ:

Երկինք և երկիր համապատ զքեզ գովեն. թագաւոր փառաց, սերովբէք և քերովբէք ՚ի խոնարհ ունելով զդէմս իւրեանց. և միաձայն բարբառով աղաղակեն և ասեն. սբ՝ սբ՝ սբ տր զօրուեց:

գշ.) Երկայնամիտ ես տր առ ամենեսեան. և գթած տր ՚ի վր մեր ողջ և յաւազակին փրկիչ. և կեցո՛:

Երկայնամիտ բազումողորմ և ճշմարիտ նայեա՛ց առ իս, և ողորմեա՛ց ինձ: Տո՛ւր զօրութի ծառայի քո, կեցո՛ զորդի աղախ-

նոյ քոյ, և տուր առ իս նշան բարութ. և գթա՛ տէր ՚ի վերայ մեր ող̃ և յաւագա։ Տէր որ գթացար յաւազակն խաչակից լինել քեզ. և մաքրեցեր զաղտեղութի̃ յանցանաց նո̃ յաղբերէ կողի քոյ. գթա և յիս ՚ի մեղաւորս, որ ծառայիս եմ առ քեզ. և փափագեմ ՚ի պաւլթս քո որ̃ զմի ՚ի յեղջերուաց ՚ի յաղբերս ջուրց։ Մարտեաւ ընդ իս թշնամին. հանապազ զիս կամի կորուսանել. այլ դու տր̃ իմ այց արա մոլորեալ ոչխարիս, և կեցո։ Մարտեան ընդ իս ՚ի տարապարտուց. և փոխանակ սիրոյ իմոյ մատնէին զիս այլ ես յաղօթս կայի։ Զառաւելին ինձ չար փոխանակ բարւոյ. ատելութի̃ փոխանակ սիրոյ իմոյ. այլ դու տր̃ իմ այց արա մոլորեալ ոչխարիս, և կեցո։ Որ հովիւդ ես հօտից բանաւոր կենդանեաց. տուր ինձ յոյս կենաց ապաշխարութ̃ և դարձո զմոլորեալս ՚ի հօտ քո քո̃, և կեցո։

Մ՛եղայ և աղաչեմ զքեզ. թողութիւն շնոր-
հեա՛ մեղաց իմոց. քաւիչ իմ լե՛ր քո գթու-
թեամբդ, որ միայ՛նդ ես փրկիչ,* և կեցո՛։
Մեղայ տէր մեղայ. և զանօրէնութիւնս իմ ես
ինձէն գիտեմ. Աղաչեմ և խնդրեմ ՚ի քէն,
թո՛ղ ինձ տէր, թո՛ղ ինձ. և մի՛ կորուսա
ներ զիս ընդ անօրէնութեան իմոց. քաւիչ իմ
լե՛ր քո գթութեամբդ, որ միայնդ։
Մեղայ քեզ տէր. մեղայ քեզ տէր. մեղայ և
քան զաւազ ծովու բազում են յանցանք
իմ. պատրանք աշխարհիս խաբեցին զիս
և եղէ անպտուղ ՚ի կենաց յուսոյդ. այլ
դու անոխակալ և անյիշաչար փրկիչ. խնայ
եա՛ ՚ի մեղուցեալ ծառայս, և կեցո՛։
Դշ.) Տէր իմ բազում են անօրէնութիւնք ան
ձին իմոյ. ո՛չ. յիշեցի զահեղ զդատաստա-
տանս քո. արդ անկեալ զքեզ աղաչեմ.
շնորհեա՛ ինձ ապաշխարութիւն տէր և ողոր։
Անօրէնութիւնք իմ բարձրացան քան ըզ-
գլուխ իմ. և որպէս բեռն ծանր ծանրացան
՚ի վերայ իմ. Նեխեցան և փտեցան վէրք

իմ յերեսաց անզգամութեան իմոյ. ո՛չ յիշեցի պահել զպատուիրանս քո. արդ անկեալ զքեզ աղաչեմ՝ շնորհեա՛ ինձ ապաշխարութիւն տէր, և ողորմ։

Պաղատանս մատուցանեմք քեզ հայր երկնաւոր, մի՛ անտես առներ զաղաչանս մեր. այլ անցո՛ զցասումն քո ՚ի մէնջ. և յիշեա՛ զի պատկեր եմք բարերարութեանդ։

Տէր իմ գթութիւնք քո բազում են յոյժ. առ իս արա՛ զբարերարութիւնս քո, ո՛վ և մաքսաւորին. և ինձ ողորմեա՛։

Գթութիւնք քո բազում են տէր. և ըստ իրաւանց քոց կեցո՛ զիս։

Բազում են որք հալածեն և նեղեն զիս ՚ի վկայութեանց քոց ես ո՛չ խոտորեցայ. առ իս արա՛ զբարերարութիւնս քո, ո՛վ և մաք։

Անոխակալ և անյիշաչար տէր, որ գթալով ՚ի մեղաւորս շնորհեցեր ապաշխարութիւն. արդ գթա՛ և յիս տէր ՚ի մեղուցեալ և յանօրինեալ քո ծառայս. և փոխարկեա՛ զգործս չարեաց ՚ի զղջումն

ապաշխարութեան, և կեցո՛։
՚Ի տաճարի քում սրբում փառաւորելով զքեզ դու ունիս իշխանուն, ողորմեա՛ մեզ
Նայեա ը̄ բազում ողորմութն քում մտից ՚ի տուն քո, և երկրպագից ՚ի տաճար սուրբ քո երկիւղիւ քո։
Տէր առաջնորդեա՛ ինձ յարդարութն քում վ̄ս թշնամեաց իմոց. և ուղիղ արա՛ առաջի իմ զճանապարհս քո, դու ունիս իշ։
՚Ի տաճարի քում սրբում հանապազըզ քեզ գովեմք թագաւոր փառաց. որ ունիս իշխանուն կենաց և փրկութն ողոր։
եշ.) Ապաշխարութն արտասուս առաւան լնուլ, և լուանալ զբազմութն մեղաց. սովաւ՝ շնորհեա՛ յառաջ քան զվախճան զքաւութն և զմեծ զողորմութն։
Ծարաւի է անձն իմ առ քեզ Ած̄ հզօր և կենդանի. Երբ եկից երևեցայց երեսացդ քո։
Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ՚ի տուէ և ՚ի գիշերի. և այն զի ասէին ցիս.

է ա՜ծ քո. սովաւ շնորհեա՛ յառաջ քան զ վախ:

Յորժամ գա՜ փառօք հօր յոհագլն աւուրն 'ի դատել զերկիր. և դ, դան սարսափմամբ երկրածինքս ա՜մ 'ի յահէ քումմէ. 'ի նստիլ քոյ յատենի դատաւոր ահեղ,՚ և յակնարկել քո յարարածս, յիշեա՛ և զիս զբազմամեղս. որ ընկղմեալս եմ յանցանօք բանսարկուին խաբմամբ. և հայցեմ զաւազակին, տէր և զիս յիշեա՛, որ միայնդ ես փրկիչ և կեցո՛:

Զիս որ 'ի նաւի աշխարհի ալէկոծեն մեղք իմ. նաւահանգիստ ապաշխարութե՜ շնորհեա՛ ինձ բազում ողորմ. և կեցո՛:

Կեցո՛ զիս ա՜ծ, զի հասին ջուրք յանձն իմ. ընկլայ ես 'ի խորս անդնդոց՝ ուր ո՛չ գոյ ինձ հանգիստ. նաւահանգիստ ապաշխարութե՜ շնորհեա՛ ինձ բա:

Լուսաւորեա բարեգութ առ քեզ ապաւէնիմ: տո՛ւր ինձ ձեռն օգ՜ երբեմն պետ-

րում 'ի վ՟ր ալեացն. որ ծփիմն ալէկո-
ծեալ յանցանօք մեղաց. և կեցո՛։
Դու ես ք՟ս աղբիւր կենաց, բղխումն
ողորմուե՟. շնորհեա՛ փրկիչ. անձանց մե-
րոց զթողութ՟ի մեղաց մերոց։
Ի քէն է տ՟ր աղբիւր կենաց. և լուսով
երեսաց քոց տեսանեմք զլոյս։
Ծագեա՛ զողորմութ՟իս քո, որք ճանաչե՟ն
զքեզ. զարդարութ՟իս քո ոյք ուղիղ են
սրտիւք. շնորհեա՛ փրկիչ անձանց մե՟։
Որ աղբիւրդ ես ծարաւեաց և հանգիստ
աշխատելոց. ճանապարհ մոլորելոց. և
հովիւ հոգևոր բանաւոր հօտի. փափա-
գողացս առ քեզ ք՟ս լե՛ր նաւահանգիստ.
և արբո՛ մեզ ծարաւեացս զբաժակ քո
քաղցրուե՟ յանսպառ աղբերէդ։
ուր.) Ի տաճարի սրբուե՟ քում լո՛ւր տ՟ր
ձայնի իմում. և աղաչանք իմ ժամանես-
ցեն 'ի յականջս քո տէր։
Լուաւ ինձ 'ի տաճարէ սրբոյ իւրմէ
ձայնի աղօթից իմոց. և աղաղակ իմ

առաջի նորա մինչ յականջս նորա։ Ե՛ աղաչանք իմ՝ ժամս։

Որ լուսատու ես տիեզերաց քն̃ ա̃ծ, լուսաւորեա՛ զիմ՝ զխաւարային խորհուրդս և կեցո՛։

Օրհնեալ ես տ̃ր, և փառաւորեալ է քո անբաւ մարդասիրութ̃իդ. զաղաչանս մեր քեզ մատուցանեմք, որ թագաւորդ ես յաւիտենից. զննջեցեալսն մեր արժանի արա՛ տ̃ր ը̃ունիլ 'ի կեանսդ յաւիտենից։

Արտասուս ինձ շնորհեա՛ 'ի յապաշխարութ̃ե տ̃ր. զի լուացից զմեղս անձին իմոյ ո̃պ պոռնիկն աղաչեմ, և կեցո՛։

Վաստակեցայ ես 'ի հեծութ̃ե իմում. լուացի զա̃մ գիշեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի. զի լուացից զմեղս։

Որ աղբիւրդ ես անապական քն̃ ա̃ծ, ըզվիրաւորեալ անձն իմ 'ի մեղաց՝ բժըշկեա՛ տ̃ր բղխմամբ արտասուաց. և կեցո՛։

Զմոլորեալ ծառայս խնդրեմ տ̃ր. և մի

դատապարտէր զիս 'ի յաւուրն այցելութ̅
քո մարդասէր:

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և
իրաւունք քո օգնեսցեն ինձ:

Մոլորեցայ ես ոպ̃ զոչխար կորուսեալ
խնդրեա՛ զծառայս քո. զի զպատուի-
րանս քո ես ո՛չ մոռացայ. և մի՛ դատա-
պարտեր զիս 'ի յաւուրն այցելութ̅ քո
մարդասէր:

Որ մոլորեցայ 'ի հօտէ քումմէ հովիւ-
բարի. խնդրեա՛ զիս զմոլորեալս. և
արժանաւորեա՛ խառնել 'ի հօտ քո քս̃. և
կեցո՛:

Ալէլուիաք [illegible] տէրունական տօնից հարցման:
Ալէլուիա Ճրագալուցի Ծննդեան:

Ալէլուիա. ալէլուիա. ալէլուիա:
Առաքեաց զբան իւր: Խոստովան եղի-
ցին տեառն: Ալէլուիա: էրէ×:
Կ. Իջցէ որպ աձ: Ծագեսցի յաւուրս
նորա: փառք և երկր: այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից.

Ալէլուիա Ծննդեան Տեառն Յիսուսի:
աձ. Ալէլուիա. էրէ×: Տէր հովուեսցէ.
Ի վայրի դալարւոջ անդ բնակ:
Կ. Ալէ: Իջցէ որ: Ծագեսցի յա:
փառք և: այժմ: ալէլուիա, էրէ×:

---

Օրհնի ամենայն տէրունական տօնի որ աձ
չունի՛ զ[illegible] առ:
Դասք հրեշտակաց: ալէ: Լուր դուստր:
Սա ինքն է: ալէ: Նա կարդասցէ: Նա

անդրանիկ արարիչ: Փառք և: այժմ և:
ալէլուիա, Էրէք:

---

Ալէ: Իջցէ ով̄: Ծագեսցի յաւուրս:
Ալէ: Եցոյց տէր: Յիշեաց ողորմութ̄:
փառք և. այժմ և: ալէ:
Ալէ: Նա կարդասցէ: Եւ անդրանիկ:
Ալէ: Ընդ քեզ է: Երդուաւ տէր և:
փառք և: այժմ և: ալէլուիա:

---

Ալէ: Եցոյց տէր: Յիշեա ողորմութ̄:
Ալէ: Յիշեա տ̄ր զ դաւիթ: Որ̄ երդուաւ:
փառք և: այժմ և: ալէլուիա:

---

Ալէ: Ընդ քեզ է սկիզբն: Երդուաւ տ̄ր
Ալէ: Տէր ասաց ցիս: Խնդրեա յինէն:
փառք և այժմ և: ալէլուիա:

---

դձ. Ալէ. Յիշեա տ̄ր: Որ̄ երդուաւ:
փ. Ալէ: Տէր հովուեսցէ: 'Ի վայրի:
փառք և: այժմ և: ալէ:

դկ. Ալէ: Տր̄ առաջ ցխ: Խնդրեա՛ յի:
փ. Ալէ: Լ՝ուր դուստր: Ամ ենքն է:
փառք և: այժմ և: ալէ: Երեք:

Ալէլուեա 'ի տօնի յառաջաւորաց գալստեանն չորեքտասան տառական մերոյ 'ի առաւօտն:

Ալէ: Օրհնեա՛լ եկեալ: Տր̄ այծ մեր:
փ. Ալէ: Տէր 'ի տաճար: Ալէ.ք նորա:
փառք և: այժմ և: ալէ:
աձ. Ալէ: Ողորմութ՛ ան: Նւ հոգւոյ:
փ: Ալէ: Յարեաւ ան: փախեն ատե:
փառք և: այժմ և: ալէ:

ակ. Ալէ: Ծափս հարէք: Տր̄ բարձրեալ:
փ. Ալէ: Հաճեցար տր: Թողեր զան:
փառք և: այժմ և: ալէ:
բձ. Ալէ: Յարեաւ ան: փախեան ատե
փ, Ալէ: Տր̄ թագաւորեց զվայել չուե
փառք և: այժմ և: ալէ:

բկ. Ալէ: Հաճեցար տր: Թողեր զան:

փ. Ալէ։ Օրհնեցէք մանկ։ Աղլեյի ան
փառք և։ այժմ և։ ալէ։

---

գձ. Ալէ։ Տէր Թագաւորեաց զվայել
փ. Գովեամ երուսաղէմ։ Օւ է գձրաց։
փառք և։ այժմ և։ ալէ։

---

գկ. Ալէ։ Օրհնեցէք ման։ Աղլեյի ան։
փ. Ալէ։ Կենդանի է տր։ Ած է որ խնդ
փառք և։ այժմ և։ ալէ։

---

դձ. Ալէ։ Գովեամ երուս։ Օւ ի գ օրայ։
փ. Ալէ։ Ողորմութն տն։ Եւ հոգւով։
փառք և։ այժմ և։ ալէ։

---

դկ. Ալէ։ Կենդանի է տր։ Ած է որ։
փ. Ալէ։ Ծափս հարէք։ Տէր բարձր-
փառք և։ այժմ և։ ալէ. էլէ։

աձ. Ալէ։ Զամբարձէք իշ։ Ով է սա։
փ. Ալէ։ Կառք ա՟յ բիւ։ Նս՛ի բարձ։
փառք և։ այժմ և միշտ։ ալէ։
ակ. Ալէ։ Զամբարձաւ ա՟ծ։ Սաղմոս
փ. Ալէ։ Որ հովուեսդ։ Որ նստիսդ
փառք և։ այժմ և միշտ։ ալէ։
բձ. Ալէ։ Կառք ա՟յ բիւ։ Նս՛ի բարձ։
փ. Ալէ։ Ո դնէյամ։ Խոստովանու՟ի
փառք և։ այժմ և միշտ։ ալէ։
բկ. Ալէ։ Որ հովուեսդ։ Որ նստիսդ։
փ. Ալէ։ Մեծ եղև։ Բարձրեալ ես։
փառք և։ այժմ և միշտ։ ալէ։
գձ. Ալէ։ Ո դնէյամ։ Խոստովանու՟ի։
փ. Ալէ։ Տ՟ր խոնարհեցո՟։ փայլեա՟ ըղ
փառք և։ այժմ և միշտ։ ալէ։
գկ։ Ալէ։ Մեծ եղև։ Բարձրեալ ես։
փ. Ալէ։ Խոնարհեցոյց։ Նս՛ի քրով։
փառք և։ այժմ և միշտ։ ալէ։
դձ. Ալէ։ Յերեսաց նր։ Վերինք հա։
փ. Ալէ։ Զամբարձէք իշ։ Ով է սա։
փառք։ այժմ։ ալէ,

դկ. Ալէ: Խոնարհեցոյց զեր: Եւ 'ի քեր:
փ. Ալէ Համբարձաւ ած, Սաղմոս աս:
փառք և. այժմ և: ալէ:

Ալէլուա հոգւոյն սրբոյ գալստեանն:

աձ. Ալէ. Ցանկալի է. Քանզի ծառ:
փ. Ալէ. Թեւք աղաւնւոյ. 'Ի գումա:
փառք և, այժմ և: ալէ:
ակ. Ալէ. Զսիրտ սբ. Մի՛ ընկենուր:
փ. Ալէ. Գտի զդաւիթ. Ձեռն իմ:
փառք և. այժմ և: ալէ:
բձ. Ալէ. Թեւք աղաւնի. 'Ի գումար:
փ. Ալէ, Առաքես զոր. Եղիցին փառք
փառք և. այժմ և: ալէ:
բկ. Ալէ. Գտի զդաւիթ. Ձեռն իմ:
փ. Աղէ, Յայտնութի բանից. Զբերան
փառք և. այժմ և: ալէ:
գձ. Ալէ. Առաքես զո. Եղիցին փառք
փ. Ալէ. Հոգի քո. Վ՟ն անուան քոյ:
փառք և. այժմ և: ալէ:

դկ. Ալէ. Օքերան իմ. Նայեսցի առ.
փ. Ալէ. Ի սաստէ. Աղաքեայ 'ի։
փառք և. այժմ և։ ալէ։
դձ. Ալէ. Ո՞վ խող գի. Ո՞վ յօղ գի։
փ. Ալէ. Ի վայրի. Գարձոյն զանձն։
փառք և. այժմ և։ ալէ։
դկ. Ալէ. Ի սաստէ. Աղաքեայ 'ի։
փ. Ալէ. Օսիրո մբ. Մի՛ ընկենուր
փառք և. այժմ և։ ալէ։

Աշխար խաչէ։

աձ. Ալէ. Ցուպ քո և. Պատրաստ ար։
փ. Ալէ. Երտուր եր. Ո՞վ փրկեյան։
փառք և. այժմ և։ ալէ.
ակ. Ալէ. Նետք քո. Աթոռ քո ած։
փ. Ալէ. Տո՛ւր զօրութ. Տեսցեն առ։
փառք և. այժմ և։ ալէ։
բձ. Ալէ. Եռուր եր. Ո՞վ փրկեյան։
փ. Ալէ. Դու պատր. Բարձր արար։
փառք և. այժմ և։ ալէ.

բկ. Ալէ. Տուր զօրութ. Տեսցեն ատ։
փ. Ալէ. Ասաց տր. Գաւազան զօ։
փառք և. այժմ և։ ալէ։
գձ. Ալէ. Դու պատրաս. Բարձր տր։
փ. Ալէ. Յայտնեցեն. Ջրաւազայթ.
փառք և. այժմ և։ ալէ։
գկ. Ալէ. Ասաց տր. Գաւազան զօ։
փ. Ալէ. Նշանեցաւ առ. Ի պտղոյ։
փառք և. այժմ և։ ալէ։
դձ. Ալէ. Յայտնեցեն. Ջրաւազայթ։
փ. Ալէ. Ցուպ քո և. Պատրաստ ա։
փառք և. այժմ և։ ալէ։
դկ. Ալէ. Նշանեցաւ առ. Ի պտղոյ։
փ. Ալէ. Ներք քո. Աթոռ քո ած։
փառք և. այժմ և։ ալէ։

Ալէլուէ եկեղեցւոյ։

ած. Ալէ. Լսէ ինձ. Տէր սիրեցի ըզ։
փ. Ալէ. Երանի զոր. Լցցուք մեք։
փառք և. այժմ և։ ալէ։

ակ. Ասէ. Մեծ է տր. Հաստարմատ:
փ. Ասէ. Հիմունք նր. փառաւորեալն
փառք և: այժմ և: ալէ. էլէ:
բձ. Ասէ. Նրանի զօր. Լցյուք մեզ:
փ. Ասէ. Դու տէր. Դու յարուցեալ:
փառք և: այժմ և: ալէ:
բկ. Ասէ. Հիմունք նր. փառաւորեալն:
փ. Ասէ. Այսօր է զօր. Ի տեառնէ:
փառք և: այժմ և: ալէ:
գձ. Ասէ. Դու տէր. Դու յարուցեալ:
փ. Ասէ. Խոստովան եղէց. Օհն լու:
փառք և: այժմ: ալէ, էլէ:
գկ. Ասէ. Այսօր զօր. Ի տնէ եղև:
փ. Տր ողկացցէ. ի Որ գնայ անբիծ:
փառք և: այժմ և: ալէ:
դձ. Ասէ. Ուրախ եղէ. Հանէլ կայեն:
փ. Ասէ. Լսել ինձ. Տէր սիրեցի ըղ-
փառք և: այժմ և: ալէ:
դկ. Ասէ. Տէր ողկացցէ. Որ գնայ ան-
փ. Ասէ. Մեծ է տր. Հաստարմատ:
փառք և. այժմ և: ալէ:

Ալէլուիա ՚ի տօնի Հրեշտակապետաց

Ալէ, Ո տէր ըղ. Հաստատեաց։
փ. Ալէ. Օրհնեցէք զՏր. Օրհնեցէք
փառք և. այժմ և. ալէ։

Դասք հրեշտակաց օրհնեն զքեզ
քրիստոս. ալէ։
մարդկան ալդ սաղմոսեն. ալէ։

Գործեալ։

թ. Երկինք և երկիր գոհանան զքեն
ող. Երկինք երկնից, ջուրք որ ՚ի վր̅
Զի նա ասաց. և եղեն, հրամայ
փ. Երկինք և երկիր համապատ ըղ.

---

Ալէլուիա Գաւառ յարութեան։

ած. Ալէ. Բարձր ամենայն. Տր̅ ած իմ։
փ. Ալէ. Իշխան զիս ՚ի. Հաստատեց։
փառք և. այժմ և. ալէ։

---

Ալէլուիա Նաւակատիքին եկեղեցւոյն։

ակ. Ալէ. Տր̅ ած մեր. Ած իմ ես դու.

փ. Ալէ. Լերինք ցնծ. Գրաւէ զօշ:
փառք և. այժմ և: ալէ:

Աչքերուն աւուրց Աւագ շաբաթուն:

բշ. Ալէ. Զի նա առ. Կարգեայ զնս:
փ. Ալէ. Ի սկզբանէ տր. Նոքա կոր:
փառք և. այժմ և: ալէ:
գշ. Ալէ. կացցէ դշխոյ. Լուր դուս:
փ. Ալէ. Տարցին լծադա. Ածցին ցնծ
փառք և. այժմ և: ալէ:
դշ. Ալէ. Որ ուտէր զհաց. Այլ դու:
փ. Ալէ. Խորհեցան և. Եդին յերկ:
փառք և. այժմ և: ալէ:
եշ. Ալէ. Լուսայլս սրբոյն. Տն սերբ:
փ. Ալէ. Պատրաստ ար. Օծեր իւղ:
փառք և. այժմ և: ալէ:
ուր. Ալէ. Զարթնու աղ. Ընդունողք:
փ. Ալէ. Մատնեցայ և. Աղաղակեցի:
փառք և. այժմ և: ալէ.

շաբ. Ալէ. Նշմն գլխ 'ի. Յիս հաւատ։
փ. Ալէ. Նշէ եւ ոտ. Ոտ վերաւ։
փառք եւ. այժմ եւ։ ալէ։

Յայլ օրհնաւ է այս։

Ինքն 'ի գերեզմանի. Քաղցրացան
նմա խիճք. փառք. այժմ։ ալէ։

Ալէլուաւ Պայծառակերպութեան Քրիստոսի. որ
ամէ Վարդավառ։

կիր. Ալէ Քո են երկինք. Զհիւսիս եւ։
փ. Ալէ. Բարձրութիք լե. Նկայք եր։
փառք եւ. այժմ եւ։ ալէ։
բշ. Ալէ. Բարձրութիք. Մովսէս եւ ահ։
փ. Լերինք ցնծաս. Դա զժողովուրդս
փառք եւ. այժմ եւ։ ալէ։
գշ. Ալէ. Դ ձեռս նր են. Նմ է ծով։
փ. Ալէ. Լերինք ոտ. Պատմեսցեն երկ
փառք եւ. այժմ եւ։ ալէ։ էջէ։

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից առաւօտեան ժամուն. որ կատարի ՚ի տէրն ուրբաթոյն աստուածոյ. որ էրեկեալ իւրաքանչիւրն:

Լսեաք առաւօտու ողորմութիւն քո. յանձնեցաք և ուրախ եղաք զամ աւուրս կենաց մերոց:

Ուրախ եղաք փոխանակ աւուրցն՝ յորս խոնարհ արարեր զմեզ և ամացն՝ յորս տեսաք զչարչարանս:

Հայեաց տէր ՚ի ծառայս քո և ՚ի գործս ձեռաց քոց, և առաջնորդեա որդւոց նոցա եղիցի լոյս տն այ ՚ի վր մեր.

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ՚ի մեզ տր. և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ: Փառք հօր և որդւոյ և հո:

Եւ եւս խաղաղութե զտր աղաչեսցուք:

Օրհնութի և փառք հօր. այժմ և միշտ:

Աստուծոյ երկրպագեսցուք:

Օրհնութիւն երից մանկանցն Դանիէլի։

Օրհնեալ ես տր ած հարցն մերոց, օրհնեալ փառաւորեալ անուն քո յաւիտեանս։

Յիրաւունս անցուցեր զայս ամ ընդ մեզ, արդար ես դու տէր, եւ ամ գործք քո ճշմարիտ են։

Ճանապարհք քո ուղիղ են, եւ ամ դատաստանք քո արդար են։

Դատաստան արդարութ ածեր 'ի վր մեր ըստ ամի, զոր ինչ ածեր 'ի վր մեր եւ քաղաքի սրբոյ հարցն մերոց երուսաղէմի։

Արդարութ եւ յիրաւի ածեր զայս ամ 'ի վերայ մեր վս մեղաց մերոց։]

Անօրինեցաք եւ յանցեաք ապստամբ լինել 'ի քէն, մեղաք յոյժ եւ պատուիրանաց քոց մեք ոչ անսացաք։

Ոչ պահեցաք եւ ոչ արարաք ոպ պատուիրեցեր դու մեզ, զի բարիս գտցուք մեք 'ի քէն։

Արդ՝ զամ զոր արարեր եւ զոր ինչ ա-

ծեր 'ի վերայ մեր, արդար դատաստա-
նաւ արարեր։

Մատնեցեր զմեզ 'ի ձեռս թշնամեաց մե-
րոց, անօրինաց խստայ և ապստամբո-
ղաց։

'Ի ձեռս թագաւորի անօրինի և չարի
քան զամ երկիր, մատնեցեր զմեզ։

Եւ արդ՝ ոչ գոյ մեզ ժամ բանալ զբե-
րանս մեր, զի ամօթ և նախատինք ե-
ղաք ծառայից քոց պաշտօնէից։

Այլ մի՛ մատներ զմեզ իսպառ վն անուան
քո, մի՛ ցրեր զուխտս քո, և մի՛ 'ի բա-
ցեայ առներ զողորմութիւն քո 'ի մէնջ։

Վն աբրահամու սիրելւոյ քո, իսահակայ
ծառայի քո և իսրայէլի սբյ քո։

Խոստացար նցա և ասացեր, բազմացուցից
զզաւակ ձեր ոպ զաստեղս երկնից բազ-
մութբ և ոպ զաւազ առ եզր ծովու։

Եւ արդ տր՝ նուաղեցաք մեք քան զամ
ազգս, և եմք տառապեալ յամ երկրի
այսօր վասն մեղաց մերոց։

Ո՛չ գոյ 'ի ժամանակի յայսմիկ իշխան մարգարէ և առաջնորդ, ո՛չ ողջակէզք պատարագաց, ո՛չ խունկք օրհնաց, և ո՛չ տեղի պատարագս մատուցանել առաջի քո, և զողորմութիւն գտանել 'ի քէն:

Այլ անձամբք խոնարհեալ և հոգւով տառապանաց ընդունելի լիցուք մեք որպէս զողջակէզս խոյոց և զուարակաց, և որպէս բիւրաւորս գառանց պարարտաց:

Այնպէս ընդունելի լիցի պատարագս մեր այսօր առաջի քո, զի կատարեալ գտցուք զկնի քո և չիք յամօթ յուսացելոց 'ի քեզ:

Եւ արդ՝ գամք զհետ քո ամենայն սրտիւք մերովք, երկնչիմք 'ի քէն և խնդրեմք զերեսս քո, տէր մի՛ յամօթ առներ զմեզ:

Այլ արա ընդ մեզ ըստ հեզութեան քում, և ըստ բազում ողորմութեան քում, փրկեա՛ զմեզ ըստ սքանչելեաց քոց տէր, և փառաւորեսցի անուն քո յաւիտեան:

Յամօթ լիցին ամենեքեան, որք չարչա-

րեն զծառայս քո, ամաչեսցին եւ լիցին բռնու-
թիւնք նոցա եւ ամ զօրութիւնք նց խոր-
տակեսցին:

Եւ ծանիցեն զի դու ես տր ած միայն,
որ փառաւորեալդ ես ՚ի վր ամ տիեզերաց

Օրհնեալ ես դու տէր ած հարցն մերոց
գովեալ եւ առաւել բարձրացեալ յաւիտեանս:

Եւ օրհնեալ է անուն սբ փառաց քոց, գո:

Օրհնեալ ես ՚ի տաճարի փառաց սրբու-
թեան քո, գո:

Օրհնեալ ես ՚ի վր աթոռոյ արքայութե
քո, գով:

Օրհնեալ ես որ նստիս ՚ի քրովբէս եւ
հայիս յանդունդս, գով:

Օրհնեալ ես ՚ի վերայ հաստատութե երկ-
նից, գով:

Օրհնեցէք ամ գործք տն զտր. օրհնեցէք
եւ բարձր արարէք զնա յաւիտեանս:

Օրհնեցէք երկինք զտր. օրհնե:

Օրհնեսցեն հրեշտակք տն, եւ ջուրք որ
՚ի վերայ երկնից զտէր. օրհ:

Օրհնեցէք զօրութիւնք տն, արեգակն և լուսին զտէր. օրհ:

Օրհնեցէք աստեղք երկնից՝ անձրևք և ցօղք զտէր, օրհ:

Օրհնեցէք ամ հողմք հուր և ջեր ըզտէր. օրհ:

Օրհնեցէք ցուրտ և տօթ, ցօղ և ձիւնաքեր զտէր. օրհ:

Օրհնեցէք սառն և պարզ, եղեամն և ձիւն զտէր. օրհ:

Օրհնեցէք տիւք և գիշերք, լոյս և խաւար զտէր. օրհ:

Օրհնեցէք ամպք և փայլատակունք և երկիր զտէր. օրհ:

Օրհնեցէք լերինք բլուրք, և ամ բոյսք երկրի զտէր. օրհ:

Օրհնեցէք աղբիւրք ծովք և գետք զտէր. օրհ:

Օրհնեցէք գետք և ամ կայտառք, որ ՚ի ջուրս, և թռչունք երկնից զտր. օրհ

Օրհնեցէք գազանք և անասունք, և

որդիք մարդկան զՏէր. օրհ:

Օրհնեսցէ Իսրայէլ զՏէր. օրհնեսցէ և բարձր արասցէ զնա յաւիտեանս:

Օրհնեցէք քահանայք զՏէր օրհ:

Օրհնեցէք ծառայք Տն զՏէր օրհ:

Օրհնեցէք անձինք, և շունչք արդարոց զՏէր. օրհ:

Օրհնեցէք սուրբք և խոնարհք սրտիւք զՏէր. օրհ:

Օրհնեցէք Անանիա Ազարիա և Միսայէլ զՏէր. օրհ:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն:

Մաղթանք:

Օրհնեցէք ամ արարածք զարարիչն արարածոց, զտէրն տերանց, զթագաւորն թագաւորաց, զածն աստուծոց:

Օրհնեցէք գովեցէք բարեբանեցէք. զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա:

Կանոն սրբոյ Յարութեան Քրիստոսի:
՝ Դարձական հարցին:
ած. Որ եկեր 'ի փրկութիւն տիեզերաց

---

Կանոն սրբոց Հրեշտակապետաց: Դար. հաւ
գկ. Անսկիզբն հայր. առաջին Լոյս

---

Կանոն սրբոց Մարգարէից: Դար. հար:
գձ. Որ ընդ հողեղէն բնութեան մերոյ

---

Կանոն առաշխարհութեան: Դար. հար:
ած. Որ հայիս քաղցրութեամբ յարա

---

Կանոն համօրէն Առաքելոց. Դար հարցին:
ած. Կցակից բանդ հօր և հոգւոյն. որ

---

Կանոն համօրէն Ննջեցելոց 'ի Քրիստոս: Դ: Ձ:
ած. Օրհնեալ ես դու Քս. որ յար

---

Կանոն համօրէն Մարտիրոսաց: Դար. հար:
ած. Ընդ քեզ արդար և ուղիղ դատա

Քարոզ՝ ըստն Հայցն:

Սկեալ քս ամենեքեան 'ի տր. կաթու-
ղիկէ և առաքելական եկեղեցւոյ. ա-
ղաչեսցուք զմիածին որդին այ, զտէրն
մեր և զփրկիչն յի քի: Որ էջ փառօք
հօր 'ի մէջ հնոցին. և փրկեաց զերիս
մանկունսն 'ի քաղդէացւոց անօրէն: Լու-
սաւոր և տր. պահեսցէ զմիտս մեր. զի
մի՛ երբէք խաբեսցուք մեք 'ի մեղաց, և
'ի ցանկութէ աշխարհի: Այլ արժանի ե-
ղիցուք պահել զպատուիրանս նր. առ-
նուլ զպսակն լուսոյ և կենաց 'ի յան-
ձինս մեր: Զոր խոստացաւ սիրելեաց
իւրոց Ճշմարիտն ած յս քս տր մեր կե
ցո́ և ողորմեա́: Տէր ողորմեա́: Երիցս.

Մաղթանս [illegible]

Հզօր՝ յաղթօղ՝ սքանչելագործ, սուրբ
մեծի յարութեն քն այ մերոյ վայելէ փառք
իշխանութի և պատիւ, այժմ և միշտ և:

## Մաղթանք Մարտիրոսաց։

Ցօղեա՛ տէր զցօղ բարերար ողորմութեան քո ՚ի մեղուցեալ անձինս մեր. շնորհեա՛ ըզ բոյ հնոցի յանցանաց մերոց. և փրկեա՛ զմեզ ՚ի յաւիտենական հրոյն։ Արա՛ արժանի ընդ երիս սուրբ մանկունսն՝ և ընդ երանելի սուրբ վկայսն՝ օրհնել զքեզ և գովել, և քեզ գոհանալ և փառս մատուցանել Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

—

## Մաղթանք պահոց։

Ցօղեա՛ տէր զցօղ բարերար ողորմութեան քո ՚ի մեղուցեալ անձինս մեր. շնորհեա՛ ըզ բաց հնոցի յանցանաց մերոց. և փրկեա՛ ըզ մեզ ՚ի յաւիտենական հրոյն։ Արա՛ արժանի ընդ երիս սուրբ մանկունսն՝ և ընդ երանելի սուրբ վկայսն՝ օրհնել զքեզ՝ գովել և ասել։ Աստուած քաւեա՛ զիս զմեղաւորս։ Աստուած քաւեա՛ զիս զմեղաւորս։ Աստուած քաւեա՛ զիս զմեղաւորս ՚ի մեղաց, և կեցո՛։

## Երգ Մարիամու աստուածածնին։

Մեծացուսցէ անձն իմ զՏէր, և ցնծասցէ հոգի իմ աստուծով փրկչաւ իմով։

Այս արար ՚ի վերայ խոնարհութեան աղախնոյ իւրոյ, այսուհետև երանիցեն ինձ ամենայն ազգք։

Արար ընդ իս մեծամեծս հզօրն, և սուրբ է անուն նորա։

Ողորմութիւն արար յազգաց յազգս երկիւղածաց իւրոց, արար զօրութիւն բազկաւ իւրով։

Ցրուեաց զամբարտաւանս ՚ի մտաց սրտից, և քակեաց զհզօրս յաթոռոց։

Զխոնարհս բարձրացոյց՝ զկարօտս ելից բարութեամբ, և զմեծատունս արձակեաց ունայնս։

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրոյ, յիշելով զողորմութիւն իւր։

Որպէս խօսեցաւ առ հարսն մեր՝ ընդ Աբրահամու և զաւակի նորա յաւիտեան։

— —

## Օրհնութիւն Զաքարիայի հօրն Յովհաննու Մկրտչի։

Օրհնեալ տր̄ ած̄ իսրայէլի որ յայց ել և արար փրկուի̄ ժողովրդեան իւրում։

Յարոյց մեզ եղջիւր փրկութե̄ ՚ի տանէ դաւթի ծառայի իւրոյ, ոպ̄ խօսեցաւ բերանով սր̄ցն որ յաւիտենից մարգարէքն էին։

Փրկուի̄ ՚ի թշնամեաց մերոց, և ՚ի ձեռաց ամ̄ ատելեաց մերոց։

Առնել ողորմուի̄ առ հարսն մեր, և յիշել զկտակարանս սրբուե̄ իւրոյ։

Զերդումն զոր երդուաւ աբրահամու հօր մերոյ, տալ մեզ առանց երկիւղի զփրկուի̄ ՚ի թշնամեաց մերոց։

Պաշտել զնա սրբուբ̄ և արդարուբ̄ առաջի նր̄, զա̄մ աւուրս կենաց մերոց։

Եւ դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյն կոչեսցիս, գնասցես առաջի տն̄ պատրաստել զճանապարհս նորա։

Տալ զգիտուի̄ փրկուե̄ ժողովրդեան իւ-

նորոյ, 'ի թողութ͞ին ամ՛ մեղաց մերոց:

Վ͞ն գթոյ ողորմութ͞ե ա͞ծն ա͞յ մերոյ՝ որով երևեցաւ մեզ արեգակն 'ի բարձանց, լուսաւոր առնել զխաւար մեր:

Ծագել լոյս 'ի վ͞ր այսոցիկ, որ նստէին 'ի խաւարի և 'ի ստուերս մահու, ուղղել զոտս մեր 'ի ճանապարհս խաղաղութեան:

---

### Աղօթք Սիմէոնի Ծերունոյն:

Արդ արձակես զծառայս քո տ͞ր ը͞ս բանի քում 'ի խաղաղութ͞ի, զի տեսին աչք իմ՝ զփրկութ͞ի քո՝ զոր պատրաստեցեր առաջի ամ͞ ժողովրդոց:

Լոյս յայտնեցար հեթանոսաց, և փառք ժողովրդեան քում Իսրայէլի Փառք հօր և որդւոյ և հոգւոյն:

### Շարական Մեծացուսցէին:

աձ. Յանձառ փառաց խոնարհեցար 'ի

Եւ ծնար 'ի սուրբ կուսէ անմայր:
Այսօր զեկեալդ 'ի փրկութիւն:

---

դկ. Մայր եւ կոյս աղախին քո. որ բա
Մաքուր աղաւնի եւ հարսն երկ:
Քեւ հաճեցան իմանալիքն ընդ հօ

---

դձ. Անարատ կոյս ածածին մարիամ
Զքեզ երկնային դուռն զոր ե
Երիս խորհուրդս տեսակաւ 'ի

---

աձ. Զքեզ երեւեալ դուռն առ եզէ
Զքեզ որ 'ի մորենւոջն առ մով
Զքեզ որ 'ի հօրէ անժամանակա

---

աձ. Այսօր ըն որ ժողովուրդք. ցըն

---

աձ. Յարուցելոյն 'ի մեռելոյ բնակա

---

աձ. Որ զաւետիս հոգւոյն 'ի հրեղէն

Քարոզ՝ զկնի Մեծացուցէին։

Սուրբ զԱստուածածինն՝ և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր 'ի յերկինս· զի կամեցեալ ողորմեսցի՝ և գթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ տէր Աստուած մեր կեցո։

Աղօթք Մարտիրոսաց և Պահոց։

Ընկալ տէր զաղաչանս մեր՝ բարեխօսութեամբ սրբոյ Աստուածածնին անարատ ծնողի միածնի որդւոյ քո· և աղաչանօք ամենայն սրբոց քոց· և որոց այսօր է յիշատակ։ Լուր մեզ տէր, և ողորմեա· ներեա քաւեա և թող զմեղս մեր։ Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ որդւոյ և ընդ սրբոյ հոգւոյդ· այժմ և միշտ և։

Քարոզ՝ զկնի Մեծացուցէին Կիւրակէից աւուրց

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Վասն սրբոյ տեղւոյս շինութեան, և բարեկարգութեան զտէր աղաչեսցուք։

Վ՟ ժողովրդեանս՝ որք միաբանեն ընդ դրունս սրբոյ եկեղեցւոյ զՏէր։
Վ՟ ընդունելոյ զպաղատանս սոցա ՚ի մեծի ողորմութ՟ իւրում զՏէր։

Եւ ևս։ Զ՟անձինս։ Ողորմեայ։

ԱՂՕԹՔ։

Դու ես Թագաւոր յաւիտենական յաւիտենից ք՟ս ա՟ծ մեր։ Եւ քեզ ընդ հօր և հոգւոյդ. սրբոյ վայել է փառք իշխանութի՟ և պատիւ. այժմ և միշտ և։

Սրգ Խաչաբերից Աւետարանին։

Եղիցի անունն Տեառն օրհնեալ յայսմ հետէ մինչև ՚ի յաւիտեան։
Օրհնեցէք մանկունք զՏէր և օրհնեցէք զանուն Տեառն։
Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև ՚ի յաւիտեան։
Յարևելից մինչև ՚ի մուտս արևու օրհ-

նեալ է անուն տեառն. 'ի յայսմ՝ հետէ:
Փառք և երկրպագութի հօր և որդւոյ և սրբոյ հոգւոյն, և այժմ և միշտ և յաւիտեանսն յաւիտենից ամէն: 'ի յայսմ՝ հետէ մինչև 'ի յաւիտեան:

Արի՛ տէր օգնեա՛ մեզ, և փրկեա՛ զմեզ վասն անուան քոյ:

Արի՛ և մի՛ մերժեր զմեզ իսպառ. վասն անուան:

Թագաւորեսցէ տէր յաւիտեան՝ Ած քո սիօն յազգէ յազգ:

Օրհնեա՛ անձն իմ զտր. օրհնեսցի զտր կենդանութի իմոյ:

սրկ. Օրթի:

քհ. Խաղաղութիւն ամենեցուն:

դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

սրկ. Երկիւղածութբ լուարուք:

քհ. Սրբոյ աւետարանին որ ըստ Մատթէոսի:

դպ. Փառք քեզ տր ած մեր:

սրկ. Պռօսխումէ:

դպ. Ասէ ած:

Աւետարան ըստ Մատթէոսի իը գլուխ:
Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լու.

---

Աւետարան ըստ Մարկոսի. ԺԶ. գլուխ. Խզ. հՏը
Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ քանզի ուրբաթ:

---

Աւետարան ըստ Ղուկասու. Իգ. գլխ. Ծ:
Եւ ահա այր մի անուն յովսէփ, որ էր

---

Աւետարան ըստ Յովհաննու. ԺԹ. գլխ, ԼԸ. հ
Յետ այսորիկ աղաչեաց զպիղատոս յով

---

Եւ գ՝ ըհնի Իւղաբերից աւետարանին:
Փառք յարութեան քոյ տէր. ո՛չ դադարեցայց քո օրհնել զքեզ զամ աւուրս կենդանութեան իմոյ:
Փառք յարութեան քոյ տէր. ո՛չ դադարեցայց յո գովել զքեզ զամ աւուրս կենդանութեան իմոյ:
Ես ո՛չ դադարեցայց փրկիչ փառաւորել զքեզ զամ աւուրս կենդանութեան իմոյ:

Երգ՝ ողորմութեան հնուրահնէից. երեքս հոլնուեա՛. և
դնելոյն ճաշոյն առա՛:

Զ͞մ աւուրս կենաց խնդրեմ. ես ոչ դադարեցից օրհնել զքեզ փրկիչդ աշխարհի: Զ͞մ առ:
՚Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ՚ի սրբու͞թի. և օրհնեցէք զ͞տր:
Աստ օրհնեցէք. ա͞մ ծառայք ա͞ն զ͞տր ՚ի սրբու͞թի. և օրհնեցէք զտէր:

Գալաչեան ողորմեան:

Դասք լուսեղէն զուարթնոյն սպասէին մեծի գալստեանն տեառն:

Զատ. Լուսապայծառ հրեշտակն նստեալ ՚ի կենսատու գերեզմանին:
Աւետէր կանանցն՝ յարեաւ ա͞ծ:

Հմբ. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ՚ի վեր: Եւ գայ մտանէ փառօք ՚ի փառս:

Հգլ. Իջեալ հոգին յառաքեալսն. և:
Եւ հանգեաւ նոքօք յազգս մար

վար· Ցնծայ լծաբօր հերմոնիւ. և տա
Նւ կենդանեաց և մեռելոց տէր
խաչ· Այսօր եկեալ կամաւ որն ՚ի խաչ
և տարածեաց զբազուկս իւր ՚ի նմա:
ծնն· Հայք հօգեղէնք ը̅ հովուսն քա
Նւ. մոգքն աստեղբն գուշակեալ
տնը̅. Քառասնօրեայ տղայ և որն օրէ
Նւ սիմէօն դդուէր գրկօքն. և յօր

Քարոզ ընդ Լուսաբերին առաւօտեան, ի Նորգոյն:

Զուարճացեալ քս մեծաւ ուրախութե̅ աւետեօք յարութե̅ տեառն մերոյ և փրկչին մե̅ քի̅: Որ եղև պտուղ և անդրանիկ ամ̅ննջեցելոց· խորտակեաց զդրունս դժոխոց. և եղոյծ զբանսն մահու. և ետ յոյս հաստատութե̅ վերստին նորոգման կենդանութե̅ ամ̅ մարդկան. Խնդրեսցուք հաւատով ՚ի փրկչէն մերմէ յէ̅

քէ. զի զմեզ արժանի արասցէ յա-
րութե՟ն խրդ. կերպարանակից առնել
զմարմին խոնարհութե՟ն մերոյ ը՟ն նմանութե՟ն
մարմնոյ փառաց իւրոյ: Վ՟ս զի զայս
խոստացաւ, զմեծ և զանճառելի շնորհս
պարգևել սիրելեաց իւրոց ճշմարիտն
ած յս քս տր մեր. կեցո և ողորմեա:

Աղօթք:

Ամենակեցոյց ճշմարիտ՝ որ մեծի յա-
րութե՟ն քի տյ մերոյ, վայելէ փառք իշ-
խանութի և պատիւ. այժմ և:

Եւ տաղ փոխ:

Ողորմեա ինձ ած ը՟ս մեծի ողորմութե՟ն
քում. ը՟ս բազում գթութե՟ն քում,
քաւեա զանօրէնութիս իմ:
Առաւել լուա զիս յանօրէնութէ իմմէ.
և ՚ի մեղաց իմոց սրբեա զիս:
Զանօրէնութիս իմ ես ինձէն գիտեմ, և
մեղք իմ առաջի իմ են յմ ժամ:

Քեզ միայն մեղայ տր̃, և չար առաջի
քո արարի:
Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո, և
յաղթօղ 'ի դատել դատ:
Անօրէնուբ̃ յղացայ, և 'ի մեղս ծնաւ
զիս մայր իմ:
Դու տր̃ զճշմարտուի̃ սիրեցեր, զան-
յայտս և զծածկեալս իմաստուբ̃ քով
յայտնեցեր ինձ:
Ցօղեա՛ յիս մշտկաւ և ս̃բ եղէց լուա՛
և քան զձիւն սպիտակ եղէց:
Լսելի արա՛ ինձ զցնծուի̃ և զուրախուի̃
և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:
Դարձո՛ զերեսս քո 'ի մեղաց իմոց. և
զա̃մ անօրէնուի̃ս իմ քաւեա՛ յինէն:
Սիրտ ս̃բ հաստատեա՛ յիս ա̃ծ, և հոգի
ուղիղ նորոգեա՛ 'ի փորի իմում:
Մի՛ ընկենուր զիս տր̃ յերեսաց քոց, և
զհոգի քո ս̃բ մի՛ հաներ յինէն:
Տո՛ւր ինձ ցնծուի̃ փրկուե̃ քոյ, և հոգւով
պետուե̃ քոյ հաստատեա՛ զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո, և ամբարիշտք առ քեզ դարձցին:

Փրկեա զիս յարենէ ա̅ծ ա̅ծ փրկութե̅ն իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութե̅ն քում:

Տէր եթէ զշրթունս իմ բանաս բերան իմ երգեսցէ զօրհնութիւն քո:

Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս ոչ հաճեցար:

Պատարագ ա̅յ հոգի խոնարհ, զսիրտ ս̅բ և զհոգի խոնարհ ա̅ծ ոչ արհամարհէ:

Բարի' արա տ̅ր կամօք քով զսիոն, և շինեսցին պարիսպքն երուսաղէմի:

Յայնժամ հաճեսցիս ը̅ պատարագս արդարութե̅ն. յորժամ ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս:

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն:

---

ող. Բանդ որ 'ի հօրէ իջեալ: Որ յա-
ա̅ծ. բարբառոց ես անբո: Որ 'ի նախնումն:

դձ, Որ ՚ի հրեղէն զօրաց: Երևելով
հողեղինաց: Անճառելի տնօրէն:

---

դձ. Որ աւետաւոր քում: Որ կոչեցեր
մարգարէիւք: Որ զփառս տաճա

---

աձ. Հայր բազումողորմ: Տէր որ զլծա
յար: Տէր որ դարձուցեր զմաքսա

---

աձ. Տէր որ զգըլթունդ: Որ ՚ի ձեռն ծու:
Որ սօքօք լուսաւորեցեր մկրտութ

---

աձ. Որ ստեղծմամբ էր: Որ շնորհօք
սուրբ: Որք հաղորդեցան մարմնոյ:

---

աձ. Ժողովեալքս ՚ի յիշատակ: Երկիր
պագեմք առաջի: Զորս հոգւով

---

Քարոզ՝ ընդ Ուղղամտայն:

Երկրպագեմք քեզ տէր ած մեր՝ ան-
ցեալքս ընդ երկարուն գիշերս. զա-

կանխեալքս ՚ի տեղւոջ խոստովանութ. մատուցանեմք զառաւօտու աղօթս մեր։ Զքեզ տէր օրհնեմք և փառաւորեմք, և զքէն տէր գոհանամք. որ արժանի արարեր զգիշերս խաղաղութ. անցուցանել և հասանիլ ՚ի ժամ առաւօտուս։ Արժանաւորեա՛ զմեզ տէր անձառ խոստմանց քոց զոր խոստացար սիրելեաց քոց Ճշմարիտդ ած՝ յս քս տէր մեր. կեցո՛ և ողորմեա՛։ Ողորմեաց մեզ տէր ած մեր ըստ մեծի ողորմութ. քում՝ ասասցուք ամենեքեան միաբանութբ։ Տր ողորմեա՛, տր ողորմեա՛. տր ողորմեա՛։

### Մաղթանք Յարութեան։

Ողորմած՝ գթած՝ Ճշմարիտ՝ որ մեծի յարութն քի այ մերոյ, վայելէ փառք իշխանութի և պատիւ. այժմ և։

### Մաղթանք Պահոց։

Ողորմութբ և գթութբ քով. լու՛ր մեզ տր և ողորմեա՛. ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր։ Արժանաւորեա՛ գոհութբ

փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգին. այժմ և միշտ:

### Մաղթանք Մարտիրոսաց.

Բարեխօսութ̄բ և աղօթիւք սրբոց մար- տիրոսացն, որոց այսօր է յիշատակ՝ և ա̄մ սրբոց քոց. լո՛ւր մեզ տ̄ր և ողոր- մեա՛. ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր: Արժանաւորեա՛ գոհութ̄բ փառաւորել զՀայր և զՈրդի և:

### Ալէլուիա ալէլուիա:

Օրնեցէք զտէր յերկնից. օրհնեցէք զնա ՚ի բարձունս:

Օրհնեցէք զնա ա̄մ հրեշտակք նորա. օրհնեցէք զնա ա̄մ զօրութ̄ք նորա:

Օրհնեցէք զնա արեգակն և լուսին. օրհ- նեցէք զնա ա̄մ աստեղք և լոյս:

Օրհնեցէք զնա երկինք երկնից, և ջուրք որ ՚ի վերոյ քան զերկինս, օրհնեցէք զանուն տեառն:

Զի նա ասաց և եղեն, հրամայեաց և

հաստատեցան։

Կացոյց զնոսա յաւիտեանս յաւիտենից. սահման եդ՝ և ո՛չ անցանեն։

Օրհնեցէք զՏէր յերկրէ՝ վիշապք և ամ՟ խորք։

Հուր և կարկուտ՝ ձիւն և սառն՝ հողմ և մրրիկք, որք առնեն զբան նր՟։

Լերինք՝ և ամ՟ բարձունք՝ ծառք պտղաբերք և ամ՟ մայրք։

Գազանք՝ և ամ՟ անասունք. սողունք, և ամ՟ թռչունք թևաւորք։

Թագաւորք երկրի և զօրք ժուրեանց. իշխանք և ամ՟ դատաւորք երկրի։

Երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք՝ օրհնեցէք զանուն Տեառն։

Բարձրացաւ անուն նր՟ միայն. խոստովանութի՟ նմա յերկինս և յերկրի։

Բարձր առնէ զեղջիւր ժողովրդեան իւրոյ. օրհնութի՟ նմա յամ՟ սրբոց նր՟. յորդւոցն իսրայէլի ժողովրդեան որ մերձէ առ նր

Օրհնեցէք զՏէր յօրհնութի՟ ՚ի նոր.

օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց։
Ուրախասցի Իսրայէլ յարարիչ իւր, որ-
դիք Սիօնի ցնծասցեն ՚ի թագաւորն իւ-
րեանց։
Օրհնեսցեն զանուն նր̅ օրհնութ̅բ. սաղ-
մոսիւք և օրհնութ̅բ սաղմոս երգեսցեն
նմա։
Հաճի տէր ընդ ժողովուրդ իւր ո̅ք. և
բարձր առնէ զհեզս ՚ի փրկութ̅։
Պարծեսցին ս̅բք փառօք՝ և ցնծասցեն
՚ի հանգիստս իւրեանց. և բարձր արաս-
ցեն զա̅ծ բերանօք իւրեանց։
Սուր երկսայրի եա ՚ի ձեռս նոցա, առ-
նուլ զհատուցումն ՚ի հեթանոսս, ՚ի
յանդիմանութիւն ժողովրդոց։
Ի կապել զթագաւորս նց̅ կապանօք.
զփառաւորս նց̅ ձեռնակապօք երկա-
թեօք։
Առնել նց̅ դատաստանս ըստ գրոց. և
փառք այս են ա̅մ սրբոց նորա։
Օրհնեցէք զա̅ծ ՚ի սրբութ̅ն նր̅. օրհ-

նեցէք զնա ՚ի հաստատութեան ՚ի զօրութեան նորա։

Օրհնեցէք զնա ՚ի զօրութեան նր. օրհնեցէք զնա ՚ի բազում մեծութեան նր։

Օրհնեցէք զնա ՚ի ձայն օրհնութեան. օրհնեցէք զնա սաղմոսիւք և օրհնութք։

Օրհնեցէք զնա ցնծութբ, գովեցէք զնա ուրախութեամբ։

Օրհնեցէք զնա ՚ի բանս քաղցր. գովեցէք զնա ՚ի բարբառ լսելի։

Օրհնեցէք զնա ՚ի ձայն գոհութեան. ամ հոգիք օրհնեցէք զտէր։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն։

---

Դարձան Յարութեան։ աձ։

Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին կանայքն ՚ի գերեզմանն. ՚ի խնկել զանապական մարմինն։

Եւ գտին զվէմն բարձեալ ՚ի դրանց գերեզմանին. և լուեալ բարբառ ՚ի հր-

հրեշտակէն. եթէ յարեաւ քս̄ և խափա-նեաց զմահ:

Եւ համբերեալ քո սէր առաքելոցն և տըւեալ ողջոյն կենդանարար. առաքե-ցեր զնոսա 'ի փրկուե̄ն տիեզերաց:

Դարձուածն Մարտիրոսաց: ռձ:

Ժողովեալքս 'ի յիշատակս սրբոց մար-տիրոսացն. միաբանութ̄բ երգելով. օրհնութ̄ի 'ի բարձունս երկնաւոր Թագաւորին:

Քանզի ի հեղմանէ արեան սոցա պար-տեցաւ Թշնամին. և մեծարեալ պարծի սիոն երգելով. օրհնութ̄ի 'ի բարձունս երկնաւոր Թագաւորին:

Դասակցելոցն ընդ զօրս վերին զը-ւարթնոցն. յիշատակաւ բերկրեալ 'ի սրբութ̄ի սոցա երգեսցուք. օրհնութ̄ի 'ի բարձունս երկնաւոր Թագաւորին:

Դարձուածն պահոց: ռձ:

Տէր որ 'ի վերայ քերովբէից փառաբա-նիս. քաղցրութ̄բ խոնարհեալ ընկալ զաղաչանս մեր:

Տէր որ շնորհեցեր զողորմութի ազգի մարդկան. քաղցրութբ խնամարհեալ ընկալ զաղաչանս մեր:

Տէր որ ուսուցեր մեզ յամ ժամ փառս տալ անուանդ քում սրբոյ. քաղցրութբ խնամարհեալ ընկալ զաղաչանս մեր:

Երգ ըհի տէր երկնային:

Փառք ՚ի բարձունս այ, և յերկիր խաղաղութի ՚ի մարդիկ հաճութի: Եւ օրհնութի քեզ ՚ի բարձունս. օրհնեալ ես տէր այ մեր. օրհնեմք զքեզ. և գովեմք զքեզ: Խոստովանիմք տէր զքեզ. և երկրպագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ. գոհանամք տէր զքէն վասն մեծի փառաց քոյ: Տէր թագաւոր սբդ երկնային՝ այ և հայր ամենակալ: Տէր և որդի հօր միածին յս քս և սբ ոգի. տէր այ գառն այ և որդի հօր. որ

առեր զմերս 'ի կուսէն. ողորմեցար.
բարձեր զմեղս աշխարհի: Եւ արդ ըն-
կալ զաղաչանս մեր. սուրբդ որ նստիս
ընդ աջմէ հօր ողորմեաց մեզ: Զի դու
միայն սբ՝ դու միայն բարձրեալ ես դու
միայն տէր մեր յս քս: տէր և հոգիդ
սուրբ. որ 'ի փառս այծ ընդ հօր. ամէն:

Եւ յամ ժամ օրհնեմք զքեզ. տէր և
գովեմք զանուն սուրբ քո՝ յաւիտեան
և յաւիտեանս յաւիտենից: Արժանի
արա տէր զօրս զայս խաղաղութք. և
առանց մեղաց պահեա զմեզ: Օրհնեալ
ես տէր այծ հարցն մերոց. գովեալ և
փառաւորեալ է անուն սուրբ քո յաւի
տեանս ամէն: Օրհնեալ տէր ուսո ինձ
զարդարութիս քո. օրհնեալ տէր ուսո
ինձ զարդարուխս քո. օրհնեալ տր ուսո
ինձ զարդարուխս քո: Տէր ապաւէն ե-
ղեր մեր յազգէ յազգ: Ես աղաչեմ
տէր ողորմեա ինձ. և բժշկեա զանձն

իմ. ես մեղայ քեզ: Ցո՛յց մեզ տր̅ զո-
ղորմութի̅ քո. և զփրկութի̅ քո տո՛ւր
մեզ: Տէր ողորմութի̅ քո յաւիտեան.
զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ:
Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի. ուսո՛
ինձ առնել զկամս քո, զի դու ես ա̅ծ
իմ: Ի. քէն է տէր աղբիւր կենդանութե̅
և լուսով երեսաց քոց տեսանեմք ըզ-
լոյս: Ձգեա՛ զողորմութի̅ս քո, որք
ճանաչեն զքեզ տէր:

## ԱՂՕԹՔ:

Փառք պատիւ և երկրպագութի̅ ՚ի բար-
ձունս հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ.
այժմ և միշտ և:

---

## ԵՐԳ ՅԱՐՈՒԹԵԱՆ:

Զյարութի̅ զփրկչին օրհնեցուք. ըզ-
փրկչին մերոյ օրհնեսցուք զյարութի̅.
Յարեաւ ա̅ծ. և ցրուեսցին թշնամիք
նորա:

Երգ Մարտիրոսաց։

Գործեսցեն սուրբքն փառօք. և ցնծասցեն ՚ի հանգիստ իւրեանց։

Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր. յօրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց։

Երգ պահոց։

Լոյս տուր տէր աչաց իմոց զի մի՛ երբէք ննջեցից ՚ի մահ։

Մի՛ ասասցէ թշնամին, թէ յաղթեցի նմա. կամ նեղիչք իմ ցնծասցեն, թէ ես սասանեցայց·

Քարոզ՝ Կիրակամտից, Կիւրակէից, և Յունանց։

Ասասցուք ամենեքեան միաբանութ̄բ.

Տէր ողորմեա՛։

Վասն խաղաղութ̄ն ամ̄ աշխարհի և հաստատութ̄ն սրբոյ եկեղեցւոյ, զտ̄ր աղաչեսցուք։

Վասն ամ̄ սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց, զտէր աղաչեսցուք։

Վասն հայրապետին մերոյ տն (այս ա-
նուն) կենաց՝ և փրկութ հոգւոյ նորին,
զՏէր աղաչեսցուք։

Վասն վարդապետաց՝ քահանայից՝ սար-
կաւագաց՝ դպրաց, և ամ ուխտի ման-
կանց եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք։

Վասն բարեպաշտ թագաւորաց և մեծա
մեծ իշխանաց՝ զօրավարաց և զօրաց
նոցին, զՏէր աղաչեսցուք։

Վասն զի տէրն ամենակալ հնազան-
դեցուսցէ առաջի նոցա զամ պատե-
րազմունս թշնամեաց, զՏր աղա։

Յաղագս հարց և եղբարցն մերոց՝ որք
՚ի գերութ են և ՚ի չար ծառայութ, զՏր
աղաչեսցուք։

Յաղագս ճանապարհորդաց և նաւորդաց՝
խաղաղութ հասանել ՚ի նաւահանգիստն
բարութ, զՏէր աղաչեսցուք։

Յաղագս հիւանդաց և ամ վշտացելոց
փութապէս առողջութ, զՏր աղա։

Յաղագս բարեխառնութ օդոյ՝ անձրևաց

քաղցրուն, և պտղոյ առատուն, զՏ՟ր
աղաչեսցուք:

Յաղագս ուխտաւորաց և պտղաբերից ՚ի սուրբ եկեղեցի ք՟ո, զՏ՟ր աղա:

Եւ Յաղագս այնոցիկ, որք մատնեալք են ՚ի ձեռս անօրինաց վասն անուանն ք՟ո, զՏէր աղաչեսցուք:

Յաղագս հոգւոյն հանգուցելոց, որք ճշմարիտ և ուղիղ հաւատով ՚ի ք՟ս ննջեցին, զՏէր աղաչեսցուք:

Յաղագս փրկելոյ զմեզ տեառնէ՟ յերեւելի և աներեւոյթ թշնամւոյն, զՏէր աղաչեսցուք:

Մաղթանք:

Բարեխօս ունիմք սուրբ զՄարիամ զԱ՟ծածինն զփառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյսն, սուրբ զՅովհաննէս մկրտիչն, սուրբ զՍտեփաննոս նախավկայն, սուրբ զԱռաքեալսն և ըզՄարգարէսն, զարի և զյաղթօղ ք՟ո զվկայսն: Եւ զմեծ խոստովանօղն ք՟ո

զՀայրապետն մեր զսուրբն Գրիգորիոս
Լուսաւորիչն հայաստանեայց աշխարհի:
Յիշեսջիք և զմեզ սուրբս և զնոքօք,
զտէր աղաչեսցուք:

Զառաւօտս լուսոյ և զառաջիկայ օրս
խաղաղութի անցուցանել՝ հաւատով ՚ի
տեառնէ խնդրեսցուք:

Զհրեշտակ: Զքաւութ: Զորբոյ: Եւ
ևս միա: Զանձինս: Ողորմեաց:

Քարոզ՝ Ննջեցելոց յիշատակի, և աւետեաց, և
փոխման սուրբ աստուածածնին, և Տեառն
ընդ առաջին:

Մայր ու. սքանչելի Լուսոյն որ զածն
ամ՝ յաւիտենից յորովայնի քում՝ կրեցեր
և ցնծութի աշխարհի ծնար զԲանն Ած.
աղաչեմք:

Մայր սուրբ բարեխօսեա:

Աղաչեա վասն մեր զա ՚ի քէն_ըղ-

մարմնացեալն տ̃րդ. որ խոնարհեցաւ 'ի
հայրական ծոցոյ. էառ մարմին ըստ մարդ-
կային բնութեան՝ առնել խաղաղութի̃ յեր-
կինս և յերկրի. աղաչեմք։

Աղաչեմ։ Ներել մեզ անտես առնել ըզ
յանցանս մեր. և տալ օգնականութի̃
ընդդիմակայ լինել հակառակամարտիցն
'ի պատերազմի. աղաչեմք։

Աղաչեմ։ Զի լռեսցեն պատերազ-
մունք. դադարեսցեն յարձակմունք
թշնամեաց. տնկեսցի սէր և արդարութի̃ 'ի
յերկրի. աղաչեմք։

Աղաչեմ։ Անցուցանել յերկրէ մերում
զքաղցր բղխումն աղբերեաց զառատ
պտղաբերութի̃ բուսոց և տնկոց. առ 'ի
զուարճալի լինել ըստ հարկաւոր պէ-
տոյից մերոց. աղաչեմք։

Աղաչեմ։ Զի միաբանեսցէ զեկեղեցի
իւր սուրբ. շինեալ 'ի վերայ հիման ա-
ռաքելոց և մարգարէից. պահել անա-
րատ մինչև յօր երևելոյ գալստեան

խորոյ. աղաչեմք:

Աղաչեմ վասն մեր սրբուհի զմիածին քո զորդին. և վասն հոգւոյն համագունոյն լոց՝ ընդունել յարքայութին երկնից. և տալ մասն և բաժին ընդ սուրբս ամենայն աղաչեմք:

Յիշեա տէր և ողորմեա:

Եւ ևս առաւել զյորդորումն սիրոյ և զգործս բարեաց պարգևել մեզ խընդրեմք:

Տուր մեզ տէր աստուած:

Զանձինս մեր և զմիմեանս տեառն:

Քեզ տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեաց մեզ տէր այ մեր ըստ մե:

Տէր ողորմեա. տէր ողորմեա. Լուր մր և ողորմեա:

---

Քարոզ Պահոց:

Փառաւորեսցուք զամենակալն այ ըզհայր տեառն մերոյ յի քի, գոհանալով զնմանէ՝ որ պահեաց զմեզ խաղաղութ

'ի գիշերիս յայսմիկ: Եւ առաջնորդեաց մեզ 'ի խաւարէ 'ի լոյս. 'ի մահուանէ 'ի կեանս. յապականութենէ յանապականութիւն. յանգիտութենէ 'ի գիտութիւն ճշմարտութեան իւրոյ: Աղաչեսցուք և խնդրեսցուք 'ի նմանէ զի զերկարութիւն տունջեանս խաղաղութեամբ և զամենայն մնացորդս զուարթութեամբ արասցէ անցուցանել 'ի մէնջ: Եւ պարսպեալ պահեսցէ զժողովուրդս իւր ամենայն զօրութեամբն. որ 'ի վերայ ամենայնի բարերարութեամբն իւրով իշխանութեան ունի: Ամենակալ տէր աստուած մեր կեցո և ողորմեա: Զառաւօտս լուսոյ և զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով 'ի տեառնէ խնդրեսցուք: Զհրեշտակ խաղաղութեան պահապան: Զքաւութիւն և զթողութիւն յանցանաց: Զսուրբ խաչն մեծ և կարող զօրութիւն: Եւ ևս միաբանեալ: Զանձինս: Ողորմեաց:

## Աղօթք:

Գոհանամք զքէն տէր աստուած մեր. որ երե-

ձեռն լուսով քով զուարճացուցի՛ր զմ՟ արարածս քո. խնկ իմանալի լուսով պատուիրանաց քոց՝ զամենեսեան լուսաւորեսցես զհաւատացեալս ՚ի քեզ։ Զօրացո՛ և զմեզ տէր՝ ՚ի պահպանութիւն պատուիրանաց քոց՝ ՚ի տունջեանս յայսմիկ և յամ ժամանակի։ Որպէս զի լուսաւորեալ մտօք՝ միշտ զհաճոյս քո արասցուք. և հանդերձեալ բարեացդ հասցուք ընդ ամ՟ ս՟բս քո։ Շնորհօք և մարդասիրութ՟ տն՟ մերոյ և փրկչին յի՟ քի՟. որում վայելէ փառք իշխանութի՟ և պատիւ. այժմ և միշտ և։

Խաղաղականին ամենեցուն։

Խաղաղութի՟ մեր և կեանք՝ որ ՚ի հօրէ առաքեցար՝ միածին որդի այ՟, տր՟ մեր և փրկիչ յս՟ քս՟։ Տո՛ւր մեզ զխաղաղութի՟ զոր շնորհեցեր սրբոց քոց առաքելոց. փչմամբ քո ՚ի նոսա զկենդանայուցիչ. և զամենազօր հոգին քո ս՟բ։

Որպէս զի և մեք խաղաղացեալք յա՛մ աշխարհական սահեցմանց՝ լիցուք տաճար և բնակարան ա՛ծային շնորհացդ. և գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և ս՛բ հոգւոյդ ք՛ս ա՛ծ մեր. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից:

---

Եւ ասէ սուրբն աստուած ըստ պատշաճին:

Յաւուրս Աւետեաց, Ծննդեան, և Ընդառաջեան զայս ասա:

Սուրբ ա՛ծ. ս՛բ և հզօր ս՛բ և անմահ որ յայտնեցար վ՛ս մեր. ողորմեա՛ մեզ:

Քառասնօրէայ գալստեանն Քրիստոսի, և Ծաղկազարդին:

Սուրբ ա՛ծ. որ եկիր և գալոց ես. ող:

Ուրբաթու Մատնութեան գիշերին:

Ս՛բ ա՛ծ. որ մատնեցար վ՛ս մեր. ողոր:

Ուրբաթու Ճաշուն՝ և յամենայն տօնից սրբոյ խաչին և եկեղեցւոյ, այլ և յաւուրս պահոց:

Ս՛բ ա՛ծ. որ խաչեցար վասն մեր. ողոր:

Ուրբաթու երեկոյին, և շաբաթու գիշերին

Մի̃ ամծ. որ թաղեցար վն մեր. ող:

Զատկի և ամենայն յարութեան կիւրակէից:

Մի̃ ամծ. որ յարեար ՚ի մեռելոց. ողոր

Համբարձման Քրիստոսի:

Սուրբ ամծ. որ համբարձար փառօք առ Հայր ողորմեա մեզ:

Գալստեան Հոգւոյն սրբոյ:

Սուրբ ամծ. որ եկիր և հանգեար յառաքեալսն. ողորմեա մեզ:

Վարդավառին:

Սուրբ ամծ. որ յայտնեցար ՚ի Թաբօր լերինն. ող:

Փոխման սուրբ Աստուածածնին:

Սուրբ ամծ. որ եկիր ՚ի փոխումն մօր քո և կուսի. ող:

[illegible]

Փառաւորեալ և օրհնեալ միշտ ա̃ք կոյս ածածին մարիամ մայր քրիստոսի, մատո՛ զաղաչանս մեր՝ որդւոյ քո և աստուծոյ մերոյ:

Մաղթանք:

փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամ
վտանգից մերոց:

Քարոզ:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղա:
Վասն լսելի լինելոյ տեառն այ ձայնի
աղաչանաց մերոց՝ բարեխօսութբ սբ. Ածած
նին: Եւ իջանելոյ 'ի վերայ մեր ողոր-
մութե և գթութե ան այ: Ամենակալ տէր
ած մեր կեցո և ողորմեա:

Օրհնութի և փառք հօր և որդ:

Խաղաղականին աւետարան:

---

Եւ ապա ասասցեն չորսին յաւուր հերթակէն յա-
ռաջնորդ աւետարանին:

Եղիցի անուն տեառն օրհնեալ յայսմ
հետէ մինչև յաւիտեան:

Օրհնեցէք մանկունք զՏէր. և:

Տես 'ի Եր. 277:

Յաւուրս կիւրակէից ասա ընթերցեալ լինի Աւետարան Յարութեանն: Իսկ 'ի տօնս տէրունականս Սաղմոսք և Գիրք և աւետարանք ըստ ցուցակին:

Աւետարան ըստ Մատթէոսի: ԺԵ. 21:

Եւ ելեալ անտի Յս՟ գնաց 'ի կողմանս տիւրոսի և սիդոնի:

---

Աւետարան ըստ Մարկոսի: Է 31:

Եւ ելեալ միւսանգամ 'ի սահմանացն

---

Աւետարան ըստ Ղուկասու: Թ. 37

Եւ եղև 'ի վաղիւն մինչ իջանէին նոքա

---

Աւետարան ըստ Յովհաննու:

Նոյն դարձեալ 'ի կանա գալիլեցւոց՝ ուր

Երգ առաջնոյ ատար միաշաբաթին, և՛ ի խոր-հրդոց արարչութեանն, և՛ ի յարութեանն Քրիս-տոսի:

Նորաստեղծեալ բանն յանէից խօսք բանէ զերկինս երկնից. և զերկնային զօրս անմարմնոց իմանալեացն զուարթնոց. և ըզգոյլ ի տարերց քառից հակառակաց միաբանից. որով յաւէտ փառաբանի երրորդութիւն անճառելի:

Երեքսրբեան մի տէրութիւն միով բնութ ծնունն. Լոյսն որ անեղ արարչական ասացեր լինել լուսեղէն զօր և ծագեցեր յօրն առաջին միաշաբաթ կիրակէին. որով յաւէտ փառաբանի երրորդութիւն անճառելի:

Բարունօրէն բացատրեսցուք զծածկեալ խորհուրդըն ծանիցուք զի լոյսն անտես իմանալի մաքուր հոգւոց տեսանելի. ՚ի սոյն ծագեաց միաշաբաթ մեզ յարութեն սուրբ Ճառագայթ. եկայք փըրկեալք ընդ զուարթնոյն տուք օրհնութիւն յարուցելոյն:

Սերոց սիրով խոնարհեցար 'ի փրկութ՟ մեր մարմնացար. նովին մարմնովն խաչեցար 'ի գերեզման մահու եդար. այսօր յարեար մեծաբար 'ի հրեշտակաց քարոզեցար. եկայ.ք:

Երևեցար խընկաբերիցն յողջոյն կենացն ուրախալից. և 'ի լերինն գալիլեայ առաքելոց մետասանից. արժանաց՛ զմեզ ընդ նոսին զքեզ տեսանել յօրն վերջին. եկայ.ք:

Սիովնի որդիք զարթիք հարսին լուսոյ տուք աւետիք. եթէ փեսայն քո յարուցեալ յաղթեաց մահու իշխանութ՟. գայ պսակէ զքեզ փառօք եւ ընդ առաջ ընծայեալ զարդուք. երգեա՛ երգ նոր յարուցելոյն նորոգելոյ կենաց պըտղոյն:

---

Քարոզ հէ–բաղ–հէց ե ոչըոց աչըքա–նահ̃ան աօմէց

Խնդրեսցուք հաւատով միաբանութ՟ 'ի տեառնէ՝ զի զողորմութն զշնորհս

խոր արասցէ ՚ի վերայ մեր: Տէրն ամե-նակալն կեցուսցէ և ողորմեսցի: Կեցո՛ տր

Տէր ողորմեա՛. երեք:

Աղօթք:

Քում ամենազօր և հրաշալի յարուե̃դ-քս̃ ա̃ծ մեր՝ երկրպագանեն զօրք հրեշ-տակաց. զի դու միայն ունիս զանմա-հութի̃ բնակեալդ ՚ի լոյս անմատոյց: Եւ մեք հող եղէն արարածքս՝ խոնարհեալք երկիւղիւ երկրպագանեմք. զսուրբ և զհրաշալի և զյաղթօղ ՝զյարուի̃դ-քո օրհնեմք և փառաւորեմք: Եւ ընդ-երկնայինն զօրսն մատուցանեմք զօրհ-նութի̃ և զփառս՝ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ տէր մեր յս̃ քս̃. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես:

Իսկ յայլ աւուրս չէ Աստուածայայտնութեանն, և Զատկին, այլ ասեն 'ի Ճէ։

Օրհնեցէք մանկունք զՏէր. և օրհնեցէք զանուն Տեառն։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ՝ հետէ մինչև յաւիտեան։

Յարևելից մինչև 'ի մուտս արևու՝ օրհնեալ է անուն Տեառն։

Բարձր է 'ի վերայ ամ՝ ազգաց Տէր. և յերկինս են փառք նորա։

Ո՞վ է որպէս Տէր ած՟ մեր 'ի բարձունս բնակեալ. և զխոնարհս տեսանէ յերկինս և յերկրի։

Յարուցանէ զաղքատս յերկրէ. և բարձր առնէ զտառապեալս յաղբեաց։

Նստուցանէ զնոսա իշխանս ընդ իշխանս ժողովրդեան իւրոյ։

Բնակեցուցանէ զամուլն 'ի տան ուրախամիտ, ոպ՟ մայր որդւովք բերկրեալք։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն.

Քարոզ՝ զՆոյն Մտնջանին:

Վասն խաղաղութեան ամ աշխարհի, և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք: Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Տէր ողորմեա՛. երիցս:

Աղօթք:

Սուրբ ես Տէր Աստուած մեր հզօր և փառաւորեալ. որ նստիս 'ի կառս քրովբէականս և լոյս ծագես յարարածս քո: Լուսաւորեա՛ զմեզ Տէր 'ի ժամ առաւօտուս. որպէս զի 'ի ծագել լուսոյ տուընջեանն՝ ծագեսցի առ մեզ գութ մարդասիրութ քո: Հեռացո՛ 'ի մէնջ Տէր զխաբէութիւն սատանայի. և զբռնութիւն նորա խորտակեա՛ աղօթիւք և բարեխօսութեամբ ամ սրբոց: Արա՛ և զերկիրս պտղաբերս 'ի սնունդս ծառայից քոց: Յորոց հանապազ փառաւորեալ գովի ամենասուրբ երրորդութիւն. այժմ և միշտ և:

Խոչ ՚ի ձայն սրբոց Սաղմոսս այս ասի։

Սիրեցի՝ զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ՝ կարդացի առ նա։

Մաղթանք ՚ի ձայն ամենայն սրբոց։

Քրիստոս ած մեր՝ վասն խաչի քո պատուականի զխաղաղութին քո տուր մեզ Տէր։

Վասն սրբուհւոյ ածածնին, և յովհաննու կարապետին, և սրբոյն ստեփաննոսի նախավկային, զխաղաղութին քո տուր մեզ Տէր։

Վասն սրբոց քոց առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կուսանաց, միանձանց, և երկնային զօրացն, զխաղաղութին քո տուր մեզ Տէր։

Եւ վասն նախկին լուսաւորչացն մերոց թադէոսի և բարդուղիմէոսի, և սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին, և սրբոց

յակոբեանց երջանիկ առաքելոցն, և սրբոյն յակոբայ մկրտչին Հայրապետին մարութէի ճգնաւորին, և մելիտոսի եպիսկոպոսին, և գէորգայ զօրավարին։

Բարեխօսութեամբ յիշատակաւ և աղօթիւք սրբոյն (այս անուն) որոյ այսօր է յիշատակ, զխաղաղութիւն և զմեծ զողորմութիւն քո պարգևեա մեզ մարդասէր տէր։

Քարոզ Առաքելոյ, և անուանն Սրբոյ։

Սուրբ ճգնաւորօքն աղաչեսցուք զտէր որք զչարս պարտեցին, նեղութեան համբերեցին։ Լուսեղէն և երկնային անթառամ պսակս արժանի եղեն։ Աղօթիւք նոցա և բարեխօսութեամբ մեզ ողորմեսցի։ Ամենակալ տէր ած մեր կեցո և ողորմեա։

Աղօթք 'ի ժամ Առաքելոց. և Մարգարէից, և Հայրապետաց, և Վարդապետաց։

Որ ընտրեցեր և ընկալար զերանելի վկայսն քո (այս անուն) քն ած մեր. և հաղորդս արարեր զնոսա կամաւոր չար-

չարչարանաց քոց։ Արդ՝ բարեխօս առ քեզ ունիմք, որք աստ, և ընդ մեզ տօնեցերս ծէք եղեն։ Որով զի աղօթիւք նոցա և բարեխօսութեամբ խաղաղացուսցես զկեցաղաւարութիւնս մեր, փրկելով զմեզ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։ Շնորհեա մեզ տէր ըստ օրինակի նոցա կեալ և զվախճանն մեր կնքեա ուղղափառ խոստովանութեամբ ՚ի սոյն կենացն յաւիտենից։ Զի և մեք արժանի եղիցուք մտանել յերկնային խորանսն լուսոյ, և ժառանգել զպատրաստեալն ՚ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց զարքայութիւն։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորեսցուք զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

՚Ի տարգաւագ ճաշուապէտացն ասասցէս։

Յիշեա տէր զպաշտօնեայս քո։ Զծնօղս մեր։ Զվարդապետս։ Զեղբայրս։ Զընկերս։ Զկերակրիչս։ Զուխտաւորս։

Օ՛ ճանապարհորդս: Օ՛ հագուցիչս: ըՕ՛-վաստակաւորս: Օ՛ խոստովանօղս: Օ՛ ապաշխարօղս: Օ՛ պերճս: Օ՛ հեզանդս: Օ՛ նեղեալս: Օ՛ իշխանս: Օ՛ չարաչարս Օ՛ բարերարս: Օ՛ թշնամիս: Օ՛ ատելիս

Եւ որք պատուիրեցին մեզ հաւատով:

Յիշեա՛ տէր և ողորմեա՛:

Բարերար և բազումողորմ տէր՝ քո անմոռաց գթութեդ և անբաւ մարդասիրութեդ՝ յիշեա՛ զնոս՝ հաւատացեալս ՚ի քեզ, և ողորմեա՛ ամենեցուն: Օգնեա՛, և փրկեա՛ յուրաքանչիւր վտանգից և ՚ի փորձուէց: Արժանաւորեա՛ գոհութ փառաւորել զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգի. այժմ և միշտ և:

Աղօթք Անապատաւորաց, Ճգնաւորաց, և Կուսանաց:

Պսակիչ սրբոց քո, որ պսակես զսուրբըս քո, և առնես զկամս երկրպագածաց քոց, և նայիս սիրով և քաղցրութեամբ յարարածս քո: Լո՛ւր մեզ

յերկնից 'ի սրբութենէ քումմէ բարեխօսութեամբ սուրբ աստուածածնին, և աղաչանօք ամենայն սրբոց քոց, և որոց այսօր է յիշատակ։ Լո՛ւր մեզ տէր և ողորմեա՛. ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր։ Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Յիշեա՛ տէր զպաշ։ Խ ոյշ։

Բարերար և բազումողորմ աստուած։

Օրհնեալ տէր մեր յիսուս քրիստոս. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

## Աղօթք Մանասէի Թագաւորին:

Տէր ամենակալ Ած աբրահամու իսա-
հակայ յակոբայ՝ եւ զաւակի նց արդարոյ.
ամենակալ տէր՝ լո՛ւր զմեզ խմ:

Որ արարեր զերկին՝ եւ զերկիր, եւ զամ
զարդ նոցա. ամենա:

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի քո
փակեցեր զխորս, կնքեցեր ահաւոր եւ
փառաւորեալ անուամբ քով սրբով. ա:

Որ ամ ինչ սարսի եւ դողայ յերեսաց
ահի զօրութե քո. ամենա:

Անբաւ է մեծ վայելչութի փառաց սըր-
բութե քո. սաստիկ է բարկութի սպառնալեաց
քոյ ՚ի վր մեղաւորաց. անչափ եւ անքննելի
են ողորմութիք աւետեաց քոց. ամե:

Դու տէր բարձրեալ՝ գթած, երկայնա-
միտ, բազումողորմ. եւ զղջանաս ՚ի
վերայ չարեաց մարդկան. ամենա:

Դու տէր՝ ոչ եդեր ապաշխարութի՟ւն ար
դարոյն աբրահամու՝ իսահակայ՝ և յակո-
բայ, որք ոչ մեղան քեզ. ամէն։
Այլ եդեր ապաշխարութի՟ւն իմ մեղաւո-
րիս. զի մեղայ աւելի քան զաւազ ծո-
վու. և բազմացան անօրէնութիւնք իմ. ամէ։
Չեմ արժանի հայել և տեսանել զբարձ-
րութիւն երկնից 'ի բազմութենէ անօրէնութե՟
իմոյ. ամէն։
Կորացեալ եմ ես 'ի բազմութենէ կապանաց
երկաթեաց. և ոչ գոյ ինձ հանգիստ. ամէ։
Բարկացուցի զսրտմտութիւն, և չար առաջի
քո արարի. կանգնեցի պատկերս՝ որ խո-
նարհեցուցանեմ զծունկս սրտի իմոյ, և
հայցեմ 'ի քաղցրութենէ քումմէ. ամէ։
Մեղայ տէր մեղայ. և զանօրէնութիւնս իմ,
ես ինքն գիտեմ. ամէն։
Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն, թող ինձ
տէր. թող ինձ. և մի՛ կորուսաներ զիս
ընդ անօրէնութե՟ իմոյ. ամէն։

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ տէր. և մի
յիշեր զչարիսն իմ, և մի՛ պարտաւորեր
զիս իջեալս 'ի ներքոյ երկրի չարեօք. ամեն
Զի դու ած՝ ապաշխարողաց ես և յիս
ցո՛յց զբարերարութիւնդ քո, զի անարժան եմ
ամենա:

Կեցուցես զիս ըստ բազում ողորմութե
քում. և ես օրհնեցից զքեզ զամ աւուրս
կենաց իմոց. ամենա:

Զքեզ տէր օրհնեն ամ զօրութիւնք երկ
նից. և քո են փառք յաւիտեանս. ամէն:

փառք հօր և որդւոյ և:

Աղաչեմ և խնդրեմ 'ի քէն տէր՝ թող
ինձ զմեղս իմ:

Բազումողորմ տէր, ողորմեա ինձ:

Ած, քաւեա զիս զմեղաւորս:

Արարիչ իմ և յոյս իմ, գթա՛ յիս 'ի մեղու-
ցիս ծառայս, և ողորմեա ինձ բազմ մեղիս
Ամենօրհնեալ սրբուհի՝ և միշտ կոյս մծա
ծին մարիամ, բարեխօսեա առ տէր վն
իմ մեղաւորիս:

Ամ՟ ս՟բք ա՟յ. բարեխօսեցէք առ հայր
յ՚երկինս վասն մեր մեղաւոր

Ք՟ս որդի ա՟յ անախտական ընկալ զաղաչանս
մեր. զի 'ի քեզ են ապաւինեալ անձինք մեր:

Յաղթօղ զօրութ՟ ս՟բ և կենդանարար, և
պատուական խաչիւ քով տ՟ր պահպանեա՛
զմեզ:

Առաքեա՛ տ՟ր զհրեշտակ խաղաղութեան քո
որ եկեալ պահեսցէ զմեզ անխռով 'ի
տուէ և 'ի գիշերի:

Եւ մարդասիրութ՟ քո յիշեա՛ զմեզ տ՟ր,
յիշեա՛ զմեզ. յորժամ գաս արքայութ՟
քով, և ողորմեաց մեզ:

Քարոզ:

Եկեալք 'ի խոստովանութի՟ ապաշխա-
րութեան հաւատով զ յոյս միածնի որդւոյն
ա՟յ դիմեսցուք 'ի սիրտս մեր, խնդրելով 'ի
նմանէ զ քաւութի՟ և զ թողութի՟ յանցա-
նաց մերոց: Վ՟ զի նա ինքն է նախա-
խնամօղն մեծ յաւիտենական, որ եկն կա-
մաւ հօր 'ի փրկել զարարածս. և առաց

զխունկն լինել քաւիչ մեղաւորաց, յոյս ապաշխարողաց, շնորհելով զհանգիստ աշխատելոց, ընդունելով զծանրբեռնեալքս և զտաժանեալքս մեղօք յապաշխարութի քաւութե: Արդ եկայք ամ՟ք խոնարհեալ անձամբք, բեկեալ սրտիւք անկցուք և լացցուք առաջի տն՟ արարչին մերոյ, զի անցուսցէ 'ի մէնջ զյասուծն պատուհասի յանցանաց մերոց բարերարուն՟ն իւրով: Ամենակալ տր՟ ած՟ մեր, կեցո՛ և ողորմեա:

Աղօթք:

Տ՟Ր ած՟ փրկութե՟ մերոյ՝ որ ողորմած ես և գթած, երկայնամիտ՝ բազումողորմ և զղջանաս 'ի վերայ չարեաց մարդկան. որ ոչ կամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալ նր՟ 'ի չար ճանապարհէն և զկեալ նր՟: Դու տր՟ աստ մարդասիրութ՟դ քով մխիթարեա՛ զծառայս քո. և տուր սոցա տեղի ապաշխարութե՟. հաշտեա՛ մարդասիրութ՟բ քո՝ և արա՛ ընդ

սոսա անդամս եկեղեցւոյ քում սրբոյ։ Որպէս զի առողջացեալք հոգւով խոստովանութբ և ապաշխարութբ միայն յեկեղեցւի քո տր։ Եւ ընդ ժողովրդեան քում՝ քեզ հանդերձ զօրհնութի և զփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և։

Սաղմո. 5։

Բանից իմոց ունկն դիր տէր. և 'ի միտ առ զաղաղակ իմ՝։

Երգ Տեառն Ներսէսի ձայն երկրորդ աւուրն արարչութեան, և ձայն երկնային զօրացն։

Արարչական բանին հրամանն՝ 'ի յերրորդումն աւուր սկզբան. զջուրսն 'ի ջուրսըն բաժանեալ՝ հաստատութբ պարունակեալ. որով զաշխարհս հողեղէնս անջրպետեալ 'ի հրեղինաց. ընդ նոսին որդիք լուսոյ տուք օրհնութի երրեակ լուսոյ։

Ըռաչմաչեայ հոյլք քրովբէից երեքսր-
բեանց սրովբէից. աղօթք անեղ էութեան
համագոյ երրորդութեան. բարեխօս լերուք
առ Տէր վասն մանկանց եկեղեցւոյ. ընդ:

Գերագոյն իշխանութիւնք՝ և անփոփոխ միշտ
տէրութիւնք. անյաղթելի որք զօրութիւնք՝ 'ի
յարարչին փառաւորութիւն. աղաչեցէք զՏէրն
ողորմած՝ անտես չառնել զգործս ձե-
ռաց. ընդ. նոսա:

Դասք անմարմնոցդ պետութեանց՝ հրեշ-
տակապետքդ բարձրութեանց. հոգիք հրե-
ղէնք և սպասաւորքդ՝ հրեշտակաց գնդ-
ւորութիւնք. մաղթեցէք զՏէրն որոց՝ վասն
մարդկան երկրաւորաց. ընդ. նոսա:

Երկնաւորաց դասուց վերնոյ՝ օրհնաբա-
նից քոց զուարթնոց. քաղցրացի առ
քեզ կլծած՝ որ վասն մեր ձայն մաղթա-
նաց. զորս և տացես մեզ պահապան՝ յայսմ
հետէ մինչ'ի վախճան. ընդ. նոսա:

Զօրութեանց և տէրութեանց՝ իշխանութեանց և պե-
տութեանց. և ամենայն անուանելոց՝ որք 'ի յեր-

կենս պաղատանօք. ընկա՛լ Քս ողորմութ՟ զմեզ յօր մահու եւ յարութ՟. Է՟ նուագն օրհնել հոգւով. զՔեզ ընդ Հօր փառաւո-րելով:

Որգ ձայն երրորդ աւուր արարչութեանն, եւ ձայն երրորդին դարուն. եւ ՚ի Յովհաննէս Նա-խակարապետն:

Լուսական բանն որ Է Հօր՝ արարչակից եւ համագոր. յերրորդ աւուր զջուրսն զա-տոյց՝ զբոյսս եւ զտունկս բղխեցոյց. իսկ ՚ի յերրորդ դարուն դարձեալ՝ զջուրյն հեղեղ ցամաքեցոյց. զնոյ տապանաւն իւր ապրեցոյց՝ զկենդանեաց սեռս ամենեցուն տուք օրհնութ՟ անձառ Լուսոյն. Հօր եւ որդւոյ եւ սուրբ հոգւոյն:

Ընդ ծառոց երկրի զգալեաց՝ տնկեաց եւ զտունկս իմանալեաց. զհեղեղ մե-ղայն ցածուցեալ՝ զդաստ արդարոց բազմացուցեր. յորոց եւ մեծն ՚ի ծնունդս կանանց միջնորդ շնորհաց եւ օրինաց. տուք օրհ:

Թագաւորին երկնից զինւոր՝ արքայութեան
աւետաւոր. խնդրեմ գտնել ես 'ի սրտէ սա
'ի հովտէս տրտմականէ. յուխտեն լսեղին
տէրունական 'ի խոստացեալն որդւոց
մարդկան. տուք օրհ:

Ժառանգին հօր սպասաւոր՝ և յարգանդէ
երկրպագօղ. կարապետ և մկրտիչ՝ այնմ
որ մեղաց մերոց քաւիչ. լեր բարեխօս
առ նոյն գթած՝ ջնջել զգիր մեր յան-
ցանաց. տուք օրհ:

'Ի հօրէ լոյս ծագեցար՝ մեռել բնութես
կենդանարար. առաքեցեր յառաջընթաց
մեզ զյովհաննէս քարոզ կենաց. սորին
հայցմամբն ամենակալ զպաղատանս
մեր ընկալ. տուք օրհ:

Լուսաշաւիղ յերկինս ելին՝ հողանիւթեայ
մեզ հրեշտակին. արժանացո զմեզ ընդ նորին
նեղ և անձուկ ճանապարհին. զի հետևօղք
զուղւոյ նորին՝ հօր քոյ վերին օթևանին. և
երգեսցուք ընդ երջանկայն՝ որդւոց լուսոյ
քեզ երգս փառաց:

Երգ ձայն չորրորդ աւուր առաջնորդութեանն. և ձայն չորրորդի դարձուածն. և ձայն աւելեալ առաւօտացուցնին:

Խաւարն անցեալ և սկզբնածին հաւասարեցաւ լօրն առաջին. Լոյսն այն պայծառ լօր չորրորդին՝ արեգական նիւթ հաւաքեալ. լուսինն ՚ի տիպ լուսոյ ստեղծեալ և աստեղաց պարսլօրինեալ. որով օրհնի ստեղծօղն էից՝ ՚ի բանաւոր պաշտօնէից:

Ծածկեալ խորհուրդն ծանուցաւ՝ չորրորդ դարուն խաչակաւ. ՚ի չորրորդ օր դարձեալ հրեշտակն՝ ետ զաւետիսն կուսական. թէ Լոյսն որ ոչ բովանդակի՝ ՚ի քեզն մարմնով պարունակի. յօր օրհնեսցուք ազգք երկրածին տուք օրհնութի պտղոյ կուսին:

Կուսին նախնոյ մօրն Եւայի՝ յորմէ ադամահին պարտի. բարձան անէծքն արամական՝ քո ծնընդեամբ կոյս մարիամ. աղաչեա զքո միածին՝ Թողուլ զմեղս որդւոց նոցին. յօր օրհն:

Հարսն ընծայեալ յերկրէ յերկինս՝ յոր համբառնամք առ քեզ զհոգիս. յոր լսե լոյ քո զաւետիսն՝ խնդրեմ լինել մեզ լսելիս. զձայն աւետեաց քոյ միածնին՝ եթէ եկայք օրհնեալք հօր իմ. յոր օրհ:

Ձայնիւ առ քեզ տր պաղատիմք՝ և առաջի քոյ անկանիմք. աղաչանօք ածածնին շիջո՛ 'ի մէնջ զբոց հնոցին. տուր արտասուօք զմեղս ջնջել՝ և վերստին զմեզ նորոգել. յոր օրհ:

Ղեկավար Ճարտարապետ՝ անցեր ընդ ծով կենդանի անհետ. վերաբերեալ ընդ պետրոսի զմեզ 'ի յալեաց մեղաց ծովէս. պաղատանօք գերագունի անապական քում ծնողին. յոր օրհ:

---

Եւ ձայն հինգերորդէ ասաւր արարչութեանն եւ ձայն հինգերորդի դարձուն. եւ 'ի տօնս տեառ նական Ծննդեանն:

Համագոյեալ բանն 'ի հօրէ՝ յոր հինգերորդն հրամայէ. բղխել 'ի ջրոց սեռս

կայտառայ՝ և լծևաւորս օժականաց. իսկ
'ի դասուն հինգ մկրտին՝ յամբն և 'ի
ծովն իսրայէլ հին. տացուք հրաշէից ներ
գործողին՝ պատիւ և փառս անեղ բանին:
Մաքրապէս օրինակի՝ առաքելոյն քի.
որք 'ի ծովէն տիբերականն՝ 'ի յերկնային
կոչեցան. անցին ընդ ծով աշխարհական
և 'ի հողէն մկրտեցան. տացուք:
Յուրախութիւն անդրուական՝ 'ի հարսանի
սըն անապական. զձեզ առաքեաց հայրն
փառայ՝ հրաւիրատուք տրտմականաց.
որք հարսանեացն այն հայցեցէք՝ ը ձեզ
լինել մեզ պարակից. տացուք:
Նորոգօղք տիեզերաց՝ 'ի նախահօրն յան-
ցանաց. նորափետուր զարդարեցիք՝ զե-
կեղեցիս հեթանոսաց. պաղատեցէք առ
նոյն գթած՝ զմեզ նորոգել 'ի հնոյ մե-
ղաց. տացուք:
Շինօղ էիցս համայնից՝ արարածոց 'ի
յանգոյից. նոյն շինեցեր զեկեղեցի՝ վէմդ
'ի վերայ վիմին բանին: Ըեղին հիմունս

'ի նոր սիրտ՝ զմեզ յօգնեալ շինմամբ 'ի
նոյն. տայրուք:

Ուրախացոյց գնայիւք գետոյ՝ քաղաք 'ի
քէն շինեալ յո. յորմէ վտակք շնորհաց
հոսին՝ զոգիս մարդկան ոռոգանեն. ար-
բո՛ և մեզ 'ի ջրոյն կենաց՝ հայցմամբ
հոգւոյն մատռուակաց. զի բանաւոր եր
կիրս քո՝ պտղաբերյի 'ի փառս քո:

---

Երգ ժամու վեցերորդի աւուր արարչութեան. և
ժամու վեցերորդի աւուրն. և 'ի խաչելութեանն
Քրիստոսի:

Զհանդուրժեալ բնութե՛ն բարոյն՝ տնել
միայն զանձառ բարիս. այլ ստեղծեալ
զմարդ յիւր պատկերին՝ 'ի վեցերորդ
աւուրն. և 'ի յերրորդ ժամ զկողա
ծինն՝ 'ի յօգնութի ետ հողածնին. զորս 'ի
դրախտին ետ վայելել՝ բայց 'ի պտղոյն
մահու արգել:

Պապանձեալ առ դատողին՝ յետ յանցա-
նաց ադամն հին. զկինն պատճառ եդեալ

խաբման՝ և կենն զօձն դաւաճան. որով երկիրս այս անիծաւ՝ փուշ և տատասկ 'ի սմա բուսաւ. վճիռ մահու մարդոյն տուաւ՝ դառնալ 'ի հող ուստի առեղծաւ: Ջնջել փութայր հայրն փառաց՝ զգիր պարտեաց մեր յանցանաց. որով զգեցաւ որդին գթած՝ 'ի վերջ դարուն զմարմին մեղաց. հօր հաճութ 'ի մահ խաչին՝ եկն կամաւ 'ի յուրբաթին. գառն զենաւ 'ի հին զատկին՝ փոխան զառանցն օրինակին: Սահիւ լուսոյ պատուիրանին՝ արդարուն ճանապարհին. բարձրանալով քոյ 'ի խաչին՝ բարձրացուցեր զմեզ 'ի յերկինս. քո անպատում խոնարհութեամբդ՝ և կամաւոր խաչելութեամբդ. հաշտեայ 'ի մեզ տէր գթութեամբ և թող զմեղս ողորմութեամբ:

Սոսկալ էդ սերովբէից՝ և ահաւորդ քերովբէից. խոնարհեցար 'ի չարչարանս՝ չարչարեալ 'ի բնութեան մարդկան. 'ի խաչէն զմեղս սպաներ՝ և զդատակնիք մահու լուծեր. հաշտեայ ընդ մեզ:

Վեհագոյն բնութեանց էից և արարիչդ բոլորից. յորժամ ծագես զխաչ լդ նշան ՚ի գալստեան քո միւսանգամ. զերկրպագուս այժմ հաւատով՝ լուսաւորեա նորին լուսով. զի համաձայն խաչազգեցիկն զքեզ օրհնեմք յաւիտենից։

---

Երգ ժամն եօթներորդի աւուր արարչութեանն և ժամն եօթներորդի դարուն. և ՚ի խորհուրդ հանգստեանն աստուծոյ։

Տէր յետ ստեղծմանն արարածոց՝ հանգեար յեօթն օրն ՚ի գործոց. այն որ հանգիստ աշխատելոյ՝ և կամքն գործ է եղելոց. ուստի և մեզ յոյս հաստատուն ես հանգստեամբն շաբաթուն. թէ աստ գործել զգործս այ՝ անդ է հանգչել ընդ այ։ Բաբունաբար վարդապետիմք՝ յօրինակէ ան խրատիմք. որ ՚ի յերկրորդ արարչութեան՝ յետ կատարման տնօրէնութեան. յեօթներորդ օր հանգստեան՝ իջեր մարմնովդ ՚ի գերեզման. զկապեալ հոգիսն վերա-

ծեաց՝ զանձանց հանդիսան պարգեւեայ:

Յօղն որ 'ի քոյդ կողէ ցօղեալ՝ բժշկեսցէ զհանգուցեալսն. իջցէ 'ի հող մահու նոցին՝ և բուսուսցէ յօրն վերջին. կենդանարար ձայնիւդ քո՝ կոչեա զն՟ս 'ի կեանս քո. և դասեցո՛ ը՟ արդարոցն՝ երգել քեզ փառս ը՟ զուարթնոցն:

Խնծեալ զբնու՟ս կենաց ունօղ՝ դարձոյ յանցանքն 'ի մահու հող. խեկանմահիդ մտելոցն՟ շնորհեաց դարձեալ՝ զանմահու՟ն. զորս են ը՟ քեզ թաղել մահուամբ՝ աւազանին մկրտու՟ն. յարո ընդ քեզ քոյին փառօք՝ արեգական նըման լուսով:

Փայլին արդարքն յարքայու՟ն՝ և ճգնաւորքն 'ի հանգստեան. մարտիրոսքն պըսակին՝ և կուսանաց լապտերք վառին. դասեցո՛ տէր ընդ նոսին՝ որք քեզ ա՟ծ խոստովանին. արդարու՟ մի՛ դատեսցին այլ գթու՟ քո քաւեսցին:

Քոյ անպատում խոնարհու՟դ՝ որ թաղե

ցար մեռելոցն. և յարուցեր յորդւոց մարդկան՝ որք հաւատով 'ի քեզ անկան. 'յարո՛ և զմեզ արդարութբ՝ և զ'ննջեցելսն ողորմութբ. զի կենդանեաց բերանով տացեն քեզ փառս ը̃ հօր հոգւով:

---

Մաղթանք պահոց չէս արարչականին:

Խաչ քո եղիցի մեզ ապաւէն տէր յս՛ յոր-ժամ երեւիս փառօք հօր ը̃ ամպս լու-սաւորս: Յայնժամ մեք մի ամաչեսցուք յուսացեալքս 'ի քեզ, այլ զօրութբ քով մեծաւ բերկրեսցուք ը̃ աջմէ քումմէ ո՛չ զորդիս լուսոյ և որդիս տուընջեան:

Քարոզ:

Աղաչեսցուք զամենակալն ած, զի պահ-պանեսցէ զժողովուրդս իւր ը̃ հովա-նեաւ ս̃բ և պատուական խաչին իւրով 'ի խաղաղութե ամենակալ տր ած մեր, կեցո՛ և ողորմեա՛:

Աղօթք պահոց:

Օգնեա՛ մեզ տէր, օգնեա՛ մեզ ած փրկիչ

մեր վասն մեծի փառաց անուան քո. որ փրկեալ զմեզ, և քաւեալ զմեղս մեր վս անուան քոյ սրբոյ: Պարապեալ պահեա զառ 'ի քեզ զապաւինեալ և զ յուսացեալ ժողովուրդս քո՝ ընդ հովանեաւ սբ և պատուական խաչի քո 'ի խաղաղութե: Փրկեա յերևելի և յաներևոյթ թշնամեաց: Արժանաւորեա գոհութ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և միշտ:

---

Յիշեա տէր զպաշտօնեայս քո:

Բարերար և բազումողորմ աստուած.

Օրհնեալ տէր մեր յիսուս քրիստոս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես սուրբ եղիցի անուն քո:

Սարգաւագութեան հատուածոյ աղօթից աւետա-
գալի ժամուն:

Եղիցի անուն տեառն օրհնեալ յաւի-
տեան. զի յառաջ քան զարև է անուն
նորա:

՚Ի նա օրհնեսցին ամ ազգք երկրի. և
ամ ազինք երանեսցեն նմա:

Օրհնեալ տէր ած իսրայէլի՛ որ առնէ
սքանչելիս միայն. և օրհնեալ է անուն
փառաց նորա յաւիտեան. լցցի փառօք
նորա ամ երկիր. եղիցի եղիցի:

Փառք հօր և որդւոյ և հոգ:

Եւ ես խաղաղութ զտէր աղաչես:

Օրհնութի և փառք հօր և որդւոյ, և
հոգւոյն:

Նորգ աւետագալին:

Յարևելից մինչև ՚ի մուտս ՚ի հիւսիսոյ
և ՚ի հարաւոյ. ամ ազգք և ազինք
յօրհնուն նոր օրհնեցէք զարարիչն արա

լածոյ. որ ծագեաց զԼոյս արեգականն
այսօր յաշխարհս։

Ակնեղեցիք արդարոց՝ փառաբանիչք ա-
մենայն երրորդութեանն, յառաւօտս լուսոյ
զառաւօտս խաղաղութեան քն գովեսցէք ըն
Հօր եւ Հոգւոյն. որ ծագեաց զԼոյս գի-
տութեան խորոյ ՚ի մեզ։

Յորդորակ։

Յարեւելից յարեւմուտս մանկունք սիոնի
օրհնեսցէք միշտ անդադար զծագօղն
լուսոյ։

Ակնեղեցիք արդարոց եւ փառաբանիչք
բարեբանեսցէք որ ետ զիմաստս լուսոյ։

Փառք։

Յարեւելից մինչեւ ՚ի մուտս արեւու ընդ
ամ տեղիս քրիստոնէութ. ուր եւ կայ-
ցեն զանուն ամն սրբութ. նր աղօթիւք
նց եւ բարեխօսութ. մեզ ողորմեսցի։ Ուխ
տիւք զամծ աղաչեսցուք, զի նա փրկես
ցէ զմեզ ՚ի մեղաց եւ ՚ի ցանկութ. աշխար-
հի։ Ընկալցի զուխտս եւ զխնդրուածս

սրտից մերոց. և արժանի արասցէ զմեզ հաւատոց և պատուիրանաց իւրոց ընդ-տմ ոքս իւր: Ամենակալ տէր ած մեր կեցո՛ և ողորմեա:

Զաւաւուտս լուսոյ, և զառաջիկայ օրս խաղաղութ անցուցանել հաւատով ՚ի տնէ խնդրեսցուք:

Զհրեշտակ: Զքաւութ: Զսրբոց: Եւ ևս Զանձինս: Ողոր:

Աղօթս:

Յարևելից մինչև ՚ի մուտս արևու օրհնեալ ես տր. վն զի թագաւոր քաղցր ես. և անուն քո ահեղ է ՚ը ամ տիեզերս: Քաղցրացին սաղմոսերգութք մեր առաջի քո. եղիցին իբրաւունք յարգարուէ քումմէ ՚ի տկարութս մեր. և փառաւորեսցի ամենասբ անուն քո: Եւ մեք արժանի եղիցուք կալ ՚ի պատուիրանի քում, և քեզ երգել զօրհնութի և ըղփառս հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և միշտ և յաւիտ:

Խաղաղականին ամենեցուն

Քեզ մշտնջենաւոր՝ Տ՟ր յաւիտենական, որ ՚ի ստորին աշխարհս լոյս ծագեցեր, և լուսաւորեցեր զմեզ ՚ի խաւարային մեղաց մերոց. որ վ՟ն մեր ՚ի չափաւորութ՟ն եկիր անչափդ Տ՟ր. և հեղեալ ծաւալեցեր զշնորհս հոգւոյդ սրբոյ յարարածս քո։ Այժմ և յաւիտեանս ժամանակաց բարեբանեալ ես ամենամեծդ Տ՟ր, ընդ Հօր և ամենասուրբ հոգւոյդ. այժմ և։

---

Սաղմ. 99։

Աղաղակեցէք առ Տ՟ր ա՟մ երկիր. ծա
ռայեցէք Տեառն ուրախութ՟բ։
Մտէք առաջի ն՟ր ցնծութ՟բ. ծաներուք
զի նա է Տ՟ր Ա՟Ծ մեր։
Նա արար զմեզ, և ոչ մեք էաք. մեք
ժողովուրդք, և խաշն արօտի ն՟ր։
Մտէք ը՟ն դրունս ն՟ր խոստովանութ՟բ. և
օրհնութ՟բ ՚ի հարկս նորա։
Խոստովան եղերուք Տեառն, և օրհնե-

ցէք զանուն տեառն:

Քաղցր է տր, յաւիտեան է ողորմութիւն նր.
յազգէ մինչեւ յազգ ճշմարտութիւն նր:
փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ:

Ոտք:

Ճգնաւորք տր և ժառանգորդք երկնից արքայութե, որք փոխանակեալք զանցաւորս առիք զմշտ բարութիս. բարեխօսեցէք առ տր վս մանկանց եկեղեցւոյ: Նահատակք պանծալիք և սիրեցեալք ՚ի յերկնաւոր հօրէն. որք մկրտեցայք ի քն արեամբ ձերով ՚ի մահ խաչին. բա: Մարտիրոսք ցանկալիք և օծեալք հոգւոյն ճշմարտութե. որք յաղթեցիք հոգւով կարեաց և ցանկութեց. բարեխօս: Գովելիք աշխարհի, և բաղձալիք վերնոցն պետութեց. որք երանութե մասին հասիք քան զամ որդիս մարդկան. բա: Կամաւոր պտղք՝ մանկունք տիօք, և կատարեալք իմաստութբ որք փոխանակ կաթին արբիք զգինին զմայլեցուցիչ. բա:

Յորդորակ:

Ճգնաւորք ճշմարիտք վկայք Քի՛ բարեխօսեցէք առ Տր վն անձանց մերոց:
Նահատակք կենդանիք սիրողք Քի որք չարչարեցայք մարմնով վն անուան Տն:
Մարտիրոսք ցանկալիք մարդկան ըղձալիք, հայցեցէք 'ի սուրբ հոգւոյն տալ մեզ զբարիս:
Գովելիք վերնոց դասուց պարծանք աշխարհի՛ խնդրեցէք զխաղաղութիւն տալ եկեղեցւոյ:
Կամաւոր մբ պատարագք՝ հասակաւ մանկունք, հայցեցէք լինել և մեզ ձեզ պատկից:

Մաղթանք:

Աղաչեմք ողորմեաց Տր բարերար աղաչեմք ողորմեա՛ց. վն աղօթից սրբոց Ճգնաւորացն աղաչեմք ողորմեա՛ց:

Քարոզ:

Սուրբ Ճգնաւորօքն աղաչեսցուք զՏէր որք զչարան պատուեցին, նեղուեցան համ,

քերեյքին: Լուսեղէն և երկնային անթա-ռամ պսակոյն արժանի եղեն: Աղօ-թիւք նոցա, և բարեխօսութեամբ մեր ողոր-մեսցի: Ամենակալ տէր ած մեր:

Աղօթ.ք:

Սուրբ ես տէր, և 'ի սբս հանգուցեալ. և մեք ոք վկայիւքս աղաչեմք զքեզ բա-րեխօսութեամբ ոք ածածնին՝ և աղաչանօք ամ սրբոց քոց մի' մերժեր զմեզ յողոր-մութէ քումմէ, այլ կեցո՛ զմեզ աղօթիւք սոցին. զի դու ես բազումողորմ ած. և քեզ վայելէ փառք իշխանութի և պատիւ, այժմ և միշտ և:

Յիշեա՛ տէր զսպաշտօնեայս քո:

Բարերար և բազումողորմ աստուած

Սաղմոս. 62:

Ա՜ծ տէր իմ, ես առ քեզ առաւօտ առ-նեմ. ծարաւեցաւ առ քեզ հոգի իմ. քանիպատիկ եւս և մարմին իմ. և այլն:

Երգ:

Լոյս արարիչ լուսոյ առաջին լոյս բնա

կեալդ 'ի Լոյս անմատոյց՝ Հայր երկնաւոր՝ 'ի դասուց լուսեղինայն օրհնեալ'ի ծագել լուսոյ առաւօտուս ծագեա՛ 'ի հոգիս մեր զԼոյս քո իմանալի:

Լոյս 'ի լուսոյ ծագումն արեգակն արդար՝ անճառ ծնունդ հօր որդի, յառաջ քան զանուն քո գոլեալ ընդ հօր. 'ի ծա:

Լոյս 'ի հօրէ բղխումն աղբիւր բարուն Հոգիդ սբ ոյ՝ մանկունք եկեղեցւոյ ընդ հրեշտակս զքեզ բարեբանեն. 'ի ծա:

Լոյս երրեակ և մի անբաժանելի սբ Երրորդութի. զքեզ ընդ երկնայնոյն երկրածինքս միշտ փառաւորեմք. 'ի ծա:

Յորդորակ:

Անեղանելիդ ած Հայր ամենակալ, ընկալ զաղաչանս մեր քոյ պաշտօնէից:

'Ի հօրէ ծագումն անճառ արեգակն արդար, ծագեա՛ 'ի յանձինս մեր զԼոյսդ ողորմութեան:

'Ի հօրէ բղխեալ հոգի աղբիւր բարուն,

շնորհօք քո լցո՛ զմեզ յայսմ առաւօտուս:
Երեք անձինք և մի բնութիւն մի աստուածութիւն·
զքեզ խոստովանիմք յաւէտ սուրբ երրորդութիւն:

Մաղթանք:

Լուսովդ քո Քրիստոս ամենեքին լուսաւորեցաք, և 'ի նշան խաչի քո փրկչի հաւատացեալքս ապաւինեցաք: Լուր մեզ Աստուած փրկիչ մեր, տուր մեզ զխաղաղութիւն քո· և արա առ մեզ զողորմութիւն քո մարդասէր Տէր:

Քարոզ:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:
Փառաւորեսցուք զամենակալն Աստուած՝ որ ծագեաց զԼոյս առաւօտու յաշխարհս իւր. ծագեսցէ և այժմ զառատ ողորմութիւն իւր 'ի վերայ փառաբանչաց անուան իւրոյ: Ամենակալ Տէր:

Աղօթք:

Զառաւօտու զաղօթս, և զբանաւոր պաշտօնս՝ ընկալ ամենակալ ամենամեծդ Աստուած 'ի քո անապական և յերկնային խո-

բանաւ: Ծագեա՛ առ մեզ զարդարութիւն և զիմաստութիւն զլոյս քո. արա՛ զմեզ որդիս լուսոյ և որդիս տունջեան, որպէս զի 'ի գալ աւուրս երկիւղածութեան վարեսցուք զկեանս մեր. և առանց գայթակղութեան կատարեսցուք: Զի դու ես օգնական և փրկիչ մեր. և քեզ վայելէ փառք իշխանութիւն:

Սաղմոս 22:

Տէր հովուեսցէ զիս. և ինձ ինչ ոչ պակասեսցի. և այլն:

Երգ:

Զճանապարհ և ճշմարտութիւն և կեանք քո առաջնորդեա՛ հոգւոյ մերոյ յերկրէ ելանել յերկինս:

Դուռն կենաց մտից քո, մուծ և զմեզ առ Հայր քո և Հոգի՝ երգել միշտ ընդ փառս:

Յորդորակ:

Զճանապարհ բարի քո, և ճշմարտութիւն առաջնորդ հոգւոյ մերոյ յերկրէ 'ի յերկինս

Դուռն կենաց մոլոյ յս ամ՟ծ Ճշմարիտ, մուծ և զմեզ առ Հայրդ քո հոգւովդ սրբով:

## Մաղթանք:

ՏԷՐ ուղղեա՛ զգնացս մեր ՚ի Ճանապարհս խաղաղութեան. տէր ուղղեա՛ և առաջնորդեա՛ հոգւոց մերոց և ամ՟ն հաւատացելոց՝ գնալ յարդարութեան Ճանապարհն, և ՚ի կեանսդ յաւիտենից:

## Քարոզ:

Աղաչեսցուք զամենակալն ա՟ծ՝ զի յաջողեալ ուղղեսցէ զՃանապարհս ծառայից իւրոց ՚ի բարի և խաղաղութի՟: Ամենակալ տ՟ր ա՟ծ մեր կեցո՛ և ողորմեա՛:

## Աղօթք:

Առաջնորդ կենաց և պարգևիչ խաղաղութեան ք՟ն ա՟ծ մեր, առաջնորդեա՛ մեզ գնալ ՚ի Ճանապարհս քո արդարութե՟ և խաղաղութե՟ ժամանել ՚ի նաւահանգիստն կենաց և փրկութեան՝ շնորհօք ողորմութեան քոյ: Զի դու ես օգնական և փրկիչ մեր. և քեզ

վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և:

Աղօթք աւուրց պահոց. յորս պատարագ ո՛չ լինի:

Օրհնեալ ես տէր ած փրկիչ մեր՝ որ յամենայն ժամ ընդ մեզ ես, և ոչ երբէք թողուս 'ի ձեռանէ քումմէ զայնոսիկ՝ որք հաւատով և ճշմարտութեամբ կարդան առ քեզ: Աղաչեմք և խնդրեմք 'ի քէն տէր, ճանապարհորդակից լեր ծառայից քոց քոյին վերակացութեամբդ պահելով 'ի խաղաղութեան. և առաջնորդեա մեզ միասանգամ խաղաղութեամբ և խնդութեամբ հասանել յիւրաքանչիւր 'ի բնակութիւնս 'ի ք̄ս յ̄ս 'ի տէր մեր: Որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ տ̄ր մեր յ̄ս ք̄ս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես ս̄բ եղիցի:

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից երրորդ ժամուն:

Օրհնեալ որդին. որ ած ճշմարիտ. ամէն:

Սաղմոս. 50:

Ողորմեա՛ ինձ ած ըստ մեծի ողորմութեան
քում, ըստ բազում գթութեան քում քա-
ւեա՛ զանօրէնութիւնս իմ:
Առաւել լուա՛ զիս յանօրէնութենէ իմմէ.
և ՚ի մեղաց իմոց սուրբ արա՛ զիս:
Զանօրէնութիւնս իմ ես ինքն գիտեմ. և
մեղք իմ առաջի իմ են յամ ժամ:
Քեզ միայն մեղայ տէր. և զչար առա-
ջի քո արարի:
Որպէս արդար եղիցիս ՚ի բանս քո. և
յաղթեսցես ՚ի դատելն քո.
Անօրէնութեամբ յղացայ. և ՚ի մեղս ծնաւ
զիս մայր իմ:
Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր. զան-

յայտս և զծածկեալս իմաստութե՟ն քոյ յայտնեցեր ինձ։

Ցօղեա՛ զիս մշտկաւ, և սուրբ եղէց. լուա՛ և քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա՛ ինձ տ՟ր զցնծութի՟ և զուրախութի՟. և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո՛ զերեսս քո 'ի մեղաց իմոց. և զա՟մ անօրէնութի՟ս իմ՝ քաւեա՛ յինէն։

Զ՛ սիրտ ս՟ր հաստատեա՛ յիս ա՟ծ, և ըզ հոգի ուղիղ նորոգեա՛ 'ի փորի իմում։

Մի՛ ընկենուր զիս տ՟ր յերեսաց քոց. և զհոգի քո ս՟ր մի՛ հաներ յինէն։

Տո՛ւր ինձ ցնծութի՟ փրկութե՟ն. և հոգւով պետութե՟ն քո հաստատեա՛ զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամպարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա՛ զիս յարենէ ա՟ծ՝ ա՟ծ փրկութե՟ն իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութե՟ն քում։

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բե-

բան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք· բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Պատարագ Այ հոգի խոնարհ. զսիրտ մք և զհոգի խոնարհ՝ Ած ոչ արհամարհէ:

Բարի արա Տր կամօք քովք սիոնի, և շինեսցին պարիսպք երուսաղէմի:

Յայնժամ հաճեսցիս ը̃ պատարագս արդարութեան. յորժամ ուխտից պատարագս հանցեն ՚ի սեղան քո զուարակս:

փառք հօր,՝ և որդ: Այժմ՝ և միշտ և:

---

Երգ երրորդ ժամու առաւօտն ձայնի ողորմեալն:

Օրհնեմք զքեզ հայր անսկիզբն՝ էից էակ ՚ի յանգոյից. դարձեր ձեռօք նիւթ ՚ի հողոյ՝ և ստեղծեր զմարդ ՚ի պատկեր քո· զլուխն ոտից խոնարհեցաւ՝ զի զպատուիրան քո մոռացաւ. դարձեալ ասեմք ըստ անառակին՝ թէ հայր մեղայ քեզ ՚ի յերկինս:

Երկնաւորայ անքննելի եղեր մարդ-
կան տեսանելի. զգեցար պատկեր հողե
զինէ՝ պատկերդ հօր անփոփխելի. ելեր յեր
րորդ ժամ ՝ի խաչն՝ վն ադամայ նախա
ստեղծին. ընդ աւազակին քում խաչակ-
ցին՝ արժանացո՛ զմեզ դրախտին:

Թագաւոր Թագաւորայ՝ առատաբուղխ
հոգի շնորհաց. ժողովելոցն ՝ի վերնա-
տանն՝ առաքելոյն երկոտասան. ՝ի հրոյ
լեզուս երեւեալ՝ յոգիս նոյա վերանըս-
տար. Լուսյանուն քո ժողովելոցս՝ էջ
և առ մեզ յերրորդ ժամուս:

Մաղթանք:

Յամ ժամ աղաչանք իմ այս են՝ ՝ի մե-
ղաց իմոց ող. արա՛ գիս տր. և յօտարէն
պահեա՛ զծառայս քո մարդասէր տր:
Եւ ես խաղաղութե՛ զտէր աղաչեսցուք.
ընկալ կեցո՛ և ողորմեա՛:
Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և
հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և:

### Քարոզ։

Խնդրեսցուք հաւատով՝ ի տ՟նէ վ՟ն ճանա-
պարհորդաց հարց և եղբարց մերոց, որք
ի ծով և ի ցամաք գնասցեն. ո՟պ զի ա-
ռաջնորդեսցէ նց՟, խաղաղութ՟բ պահեսցէ
և տարեալ հասուսցէ յիւրաքանչիւր տե-
ղիս տ՟ր ա՟ծ մեր։ Վ՟ս զի նա ինքն է
առաջնորդ կենաց, և յոյս փրկութ՟ե. որ
յաջողէ ծառայից իւրոց խաղաղութ՟բ
հասանել ՝ի նաւահանգիստն կենաց և փր-
կութ՟ե։ Ամենակալ տ՟ր ա՟ծ մեր կեցո՛։

### Աղօթք։

Առաջնորդեա՛ մեզ տ՟ր ա՟ծ մեր, և ուսո՛
մեզ գնալ ՝ի ճանապարհս քո արդարութ՟.
պահեա՛ ՝ի խաղաղութ՟ զկեանս մեր, և
զգնացս ՝ի հաճոյս քո. ժամանեցո՛ զհո-
գևոր և զմ՝արմնաւոր ընթացս ծառայից
քոց անարատ ճանապարհաւդ յաւիտե-
նական ՝ի կեանսդ։ Շնորհօք միածնի քոյ
տ՟ն մերոյ և փրկչին յ՟ի ք՟ի, որ եղև
մեզ առաջնորդ կենաց և յոյս փրկութ՟են։

Ընդ որում օրհնեալ ես հայր ամենակալ հանդերձ կենդանարար և ազատիչ սբ. հոգւովդ. այժմ և։

Յիշեա տէր զպաշտօնեայս քո։

Բարերար և բազումողորմ ած։

Սաղմոս 22։

Տէր հովուեսցէ զիս և ինձ ինչ. ոչ պակասեսցի։

'Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս և առ ջուրս հանգստեան սնոյց զիս։

Դարձոյց զանձն իմ առիս, և առաջնորդեաց ինձ 'ի ճանապարհս արդարութեան վս անուան իւրոյ։

Թէպէտ և գնայցեմ 'ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց 'ի չարէ. զի դու տէր ընդ իս ես։

Ցուպ քո և գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս։

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան ակն յանդիման նեղչաց իմոց։

Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո

ոչ̃ անապակ արբեցոյց զիս։

Ողորմութի̃ քո տէր զհետ իմ եկեսցէ զամ̃ աւուրս կենաց իմոց, բնակել ինձ ՚ի տան տն̃ ընդ երկայն աւուրս։

Ցո՛յց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից, զի առ քեզ տր̃ համբարձի զանձն իմ։

Փրկեա՛ զիս ՚ի թշնամեաց իմոց տր̃. զի զքեզ ապաւէն ինձ արարի։

Ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի դու ես ած̃ իմ։

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ՚ի յերկիր ուղիղ։

Վս̃ անուանքոյ տր̃ կեցուսցես զիս արդարութ̃ քով հանցես ՚ի նեղութէ̃ զանձն իմ։

Ողորմութ̃ քով սատակեսցես զթշնամիս իմ, և կորուսցես զամ̃ նեղիչս անձին իմոյ. զի ես ծառայ քո եմ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութ̃ զտր̃ աղ̃։

Գոհաբանել ով̃ աղաչեսցուք զբարերար

հոգւյն ած և խնդրեսցուք զողորմութիւն 'ի
նմանէ. զի անցուսցէ 'ի մէնջ զցասումն
պատուհասի յանցանաց մերոց բարերա-
րութբն իւրով: Ամենակալ տէր ած մեր
կեցո՛ և ողորմեա՛:

Աղօթք:

Խաղաղութբ քով հոգւոդ սբ ած ճշմա-
րիտ՝ որ 'ի վեր է քան զամ՝ միտս և
զխորհուրդս, մխիթարեա՛ զամենեսին ծա-
ռայից քոց՝ ընդունելով զաղաչանս մեր
անցո՛ 'ի մէնջ զցասումն պատուհասի
յանցանաց մերոց բարերարութբ քով:
Ներեա՛ և լո՛ւր մեզ, քաւեա՛ և թո՛ղ
զմեղս մեր. արժանաւորեա՛ գոհութբ փա-
ռաւորել զքեզ ընդ հօր, և ընդ որդ-
ւոյ միածնի. այժմ և միշտ և յաւիտ-
եանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ տէր մեր յս քս. ամէն:
Հայր մեր որ յերկինս ես՝ սուրբ:

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից վեցերորդ ժամուն:

Օրհնեալ որդին ո̄ք ա̄ծ ճշմարիտ. ամէն

Սաղմոս. 50:

Ողորմեա՛ ինձ ա̄ծ ըստ մեծի ողորմութեան քում ըստ բազում գթութեան քում, քաւեա՛ զանօրէնութիւնս իմ. և այլն:

Մաղթ. Յա̄մ ժամու աղաչանք իմ այս են ՚ի մեղաց իմոց սուրբ արա՛:
Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչես:
Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ:

Քարոզ:

Վ՛ս հիւանդաց և ա̄մ վշտացելոց աղաչեսցուք զփրկիչն մեր ք̄ս. զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում. և բժշկեսցէ զախտս և զհիւանդութիւնս հոգւոց և մարմնոց ծառայից իւրոց. և կատարեալ առողջութ̄ հասուսցէ զամենն ՚ի

մշտնջենաւոր և յանախտ կեանս: Որ առաքեցաւ ՚ի հօրէ բժշկուլ ազգի մարդկան՝ միածին որդին քոյ. տէր մեր և փրկիչ

յ͞ս ք͞ս, կեցո և ողորմեա:

## Աղօթք.

Փարատեա զցաւս և բժշկեա զհիւանդութիւնս ՚ի ժողովրդենէ քումմէ տէր աստուած մեր, և շնորհեա ամենեցուն զկատարեալ առողջութիւն նշանաւ ամենայաղթ խաչիւ քով. որով բարձեր զտկարութիւնս ազգի մարդկան, և դատապարտեցեր զթշնամին կենաց և փրկութեան մերոյ: Դու ես կեանք մեր և փրկութիւն, բարերար և բազումողորմ աստուած, որ միայն կարող ես թողուլ զմեղս՝ և մերժել զախտս և զհիւանդութիւնս ՚ի մէնջ. որում յայտնի են պէտք կարեաց մերոց. պարգևիչդ բարեաց՝ պարգևեա զառատ ողորմութիւն քո ՚ի վերայ արարածոց քոց՝ ըստ իւրաքանչիւր պիտոյից, յորոց հանապազ փառաւորեմք զքեզ ամենեքեան երրորդութեանդ. այժմ և միշտ և

Յիշեա՛ տէր զպաշտօնեայս քո։
Բարձրեալ և բազումողորմ ած։

Սաղմոս. 50:

Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն. յաւուր չարի փրկէ զնա տէր։
Տէր փրկէ զնա և կեցուսցէ. երանելի առնէ զնա ՚ի վերայ երկրի. և ոչ մատնէ զնա ՚ի ձեռս թշնամեաց իւրոց։
Տէր օգնական է նմա ՚ի մահիճս ցաւոց իւրոց. և զամ անկողինս նր դարձուցանէ ՚ի հիւանդութենէ նորա։
Ես ասացի տր ողորմեա՛ ինձ. և բժշկեա՛ զանձն իմ, ես մեղայ քեզ։
Որ բնակեալ է յօգնութի բարձրելոյն, ը հովանեաւ այ յերկնից հանգիցէ։
Ասասցէ տն ընդունօղ իմ ես դու. ապաւէն իմ ած՝ և ես յուսամ ՚ի նա։
Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին և ՚ի բանից ՚ի խռովութենէ։
՚Ի թիկամէջս իւր ընկալցի զքեզ. և ՚ի հովանի թևոց նորա յուսասցիս։

Որ զէն շուրջ եղեալ զքեւ Ձիթաստանւոյն
Ո՛չ երկիցես դու յերկիւղէ գիշերի. եւ ո՛չ
՚ի նետէ՝ որ թռչի ՚ի տուէ:
Յիրէ՝ որ շրջի ՚ի խաւարի, ՚ի գայթակ-
ղութէ դիւէն ՚ի հասարակ աւուր:
Անկցին ՚ի կողմանէ քումմէ հազարք, եւ
բիւրք ընդ աջմէ քումմէ. եւ առ քեզ
ինչ ո՛չ մերձեսցին:
Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու. եւ
զհատուցումն մեղաւորաց տեսցես. զի
դու տէր յոյս իմ ես:
Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն.
զի ո՛չ հասցեն առ քեզ չարք. եւ տան-
ջանք մի՛ մերձեսցին ՚ի յարկս քո:
Հրեշտակացն իւրոց պատուիրեսցէ վն քո ՚ի
պահել զքեզ յամ ճանապարհս քո:
՚Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ. զի
մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո:
՚Ի վր իժից՝ եւ քարբից գնասցես դու. եւ
առոտն կոխեսցես զառիւծն եւ զվիշապն

Քանզի ի յիս յուսացաւ՝ և փրկեցից զնա
հովանի եղէց նմա զի ծանեաւ զանուն իմ
Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա. և
առ նմա եղէց ՚ի նեղութեան:
Փրկեցից և փառաւոր արարից զնա. եր-
կայն աւուրբք լցուցից. և ցուցից նմա
զփրկութիւն իմ:
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Քարոզ:

Եւ ևս խաղաղութեան զտէր աղաչ:
Խնդրեսցուք հաւատով ՚ի Հօրէ վասն քա-
ւութեան մեղաց, և թողութեան յանցանաց. փըր-
կելոյ զմեզ ՚ի վշտաց և ՚ի նեղութեանց.
իջանելոյ ՚ի վերայ մեր ողորմութեան և գթութեան
Տեառն Աստուծոյ ամենակալին. կեցո՛ և ողորմեա՛:

Աղօթք:

Հայր գթութեանց, և Աստուած ամենայն մխիթարութեանց
որ մխիթարես զմեզ յամենայն նեղութեան մերում
լուր և այժմ ձայնի պաղատանաց ծա-
ռայից քոց ընդունելով զաղաչանս մեր
անցո՛ ՚ի մէնջ զյասաւումն պատուհասի յան

յանաց մերոց բարեխօսութեամբ քով: Ներեա՛ և լո՛ւր մեզ. քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել ընդ քեզ ընդ որդւոյ, և ընդ սուրբ հոգ-ւոյդ. այժմ և միշտ և:

Օրհնեալ տէր մեր յս քս. ամէն:
Հայր մեր որ յերկինս ես՝ սբ եղիցի:

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից երե-կոյին ժամուն:

Օրհնեալ որդին սբ Այ ճշմարիտ. ամէն:

Սաղմոս 50:

Ողորմեա՛ ինձ Այ ըստ մծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քա-ւեա՛ զանօրէնութիւնս իմ. և այլն:

Սաղմոսք:

Յոմ ժամու աղաչանք իմ այս են՝ ի մեղաց իմոց սուրբ արա

Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Օրհնութիւն և փառք Հօր և Որդ։

Քարոզ։

Աղաչեսցուք զկենդանատու փրկիչն մեր քս, որ կամաւոր խաչելութեամբն իւրով զարարածս փրկեաց. և հեղմամբ արեան իւրոյ զթողութիւն շնորհեաց յուսացելոց իւրոց. ամենակալ տէր աստուած։

Աղօթք։

Ընկեալ առաջի քո բարերար և բազումողորմ տր՝ և աղաչեմք ամ սըրտիւք մերովք, և խնդրեմք զթողութի 'ի քէն. ով խոստացար ծառայից քոց և ասացեր. զոր ինչ խնդրիցէք հաւատով յանուն որդւոյ 'ի հօրէ՝ տացի ձեզ։ Շնորհեա և այժմ՝ հաւատացելոցս 'ի քեզ, և կատարեա 'ի բարի խնդրուածս մեր. զի 'ի քեզ եմք ապաւինեալ. և քո առատ ողորմութեամբդ մխիթարեա զմեզ 'ի կեանս յայսմիկ. և առաջնորդեալ հասո յանձառ երկնից ար-

քայունից. 'ի փառաբանութեան և 'ի պատիւ ամենասուրբ երրորդութեան. այժմ և։

Յիշեա՛ տր զպաշտօնեայս քո։

Բարերար և բազումողորմ ած։

## Սաղմոս. 114

Սիրեցի՝ զի լուիցէ տր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս, և ես յաւուրս իմ՝ կարդացի առ նա։

Պատեցան զինև երկունք մահու. և վիշտք դժոխոց գտին զիս։

Զնեղութիւն և զտրտմութիւն գտի. և զանուն տեառն կարդացի։

Ո՜ տր փրկեա՛ զանձն իմ. ողորմած տծ մեր. ողորմի և պահէ զտղայս տէր։

Ես խոնարհ եղէ և տր կեցոյց զիս. դարձ անձն իմ 'ի հանգիստ քո, զի տր օգնեաց քեզ. Փրկեաց զանձն իմ 'ի մահուանէ. զաչս իմ՝ յարտասուաց. և զոտս իմ՝ 'ի գայթակղութէ. հաճոյ եղէց առաջի տն յերկրին կենդանեաց։

Հաւատացի՝ զոր և խօսեցայ, և ես խոնարհ եղէ յոյժ։

Ես ասացի ՚ի զարմանալ իմում, եթէ ամ՟ մարդ սուտ է։

Զինչ տաց տրիտուր Տն՟ ընդ ամ՟ զոր ետ ինձ։

Զբաժակ փրկութե՟ ընկալայց, և զանուն տեառն կարդացից։

Զաղօթս իմ տեառն տաց առաջի ամ՟ ժողովրդեան նորա։

Պատուական է առաջի տեառն մահ սրբոց իւրոց. ով տէր՝ ես ծառայ քո եմ. ծառայ և որդի աղախնոյ քոյ։

Հատեր զկապանս իմ քեզ մատուցից պատարագս օրհնութե՟. և զանուն տեառն կարդացից։

Զաղօթս իմ Տն՟ տաց առաջի ամ՟ ժողովրդեան նր՟՝ ՚ի գաւիթս տան Տն՟, և ՚ի մէջ քո Երուսաղէմ։

Օրհնեցէք զտէր ամ՟ ազգք. գովեցէք զնա ամ՟ ժողովուրդք։

Զօրացի ողորմութիւն նորա ՚ի վերայ մեր. և ճշմարտութիւն տեառն մնայ յաւիտեան:

Մաղթանք:

Հոգւոյն հանգուցելոյ քո տէր՝ արա՛ հանգիստ և ողորմութիւն. և մեզ մեղաւորացս շնորհեա՛ զթողութիւն յանցանաց:

Քարոզ:

Եւ ևս խաղաղութեան զտէր աղա:

Վասն հանգուցեալ հոգւոյն աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս զի ընդ արդարոն դասեսցէ. և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ տէր Աստուած մեր կեցո՛ և ողորմեա՛:

Տէր ողորմեա՛. երիցս:

Աղօթք:

Քրիստոս որդի Աստուծոյ անոխակալ և բարեգութ՝ գթա՛ քո արարչական սիրովդ ՚ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց: Յիշեա՛ յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ. արա՛ արժանի ողորմութեան քաւութեան և թողութեան մեղաց. դասաւորեալ պայծառացն

ընդ սուրբս քո յաջակողմեան դասուն: Զի դու ես Տ՟ր և արարիչ ամենեցուն դատաւոր կենդանեաց և մեռելոց: Եւ քեզ վայել է փառք իշխանութի՟ և պատիւ այժմ և միշտ:

Օրհնեալ Տ՟ր մեր յ՟ս ք՟ս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես սուրբ:

Զսաղմոսերգութիւնս և զաղաչանս ընկալցի մարդասէրն Ա՟ծ. մեր մեղաց և յանցանաց թողութի՟ շնորհեսցէ. 'ի չարեաց փրկեսցէ. 'ի մեղաց պահեսցէ. և նմա փառք յաւիտեանս. Ամէն:

Օրհնեալ թագաւորութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն:

Եւ ասէ ժամամուտն ըստ հարկի աւուրց պահոց և տօնից աղերսանաւորականաց, և ամենայն սրբոց:

Իսկ ապա՝ Աւետեաց, Ծննդեան, Տեառնընդառաջին, Վարդավառին, Վերափոխման, և ամենայն տօնից Աստուածածնին՝ ճաշու փոխն այս է:

Մեծացուսցէ անձն իմ. և այլն:

Աղուհացին, Ծաղկազարդին, Հոգւոյ գալըստեան, Խաչի, Եկեղեցւոյ, և ամենայն Կիւրակէից՝ ճաշու փոխն այս է:

ՏՐ Թագաւորեաց վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ տր զօրութիւն՝ ՚ի մէջ իւր էած:

Հաստատեաց զաշխարհ զի մի՛ սասանեսցի. պատրաստ է աթոռ քո ՚ի սկզբանէ յաւիտեանս դու ես:

Ամբարձան գետք տր, և ամբարձին գետք զձայնս իւրեանց. և յարիցեն գետք ՚ի գնացս իւրեանց:

՚Ի ձայնէ ջուրց բազմաց, սքանչելի են զբօսանք ծովու:

Սքանչելի ես դու տր ՚ի բարձունս, վկայութիւնք քո յոյժ հաւատացան:

Տաս քում վայելէ որբում իր՝ ընդ եր-
կայն աւուրս:

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ:

---

Զատկէն մինչև 'ի Համբարձումն՝ այս է
ճաշու ժամին:

Գովեմ երուսաղէմ զտէր:

Եւ օրհնեմ զաստուած քո սիոն:

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց, և օրհ-
նեաց զորդիս քո 'ի քեզ:

Որ եդ զսահմանս քո 'ի խաղաղութիւն, պա-
րարտութ. ցորենոյ լցոյց զքեզ:

Առաքէ զբան իւր յերկիր վաղվաղ
ընթանան պատգամք նորա:

Դնէ զձիւն որպէս զասր, և զմէգ որպէս փո-
շի ցանեայ:

Արկանէ զսառն որպէս պատառս, առաջի
ցրտոյ նորա ո՞ կարէ կալ:

Առաքէ զբան իւր և հալէ զնոսա,
շնչեսցեն հողմք և գնասցեն ջուրք:

Պատմէ զբան իւր յակոբայ, զարդա-

րութն և զիրաւունս իսրայէլի։
Ոչ այսպէս արար ա̃մ ազգաց տ̃ր, և
զդատաստանս իւր ո՛չ յայտնեաց ն̃ց։

---

Ամենայն Սբ̃ց աւուրց՝ ճաշու փոխն այս է։
Սիրեցի զի լուիցէ տ̃ր զձայն աղօթից
իմոց։ Եւ այլն որպէս 'ի թերթն 197,
Դաբաղապահաց յորս տօն ոչ տօնի, և ամենայն
Զորեքշաբթի և ուրբաթի յորս պահք լինի·
ճաշու փոխն այս է։
Օրհնեցէք զտ̃ր ա̃մ ազգք· գովեցէք
զնա ա̃մ ժողովուրդք։
Զօրացաւ ողորմութ̃ն ն̃ր 'ի վ̃ր մեր· և
ճշմարտութ̃ն տ̃ն մնայ յաւիտեան։
Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

---

Եւ ապա ասէ շարական ըստ աւուրց պատշաճից
և հետևեալ յարութեանն։
Զթագաւորն փառաց ք̃ս· որ վ̃ս մեր
մարմնացաւ 'ի սրբոյ կուսէն և խաչի
համբերելով միաբանութ̃ք երգելով բարե-

քանեսցուք: Որ զթաղումն երեքօրեայ յանձն էառ յարուցեալ ՚ի մեռելոց իշխանութ. միա: Կարողապէս զդրունս դժոխոց խորտակեաց. եկեղեցւոյ իւրում՝ զգեցոյց զմեծ վայելչութ. միա:

---

Սուրբ ած, սբ և հզօր, սբ և անմահ:

Եւ այլն ըստ պատշաճի: Երեկոյս հրշնէա:

Եւ ևս խաղաղութ զտէր աղա:

Վ՟ս խաղաղութ ամ աշխարհի, և հաստատութ սրբոյ եկեղեցւոյ, զտէր աղաչեսցուք:

Վ՟ս ամ սուրբ և ուղղափառ եպիսկոպոսաց, զտէր աղաչեսցուք:

Վ՟ս հայրապետին մերոյ տն (այս անուն) կենաց և փրկութ հոգւոյ նորին, զտր աղ:

Վ՟ս վարդապետաց՝ քահանայից՝ սարկաւագաց՝ դպրաց՝ և ամ ուխտի մանկանց եկեղեցւոյ, զտէր աղաչեսցուք:

Վ՟ բարեպաշտ Թագաւորաց՝ և ա՟ծա-
սէր իշխանաց, զօրավարաց՝ և զօրաց
նոցին, զտէր աղաչեսցուք:

Վ՟ հոգւոցն: Եւ ևս միա: Զանձինս:

Ողորմեաց:

Մաղթանք:

Զի ողորմած և մարդասէր ես Ա՟ծ գո-
լով. և քեզ վայելէ փառք իշխանութի
և պատիւ. այժմ և:

---

Նշանակեալ Համբարձման երգեսցի ըստ ա-
ւուրց:

Համբարձէք իշխանք զդրունս
ձեր ՚ի վեր. համբարձցին դրունք
յաւիտենից, և մտցէ Թագաւոր
փառաց:

Համբարձէք իշխանք զդրունս: Ուր
Համբարձէք իշխանք զդրունս: Շաբ
Համբարձէք իշխանք զդրունս: Կիր
Համբարձէք իշխանք զդրունս: Բշ
Համբարձէք իշխանք զդրունս: Գշ

դշ Համբարձէ՛ք իշխանք զդրունս:
եշ Համբարձէ՛ք իշխանք զդրունս:
ուր Համբարձէ՛ք իշխանք զդրունս:
շբթ Համբարձէ՛ք իշխանք զդրունս:

Առ ընթեռնուլն Աւետարան ըստ պատշաճի. և չէայ առ Հանգստեան ննջեցելոցն:

Աւետարան՝ ըստ Մատթէոսի: Ե. 1,

Եւ տեսեալ զժողովուրդն՝ ել ՚ի լեառն. և այլն:

Աւետարան ըստ Մարկոսի: Գ. 13:

Ելանէ ՚ի լեառն՝ և կոչէ առ ինքն զորս ինքն կամեցաւ. և այլն.

Աւետարան ըստ Ղուկասու: Ժդ. 12:

Ասէ և ցկոչնատէրն. յորժամ առնիցես ճաշ կամ ընթրիս. և այլն:

Աւետարան ըստ Յովհաննու: Ժ. 11:

Ես եմ՝ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ՚ի վերայ ոչխարաց: և այլն:

Փառք քեզ տ̃ր ա̃ծ մ̃ր:

## Հանգանակ Նիկիական:

Հաւատամք ՚ի մի ած հայրն ամենակալ. արարիչն երկնի և երկրի. երևելեաց և աներևութից: Եւ ՚ի մի տր յս քս որդին այ. ծնեալն յայ հօրէ միածին. այսինքն յէուէ հօր: Ած յայ. Լոյս ՚ի լուսոյ. ած ճշմարիտ. յայ ճշմարտէ: Ծընունդ և ոչ արարած: Նոյն ինքն ՚ի բընուէ հօր. որով ամն ինչ եղև յերկինս և ՚ի վր երկրի. երևելիք և աներևոյթք: Որ յաղագս մեր մարդկան և վն մերոյ փրկութեան՝ իջեալ ՚ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի մարիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով, Որով էառ զմարմին, զհոգի, և զմիտ. և զամն որ ինչ է ՚ի մարդ. ճշմարտապէս և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ. յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ՚ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ հօր: Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր.

՚ի դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան: Հաւատամք և ՚ի ս՟բ հոգին. յանեղն և ՚ի կատարեալն: Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս և յաւետարանս: Որ էջն ՚ի յորդանան. քարոզեաց զառաքեալսն. և բնակեցաւ ՚ի ս՟բսն: Հաւատամք և ՚ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի: ՚Ի մի մկրտութիւն. յապաշխարութիւն. ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց: ՚Ի յարութիւն մեռելոց. ՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց: Յարքայութիւն երկնից և ՚ի կեանսն յաւիտենականս:

### Մինչև ցայս են հաւատոյ բանք:

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր որդի. կամ էր երբեմն, յորժամ ոչ էր ս՟բ հոգի կամ թէ յոչէից եղեն. կամ յայլմէ էութենէ ասեն լինել զորդին ա՟յ՝ և կամ զս՟բ հոգին. և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք. զայս-

պխախան նզովէ կաթուղիկէ և առաքե-
լական սուրբ եկեղեցի:

Ի սրբոյն Գրիգորէ լուսաւորչէն մերմէ տա-
ցեալ:

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս երկրպագանելով սրբոյ երրորդութեանն և միոյ ածութեանն. Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. այժմ և:

Քարոզ:

Եւ ևս խաղաղութե զտէր:

Եւ ևս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք ՚ի տնէ այ և ՚ի փրկչէն մերմէ յսէ քսէ ՚ի ժամուս պաշտաման և աղօթից Զի արժանի ընդունելութե արասցէ. Լուիցէ տր ձայնի աղաչանաց մերոց: Ընկալցի զխնդրուածս սրտից մերոց. Թողցէ զյանցանս մեր. ողորմեսցի ՚ի վր մեր: Աղօթք մեր և խնդրուածք յամ ժամ մտցեն առաջի մեծի տէրութեն նր: Եւ նա տացէ մեզ միաբան միով հաւատով արդա-

րուն վաստակել՝ ի գործս բարեաց: Զե
ողորմութեան զշնորհսն քո՝ առաքեա ՚ի վր
մեր տրն ամենակալ. կեցուսցէ և ողոր
մեսցի: Զ. ժամս և զառաջիկայ օրս խա:
Զ. հրեշ: Զ. քաւուն: Զ. սրբոյ: Զ. անձինս:

Եւ ևս միա:

Աղօթք.

Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս. որ մեծդ ես ողորմութեամբ և առատ պարգևօք բարերարութեան քո: Որ դու քոյին կամաւդ ՚ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց խաչին և մահու յաղագս մեղաց մերոց: Եւ պարգևեցեր աւազակին զպարգևս հոգւոյդ սրբոյ՝ երանել ի առաքելոյն: Ահա ղորդս արա և զմեզ տէր՝ աղաչեմք զքեզ ամենայն պարգևացդ, թողութեան մեղաց և ընդունելութեան հոգւոյդ սրբոյ: Որպէս զի և արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ սրբոյ հոգւոյդ. այժմ և:

Խաչապաշտութեան առաջնոյն:

Խաղաղութեամբ քով Քրիստոս փրկիչ մեր. որ ՚ի վեր

է քան զմտ՟ միտս և զբանս. ամենայն ըղ-
ձեղ և աներկիւղ պահեա՛ յամ՟ չարէ: Հա-
ւատարեա՛ զմեզ ի՟ ճշմարիտ երկրպագուս
քո. որք հոգւով և ճշմարտու՟ քեզ եր-
կիրպագանեն: Վ՟ զի ամենաւք երրոր-
դութեդ վայել են փառք իշխանութի և պտիւ
Օրհնեալ տ՟ր մեր յս՟ ք՟ս: Տ՟ր ած՟ օրհնեսցէ
զամենեսեանդ. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես սուրբ:
Միայն սբ՟. միայն տր՟. յս՟ ք՟ս ՚ի փառս
այ՟ հօր. ամէն:

Օրհնեալ հայր սբ՟՝ ած՟ ճշմարիտ. ամէն:
Օրհնեալ որդին սբ՟ ած՟ ճշմարիտ. ամէն:
Օրհնեալ հոգին սբ՟՝ ած՟ ճշմարիտ. ամէն:
Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և
հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և:
Հայր սբ՟: Որդին սբ՟: Հոգին սբ՟:
Օրհնութի հօր և որդւոյ և սրբոյ հոգւոյն
այժմ և միշտ և:

Եւ եղիցի անուն տն՟ օրհնեալ յայսմ հետէ
մինչև յաւիտեան: Երիցս ասէ:

կատարումն օրինաց և մարգարէից դու ես քս՟ ած՟ փրկիչ մեր. որ լցեր զամ՟ հայրական՝ տնօրէնութիւնս քո. լի՛ց և զմեզ հոգւովդ քով սրբով:

Օրհնեսցէ զտր՟ յամ՟ ժամ. յամ՟ ժամ օրհնութիւն նորա ՚ի բերան իմ:

## Օրհնութիւն Սեղանոյ:

Աչք ամենեցուն ՚ի քեզ յուսան. և դու տաս կերակուր նոցա ՚ի ժամու:

Բարձր առնեմ՝ զքեզ ած՟ իմ և թագաւոր իմ. և օրհնեմ՝ զանուն քո յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից:

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ:

## Աղօթք:

Օրհնեա՛ քս՟ ած՟ մեր հոգևոր օրհնութբ՟ զկերակուրս և զըմպելիս ծառայից քոց. և շնորհեա՛ առողջութն՟ հոգւոյ և մարմնոյ: Ոպ՟ զի կրօնաւորական պարկեշտութբ՟ վայելով ՚ի մարմնաւոր պիտոյից՝ անանց բարեացդ և երկնից ար-

քայունդ հաղորդս լինելոյ ընդ ամ՟ սրբս քո։ Եւ գոհուն՟ փառաւորեսցուք զքեզ ընդ հօր ամենասուրբ հոգւոյդ. այժմ և։

Հայր մեր որ յերկինս։

Գոհութիւն յետ Սեղանոյ։

Տ՟Ր յս՟ լցաք ՚ի բարութեանց քոց։
Տացուք գոհութիւն տեառն ա՟յ մերոյ։

Աղօթք։

Օրհնեալ ես տր՟ ած՟ մեր՝ որ կերակրես զմեզ ՚ի մանկուէ. և տաս կերակուր ամ՟ մարմնոյ. լցո՟ ուրախութ՟ և բերկրութ՟ զսիրտս մեր։ Որպ՟ զի ամ՟ բաւականութի՝ ունիցիմք առատանալ ՚ի գործս բարութե՟ ՚ի քս՟ յս՟ ՚ի տր՟ մեր։ Որում վայելէ փառք իշխանութի՝ և պատիւ. այժմ՝ և միշտ և։

Օրհնեալ տր՟ մեր յս՟ քս՟ ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

Երեկոյեան ժամ։

Ես առ Ած կարդայի. եւ նա լուաւ ինձ յերեկոյս, ՚ի վաղորդայն եւ ՚ի հասարակ աւուր։

Սպասէի Այ իմոյ, եւ ակն ունէի կենարարին. որ փրկէ զծառայս իւր եւ կեցուցանէ։

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ։

Եւ ես խաղաղութն զտէր աղա։

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ։

Խաղաղութեան ամենեցուն։

Սաղմոս. 85։

Խոնարհեցո՛ Տէր զունկն քո եւ լո՛ւր ինձ զի աղքատ, եւ տնանկ եմ ես։

Պահեա՛ զանձն իմ՝ սբ տր. եւ փրկեա՛ զծառայս քո Ած իմ՝, որ ՚ի քեզ յուսացայ։

Ողորմեա՛ ինձ տէր զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա

զանձն ծառայի քո՝ զի առ քեզ տէր
համբարձի զանձն իմ։

Զի դու տէր քաղցր և ուղիղ ես. բա-
զումողորմ առ ամենեսեան որք կար-
դան առ քեզ։

Ունկն դիր տ՟ր աղօթից իմոց. և նայեա
'ի ձայն խնդրուածոյ իմոյ։

Յաւուր նեղուե՟ իմոյ կարդացի առ քեզ
և լուար ինձ։

Ո՛չ ոք է նման քեզ յա՟ծս տ՟ր. և ո՛չ ոք
է որպէս զգործս քո։

Զա՟մ ազգս՝ զոր արարեր, եկեսցեն և
երկրպագեսցեն առաջի քո տ՟ր. և փառա-
ւոր արասցեն զանուն քո յաւիտեան։

Մեծ ես դու տ՟ր. և առնես սքանչելիս
և դու միայն ես աստուած։

Առաջնորդեա՛ ինձ 'ի ճանապարհի քում
և գնացից 'ի ճշմարտուե՟ քում. և ուրախ
եղիցի սիրտ իմ յերկնչել յանուանէ
քումմէ։

Խոստովան եղէց առ քեզ տ՟ր ա՟ծ իմ.

Բոլորով սրտիւ իմով և փառաւոր արարից զանուն քո յաւիտեան։

Մե՟ծ եղև ՚ի վ՟ր իմ ողորմութի՟ քո տ՟ր. և փրկեցեր զանձն իմ ՚ի դժոխոց ներքնոց։

Ա՟ծ անօրէնք յարեան ՚ի վերայ իմ. և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ. և ոչ համարեցան զքեզ ա՟ծ առաջի իրեանց։

Ա՟յլ դու տ՟ր ա՟ծ իմ, գթած ես և ողորմած. երկայնամիտ բազումողորմ, և ճշմարիտ նայեա՟ց առ իս. և ողորմեա ինձ։

Տո՛ւր զօրութի՟ ծառայի քո. կեցո զորդի աղախնոյ քո. և արա առ իս նշան բարութե՟։

Տեսցեն ատելիք իմ, և ամաչեսցեն. զի դու տ՟ր օգնեցեր ինձ, և մխիթարեցեր զիս։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ

Փառք քեզ ա՟ծ՝ փառք քեզ յաղագս ա՟մի. տէր փառք քեզ։

Եւ ես խաղաղութն զուէր աղա:

Օրհնութի և փառք հօր և որդւոյ և
հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ և:

Սաղմո. 139:

Ապրեցո զիս տր ՚ի մարդոյ չարէ. յառ-
նէ անիրաւէ փրկեա զիս:
Խորհեցան զանօրէնութի ՚ի սիրտս իւրեանց.
զօր ամ՝ պատրաստեցան ՚ի պատերազմ:
Սրեցին զլեզուս իւրեանց ոպ զօձի. և
թոյնք իժից ՚ի ներքոյ շրթանց նց:
Պահեա զիս տր ՚ի ձեռաց մեղաւորի. և
՚ի մարդոյ չարէ փրկեա զիս:
Խորհեցան խափանել զգնացս իմ. թա-
քուցին ամբարտաւանք զորոգայթ ինձ:
Լարս ձգեցին որոգայթ ոտից իմոց. շուրջ
զշաւղօք իմովք՝ եդին ինձ գայթակղութն
Ասացի տր ած իմ ես դու. ունկն դիր տք
ձայնի աղօթից իմոց:
Տր տր զօրութի փրկութե իմոյ. հովանի
զլխոյ իմոյ յաւուր պատերազմի:

Մի՛ մատներ զիս տր̄ ՚ի ցանկութէ մեղա
ւորաց. որք խորհեցան վն̄ իմ ընդ վայր
հարկանել զիս:

Զի մի՛ երբէք բարձրասցին, և խոր-
հուրդք նոցա մի՛ կատարեսցին. վախճան
կատարածի նոցա վաստակ շրթանց իւր-
եանց ծածկեսցէ զնոսա:

Արկցես ՚ի վերայ նոցա զկայծակունս
հրոյ. և կործանեսցես զնոսա. ՚ի տառա
պանս մի՛ կարասցէ կեալ:

Մարդոյ լեզուանոյ մի՛ յաջողեսցի ՚ի
վերայ երկրի. զայր մեղաւոր չարիք
իւր որսասցեն ՚ի կորուստ:

Ծանեայ՝ զի առնես տր̄ զդատաստանս
աղքատի, և զիրաւունս տնանկի:

Արդարքն գոհասցեն զանուանէ քումմէ
և բնակեսցեն ուղիղք առաջի երեսաց քոց

Տր̄ կարդացի առ քեզ և լուր ինձ. նայեաց
՚ի ձայն աղօթից իմոց ՚ի կարդալ իմում
առ քեզ:

Ուղիղ եղիցին աղօթք իմ ոպ̄ խունկ

առաջի քո տէր. համբարձումն ձեռաց ի-
մոյ պատարագ երեկոյի։

Դի՛ր տէր պահապան բերանոյ իմոյ. եւ
դուռն ամուր շրթանց իմոց, զի մի՛
խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան։

՚Ի պատճառել զպատճառս մեղաց՝ ընդ
մարդս՝ որք գործեն զանօրէնութիւն. եւ ո՛չ
եղէց կցորդ ընտրելոց նոցա։

Խրատեսցէ զիս արդարն ողորմութեամբ, եւ
յանդիմանեսցէ. իւղ մեղաւորի մի
օծցէ զգլուխ իմ. այլ աղօթք իմ ՚ի
կամս նոցա։

Արգելան մերձ առ վիմին դատաւորք նոցա
լուիցեն բանից իմոց եւ քաղցրասցին։

Որպէս թանձրութիւն հողոյ զի պատառեցաւ ՚ի վերայ
երկրի. ցրուեցան ոսկերք նոցա մերձ ՚ի
դժոխս։

Առ քեզ տէր տէր են աչք իմ. ՚ի քեզ յու-
սացայ. մի՛ հաներ զհոգի իմ։

Պահեա՛ զիս յորոգայթէ որ թաքուցին ինձ
՚ի գայթակղութենէ գործողաց անօրէնութեան։

Ընկեա՛լ 'ի ցանկս նորա մեղաւորք. միայն
եմ՝ ես մինչև անկեալ։

Ձայնիւ իմ՛ով ես առ Տէր կարդացի. ձայ-
նիւ իմ՛ով զՏէր աղաչեցի։

Սփռեցից առաջի նո՛ր զաղօթս իմ. և ըզ
նեղութիւնս իմ առաջի նո՛ր պատմեցից։

Ի նուաղիլ յինէն հոգւոյ իմոյ՝ դու Տէր
ծանեար զշաւիղս իմ. 'ի ճանապարհ յոր
և գնայի թագուցին ինձ որոգայթ։

Հայէի յաջմէ տեսանէի, և ոչ ոք ճանա-
չէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ, և
ոչ գտաւ խնդրող անձին իմոյ։

Աղաղակեցի առ քեզ Տէր՝ և ասացի դու ես
յոյս և բաժին իմ՝ յերկրին կենդանեաց։

Նայեա՛ց 'ի յաղօթս իմ՝ զի ես խոնարհ
եղէ յոյժ. ապրեցո՛ զիս 'ի հալածչաց ի-
մոց՝ զի հզօրք եղեն քան զիս։

Տէր հան 'ի բանտէ զանձն իմ. գոհա-
նալ զանուանէ քումմէ։ Ինձ քեզ սպա-
սեն արդարքն մինչև հատուսցես։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

## Երգ ներբողականից:

### Ալէլուիա. ալէլուիա:

Լոյս զուարթ սբ փառաց անմահի հօր երկնաւորի սրբոյ կենարարի յս քս: Եկեալքս 'ի մտանել արեգական. տեսաք զԼոյս երեկոյիս: Օրհնեմք զհայր և զորդի և զսբ հոգին այ. և ամ̃քն ասեմք ամէն: Արժանաւորեա՛ զմեզ յա̃մ ժամ օրհնել ձայնիւ երգոց զանուն փառաց ամենասբ երրորդուեն̃դ: Որ տաս զկենդանուէ վն̃ որոյ և աշխարհս զքեզ փառաւորէ:

### Մաղթանք:

Օրհնեալ տր՝ որ բնակեալդ ես 'ի բարձունս. և օրհնեալ են փառք մեծուե̃ քո. որ հաստատեցեր զլուսաւորս 'ի բարձունս. 'ի յերկնից զԼոյս ծագեցեր ընդ ա̃մ տիեզերս. արարեր զարեգակն լուսատու տուընջեան. զլուսին և զաստեղս՝ լուսատու գիշերոյ, և զԼոյս Ճրագի ղուԼոյս գովելի, սբ և առաջին Լոյսն. 'ի

քէն փախնու խաւարն. և զլոյս քո կեն
դանի տր̄ ծագեա՛ 'ի սիրտս մեր։ Եւ մեք
միաբան ասասցուք՝ օրհնեալ է անուն ս̄բ
փառաց քոց. և քեզ երգեմք զօրհնութի̄ և
զփառս հ̄ր և որդւոյ և հոգւոյդ ս̄բյ։

Քարոզ։

Հասեալքս 'ի ժամ երեկոյիս ամ̄քն համ-
բառնալով զձեռս մեր փառաւորեմք ըզ-
քեզ տր̄ ած̄ մեր. որ շնորհեցեր մեզ ըզ-
տիւս խաղաղութ̄ անցուցանել և հաս-
նել 'ի ժամ երեկոյիս։ Արժանաւորեա՛ ըզ-
մեզ տր̄ ս̄բ սրտիւ, հրեշտակային երգով
գոհաբանութի̄ մատուցանել տն̄ ա̄յ ամենա-
կալիդ. կեցո՛ և ողորմեա՛։ Ողորմեա՛ մեզ
տր̄ ած̄ մեր ըստ մեծի ողորմութ̄ քում՝
ասասցուք ամ̄քն միաբանութ̄. տր̄ ողոր։

Աղօթք։

Հասեալքս 'ի ժամ երեկոյիս ամ̄քն անդա-
դար փառաւորեմք զհայր և զորդի, և
զս̄բ հոգիդ. այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից. ամէն։

Մեղեդի Յարութեան:

Տէր կարող եւ հզօր. Տէր կարող 'ի պատերազմի
Տէր է երկիր լրիւ իւրով. աշխարհ եւ ամենայն բնակիչք նորա:

Մեղեդի Մարտիրոսաց:

Եղիցի ողորմութիւն քո Տէր 'ի վերայ մեր որպէս յուսացաք 'ի քեզ:
Ցնծացէք արդարք 'ի Տէր. ուղղոց վայել է օրհնութիւն:

Մեղեդի Պահոց:

Տէր լուիցէ ինձ 'ի կարդալ իմում առ նա
Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած ըստ արդարութեան իմոյ:
Ուղիղ եղիցին աղօթք իմ. որպէս խունկ առաջի քո Տէր. համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկոյի:

Քարոզ 'ի տօնի սրբոց, եւ պահոց:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչես:
Աղաչեսցուք զամենակալն Աստուած՝ զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զթագաւորն խաղաղութեան յաղագս խաղաղութեան. եւ վասն միայնոց

սբ̃՝ կաթուղիկէ և առաքելական եկե-
ղեցւոյ: Զի զբազում ամս խաղաղութ̃
տացէ մեզ տր̃ ած̃ մեր. և զթագաւորս
խաղաղարարս առաքեսցէ առ մեզ. վս̃
մեծի՝ սուրբ՝ և ահաւոր անուան իւրոյ:
Զպետս գաւառաց, զզօրավարս, ըզ-
զօրագլուխս, զժողովուրդս, զմուտս,
և զելս մեր խաղաղութ̃ պահեսցէ և
զա̃մ՝ պատերազմունս թշնամւոյն խոր-
տակեսցէ ՚ի մէնջ տր̃ն ամենակալն կե-
ցուսցէ և ողորմեսցի: Զերեկս մերձել
և զառաջիկայ գիշերս խաղաղութ̃ ան-
ցուցանել: Զհրեշտակ: Զքաւ: Զսր̃ք:
Եւ ես միա: Զանձինս: Ողորմեա:

Մղթ̃.

Լուր ձայնից մերոց տր̃ ած̃ մեր. ընկա̃լ
զաղաչանս մեր, զհամբարձումն ձեռաց
մերոց և զբանս աղօթից. սրբելով
զերեկոյի պատարագս մեր ՚ի հոտ անու-
շից՝ ՚ի հաճոյս քեզ պատրաստել: Յա-
ւել ՚ի մեզ տր̃ ամենակալ զհաւատ, ըզ

յոյս, զսէր և զամ գործս առաքինեաց։ Ոգ ւլ Ծ կամաց քոյ բարեխօսելոյ միշտ կրօնաւորեալք բարեպաշտութբ ՚ի տուէ և ՚ի գիշերի, և արժանաւորք եղիցուք յաղագս անձանց մերոց փրկութե և վասն հոգևոր կենացդ աղաչել զքեզ Տէր և գտանել ՚ի քէն զշնորհս և զողորմութի և զոհանալով փառաւորեսցուք զհայր և զորդի և զսբ հոգիդ. այժմ և միշտ եւ։

Խաղաղութիւն ամենեցուն։

Քեզ երկրպագանելով տր ած մեր՝ զոհանամք զքէն յաղագս խաղաղութե անցուցանելոյ ՚ի մէջ զերկայնութի տունջեան։ Տուր մեզ տր աղաչեմք զքեզ՝ զերեկս և զառաջակայ գիշերս առանց մեղաց, և առանց գայթակղութե անցուցանել. հաստատուն կալ և մնալ ՚ի հաւատ՝ ՚ի յոյս՝ ՚ի սէր՝ և ՚ի պատուիրանապահութե քոյ։ Խնդրելով զխաղաղութի ամ աշխարհի, և եկեղեցւոյ քում՝ սրբոյ

զհաստատութի և անձանց մերոց զփըր-
կութի։ Ոպ զի ընդունելով ՚ի քէն ըղ-
հայցուածս մեր՝ և զ մեծ վայելչական
փառաբանութի միշտ ՚ի բարձունս առա-
քեսցուք ամենայ օր տէրունեդ. քո ած
մեր. այժմ և միշտ ե։

Եւ ասէ սուրբ առաքելոյն՝ բազ աղաչանքիւ։

Սուրբ ած. որ և հզօր. որ և անմահ
որ խաչեցար վս մեր ողորմեա մեզ։

Երիցս ասիցեն։ Եւ զկնի զՓառաւորեալն։

Սաղմոս։

Փրկեա զմեզ ՚ի փորձութէ և յամ վտան
դից մերոց։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութեն զՏր աղաչեսցուք։
Վս ննջելի ննջելոց տեառն մյ ձայնի
աղաչանաց մերոց՝ բարեխօսութի որ ածած
նին. և իջանելոյ ՚ի վր մեր ողորմութեն և
գթութե տն մյ. ամենակալ տր ած մեր՝ կեցո
և ողորմեա։

Օրհնութի և փառք։ Այժմ և միշտ ե։

Սաղմոս։

Համբարձի զաչս իմ 'ի լերինս՝ ուստի
եկեսցէ ինձ օգնութիւն։
Օգնութիւն ինձ 'ի Տեառնէ եկեսցէ, որ
արար զերկինս և զերկիր։
Մի՛ տար 'ի սասանութիւն զոտն քո. և
մի՛ ննջեսցէ պահապան քո։
Որպէս ոչ նինջէ, և ոչ 'ի քուն երթայ
պահապանն Իսրայէլի։
Տէր պահեսցէ զքեզ. և Տէր ընկալցի
աջոյ ձեռամբն իւրով։
Արեգակն 'ի տուէ քեզ մի՛ մեղիցէ. և
մի՛ լուսինն 'ի գիշերի։
Տէր պահեսցէ զքեզ յամենայն չարէ. պա
հեսցէ Տէր զանձն քո։
Տէր պահեսցէ զմուտ և զել քո յայսմ-
հետէ մինչև յաւիտեան։
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։
Դարձուածն կէ—րաձայնիւ։ Ա՛ձ
Սուրբ ես Տէր զօրութեանց՝ որ բնակեալ ես
'ի յերկինս, և բարեբանեալ 'ի սրբս քոց։

Երկնային զօրութիւնք՝ սրովբէք և քերով-
բէք անդադար օրհնեն զք̅ զանունդ քո։
Քահանայք Տ̅ նոսին՝ պաշտօնեայք և ժողո-
վուրդք երկրպագեսցուք տէրութ̅դ քո։
Լոյսդ՝ որ յառաջ քան զյաւիտեանս ՚ի
հօրէ առաքեցար, և լուսով խնամալեւ-
ւցեր զարարածս. օրհնեալ ես թագա-
ւոր յաւիտենից։
Որ զլոյսն ՚ի սկզբանէ հաստատեցեր
վերստին. և զխաւարն անգիտութեան յա-
րութ̅դ քո հալածեցեր. օրհնեալ ես։
Ուստի և մեք լուսաւորեալքս Տ̅ լու-
սեղէն զուարթնոյն երգեսցուք ընծութ̅
՚ի յարութ̅ երեկոյիս. օրհնեալ ես։
Երկնաքաղաքային յովհաննէս մեծն ՚ի
ծնունդս կանանց՝ քարոզէր յանապատ
ազդ արարող բարբառովն զծագումն
լուսոյ արեգական արդարութեան։
Ճշմարիտ մարգարէ, և ձեռնադրող որդ-
ւոյն Ա̅յ, յառաջընթաց կարապետ, և
պատմօղ մծային օրինացն. հորդէր Ջա-

Նապայրհ լծապաւորին յաւիտենից։

Յանօրէն գինարբուսն մոլեգնեալ Հերովդ դխաղայ ՚ի պորգեւի մասին խնդրէր ըզ գլուխ մարգարէին, շիջուցանել զարուսեակն, և զանաղօտ լապտերն։

Սրբուհւոյ ածածնին բարեխօսութ. պարգեւեա՛ երկրպագուացս ամենասբ երրորդութեդ՝ կ յաւուրն յուսոյ կենացն յաւիտենից։

Ո՛ հաւատացեալ ժողովուրդս մեք երրորդութե, և զապաւինեալս ՚ի խորան փառաց քոյ պահեա՛ անխռով ՚ի խաղաղութե։

Քարոզ։

Վ̃ն խաղաղութ̃ ամ̃ աշխարհի՝ և հաստատութ̃ սրբոց եկեղեցւոյ զտէր աղաչեսցուք. ասասցուք ամենքին միաբանութբ։

Տէր ողորմեա։ եր̃ս։

Աղօթս։

Հայր գթած՝ բարեխնամող՝ արարիչ ամ̃ արարածոց. ընկալ զպաղատանս ծառայից քոց ՚ի ժամ՝ երեկոյիս. որ ապաստ. ես

առ ամենեսեան՝ պարգեւօք բարերարութեան քո. ողորմեա՛ մեր ամենայն աշխարհի, եւ եկեղեցւոյ քում սրբոյ. հիւանդաց՝ վշտացելոց՝ ճանապարհորդաց՝ նաւորդաց՝ խոստովանողաց ապաշխարողաց՝ եւ հոգւոցն հանգուցելոց: Զի դու ես ամենակալ գիտես զպէտս մեր՝ եւ զկարիս առաւել քան զոր խնդրեմք եւ իմանամք. եւ քեզ ընդ որդւոյ եւ ամենասուրբ հոգւոյդ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ:

―――

Արջահեան փոխ:

Որ բնակեալ է յօգնութիւն բարձրելոյ.
Եւ այլն

Առ քեզ տէր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես 'ի յերկինս:
Որպէս աչք ծառայի 'ի ձեռն տեառն իւրոյ. եւ որպէս աչք աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ:
Այնպէս են աչք մեր առ քեզ տէր Աստուած մեր, մինչեւ ողորմեսցիս 'ի վերայ մեր:

Ողորմեա՛ց մեզ Տր՝ ողորմեա՛յ մեզ զի
բազում լցաք արհամարհանօք։
Եւս առաւել լցան անձինք մեր նախա-
տանօք, որք նախատէին զմեզ. և արհա-
մարհանօք ամբարտաւանից։
Ած յանուան քում կեցո՛ զիս. և ՚ի զօ-
րութե քում իրաւ արա՛ ինձ։
Ած լո՛ւր աղօթից իմոց ո՛ւնկն դիր բա-
նից բերանոյ իմոյ։
Օտարք յարեան ՚ի վր իմ. և հզօրք
խնդրեցին զանձն իմ. և ո՛չ համարեցան
զքեզ Ած առաջի իւրեանց։
Ահա Ած օգնական իմ և տէր ընդունող
հոգւոյ իմոյ։
Ի դարձուցանել զչարն ՚ի թշնամիսն իմ
ճշմարտութբ քով սատակեա՛ զնոսա։
Ես կամօք իմովք պատարագս մատու-
ցից քեզ. և խոստովան եղէց անուան
քում Տր՝ զի բարի է։
Յամ նեղութէ իմմէ փրկեցեր զիս. և ՚ի
թշնամիսն իմ ետես ակն իմ։

Մ՟աղթանք:

Զբարձրեալն զՔ՟ս արասցուք մեզ ապաւէն, զի ոչ հասցեն առ մեզ չարք և տանջանք մի՛ մերձեսցին ՚ի յարկս մեր:

Ք՟արոզ:

Եւ մեք միաբան զողորմութիւն ՚ի Տ՟նէ խնդրելով, ասասցուք ամ՟ն միաբանութ՟բ

Տէր ողորմեա: եր՟ց:

Յոյս կենաց՝ ընդունող աղօթից քաւիչ մեղաց՝ և կատարիչ խնդրուածոց Ք՟ս Ա՟ծ մեր. ընկա՛լ զպաղատանս մեր ՚ի ժամ երեկոյիս՝ բարեխօսութ՟բ ս՟բ Ա՟ծածնին և աղաչանօք ամ՟ ս՟բց քոց: Լո՛ւր մեզ Տ՟ր և ողորմեա, ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ ըզ մեղս մեր. արժանաւորեա՛ գոհութ՟բ փառաւորել զքեզ ընդ Հօր, և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և:

Յիշեա՛ Տէր զպաշտօնեայս քո:

Բարերար և բազումողորմ Ա՟ծ:

Հայր մեր որ յերկինս ես:

Փոխ եւ-բարեխօսակից։

Աստ օրհնեցէք ամ ծառայք տն զտէր
ո՛ կայք ՚ի տան տն, և ՚ի գաւիթս
աստուծոյ մերոյ։

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ՚ի
սրբութի. և օրհնեցէք զտէր։

Օրհնեսցէ զքեզ տր ՚ի սիօնէ. որ արար
զերկինս և զերկիր։

Խոստովան եղէց քեզ տր բոլորով սրտիւ
իմով. առաջի հրեշտակաց սաղմոս ասա-
ցից քեզ։

Զի լուար զբանս բերանոյ իմոյ. եր-
կիրպագից ՚ի տաճար սբ քո. և խոստո-
վան եղէց անուան քում վն ողորմութե
և ճշմարտութե քո։

Մեծ արարեր յամի զանուն սբ քո. յո-
րում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվա-
ղակի լո՛ւր ինձ. և բազում արասցես զօ-
րութի՛ս յանձն իմ։

Խոստովան եղիցին առ քեզ ամ՛ թագա-ւորք երկրի· զի լուան զբանս բերա-նոյ քո, և օրհնեսցեն զճանապարհս քո։ Մե՛ծ են փառք տն՛. բարձր է տր՝ զխո-նարհս տեսանէ, և զբարձունս ՚ի հեռաս-տանէ ճանաչէ։

Թէպէտ և գնայցեմ ես ՚ի մէջ նեղութեանց, կեցուսցես զիս ՚ի բարկութենէ թշնամւոյն։ Ձգեցեր զձեռն քո. և փրկեաց զիս աջ քո, և տէր հատուսցէ ընդ իմ։

Տէր ողորմութի քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։

Ա՛ծ յանուան քում կեցո՛ զիս. և ՚ի զօ-րութե՛ քում. և այլն որպէս ՚ի վերոյ։

Քարոզ։

Խնդրեսցուք հաւատով միաբանութ՛ ՚ի տնէ՝ զի զողորմութե՛ զշնորհս իւր ա-րասցէ ՚ի վերայ մեր. տրն ամենակալ կե-ցուսցէ և ողորմեսցի՛։

Կեցո՛ տր. տր ողորմեա՛։ Երիցս։

Աղօթք.

Թագաւոր խաղաղութե̃. օգնական և փրկիչ անձանց մերոց՝ ք̃ս ա̃ծ մեր։ Պարսպեա՛լ պահեա՛ զժողովուրդս քո ը̃ հովանեաւ ո̃բ և պատուական խաչի քո 'ի խաղաղութե̃ փրկեա՛ յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։

Արժանաւորեա՛ գոհութ̃ փառաւորել ըզքեզ ը̃ հօր և ը̃ սրբոյ հոգւոյդ. այժմ և։

---

Խաղաղական ժամ։

Սաղմոս. 84։

Տէր ա̃ծ փրկութե̃ իմոյ, 'ի տուէ կարդացի. և 'ի գիշերի առաջի քո։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տ̃ր. խոնարհեցո՛ ունկն քո 'ի խնդրուածս իմ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Եւ ես խաղաղութե̃ զտէր աղա։

Օրհնութիւն և փառք հօր։

Սաղմոս. 4։

Ի կարդալ իմում լուաւ ինձ ա̃ծ. ը̃ արդարութե̃ 'ի նեղութե̃ ինձ անդորր արա-

բեր. ողորմեա՛ ինձ, և լո՛ւր աղօթից իմոց

Որդիք մարդկան մինչև յերբ էք խստա-
սրտեալք. ընդէ՞ր սիրէք զնանրութիւն, և
խնդրէք զսուտ:

Ծանիրուք զի սքանչելի արար տէր
սրբոց իւրում. և տէր լուիցէ ինձ 'ի
կարդալ իմում առ նա:

Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք. զոր ինչ
ասէք 'ի սիրտս ձեր յանկողինս ձեր
զղջացարուք:

Մատուցէք պատարագս արդարութեան, և
յուսացարուք 'ի տէր:

Բազումք ասեն թէ ո՞ ցուցէ մեզ
զբարութիւն. նշանեցաւ առ մեզ լոյս
երեսաց քոց, և ետուր ուրախութիւն սրտից
մերոց

'Ի պտղոյ ցորենոյ գինւոյ և ձիթոյ իւր-
եանց լցուցեր զնոսա:

Խաղաղութեամբ յայս և 'ի սոյն ննջեսցուք և
զարթիցուք. զի դու տէր միայն առանձին
յուսով քո բնակեցուցեր զմեզ:

Տէր՝ մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, եւ մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս

Ողորմեա՛ ինձ տէր զի հիւանդ եմ՝ ես. բժշկեա՛ զանձն իմ՝ զի խռովեցան ոսկերք իմ՝։

Անձն իմ յոյժ խռովեցաւ, եւ դու տէր մինչեւ յե՞րբ։

Դարձ տէր եւ փրկեա՛ զանձն իմ. կեցո՛ զիս տէր ըստ ողորմութեան քում։

Զի ո՛չ ոք է որ ՚ի մահու յիշէ զքեզ կամ ՚ի դժոխս խոստովան առնիցի առ քեզ։

Վաստակեցայ ես ՚ի հեծութեան իմում, լուացի զամենայն՝ գիշեր զմահիճս իմ. եւ արտասուօք իմովք զանկողինս իմ՝ թացի։

Խռովեցաւ ՚ի սրտմտութենէ ակն իմ. եւ մաշեցայ ես ՚ի վերայ ամենայն թշնամեաց իմոց։

Ի բաց կացէք յինէն ամենեքեան, որք գործէք զանօրէնութիւն։

Լուաւ տէր ձայնի լալոյ իմոյ. Լուաւ տէր աղօթից իմոց. եւ տէր զխնդրը-

ւածս իմ ընկալաւ:

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամ̃ թշնամիք իմ. դարձցին յետս և ամաչեսցեն յոյժ վաղվաղակի և խռովեսցին:

Մինչև յե՞րբ տէր մոռանաս զիս իսպառ. մինչև յե՞րբ դարձուցանես զերեսս քո յինէն:

Մինչև յե՞րբ դնեմ զխորհուրդս յանձն իմ, և ցաւք սրտի իմոյ զաւուրս:

Մինչև ցե՞րբ բարձրանայ թշնամին 'ի վր̅ իմ. Նայեա՛ և լո՛ւր ինձ տր̅ ած̅ իմ:

Լոյս տուր տէր աչաց իմոց, զի մի՛ երբէք ննջեցից 'ի մահ:

Մի՛ ասասցէ թշնամին թէ յաղթեցի նմա, կամ նեղիչք իմ ցնծասցեն թէ ես սասանեցայց:

Ես յողորմութիւն քո տր̅ յուսացայ. ցընծացաւ սիրտ իմ 'ի փրկութ̃ քում. օրհնեցից զտէր զբարերարն իմ:

Պահեա՛ զիս ած̅ իմ զի ես 'ի քեզ յուսացայ, ասացի տն̅, տէր իմ ես դու, և

բարիք իմ ինձ 'ի քէն են։

Սրբոց որք են յերկրի նորա. սքան-չելի արարեր զամ՟ կամս իմ 'ի նոսա։

Յաճախեցին հիւանդութիւնք նոցա. յետ այսորիկ արագ վաղվաղեցին։

Ոչ ժողովեցայց 'ի ժողովս նց՟ յարենց եւ ոչ յիշեցից զանուանս նց՟ 'ի շըր-թունս իմ։

Տր՟ բաժին ժառանգութն՟ իմոյ եւ բաժա-կի իմոյ. դու ես որ այդրէն դարձուցա-նես զժառանգութի՟ իմ յիս։

Վիճակք ելին ինձ ՚ի ընտիրս, եւ ժա-ռանգութի՟ իմ հաճոյ եղեւ ինձ։

Օրհնեցից զՏր՟ որ իմաստուն արար զիս, մինչ 'ի գիշերի եւս խրատեցին զիս երիկամունք իմ։

Յառաջագոյն տեսանէի զՏր՟ առաջի իմ յամ՟ ժամ, զի է ընդ աջմէ իմմէ զի մի՛ սասանեցայց։

Վասն այսորիկ ուրախ եղեւ սիրտ իմ, եւ ցնծացաւ լեզու իմ, եւս եւ մարմին իմ,

բնակեսցի յուսով:

Զի ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս, եւ ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն:

Ցուցեր ինձ զճանապարհս կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց 'ի քաղցրութեան վայելչութեան աջոյ քո մինչ իսպառ:

Լուր տէր արդարութեան. եւ նայեա՛ 'ի խնդրուածս իմ, ունկն դիր աղօթից իմոց զի ոչ շրթամբք նենգաւորօք:

Յերեսաց քոց իրաւունք ինձ ելցեն, եւ աչք իմ տեսցեն զուղղութիւն:

Փորձեցեր զսիրտ իմ եւ քննեցեր 'ի գիշերի, փորձեցեր զիս՝ եւ ոչ գտաւ յիս անիրաւութիւն:

Մի՛ խօսեսցի բերան իմ զգործս որդւոց մարդկան. վասն բանից շրթանց քոց ես պահեցից զճանապարհս խիստս:

Հաստատեա՛ զշաւիղս իմ 'ի ճանապարհի քում, զի մի՛ գայթագղեսցին գնացք իմ:

Ես առ քեզ տէր կարդացի՝ զի լուար

ինձ տէր, խոնարհեցո՛ առ իս զունկն քո
և լո՛ւր բանից իմոց:

Սքանչելի արարեր զողորմութիւնս քո. ո՜
փրկես զայնոսիկ որք յուսացեալ են ՚ի
քեզ. յայնցանէ որք հակառակ կան ա-
ջոյ քո:

Պահեա՛ զիս ոպ̃ բիբ ական. ՚ի հովանեաւ
թևոց քոց ծածկեսցես զիս յերեսաց ամ-
բարշտաց՝ որք տառապեցուցին զիս:

Թշնամիք զանձն իմ պաշարեցին, և ՚ի
ճարպս իւրեանց արգելին, և բերանք նց̃
խօսեցան զամբարտաւանութի̃:

Մերժեցին զիս և այժմ դարձեալ պա-
տեցան զինև. ուշ եդին խոնարհեցուցա-
նել զիս յերկիր:

Համարեցան ինձ ոպ̃ առիւծ զի պատ-
րաստի յորս, և ոպ̃ կորիւն առիւծու զի
նստի դարանեալ:

Արի՛ տր̃ ժամանեա՛ նց̃ և խափանեա՛ զնս̃
փրկեա՛ զանձն իմ յամբարշտաց ՚ի սրոյ և
՚ի ձեռաց թշնամւոյն:

Տր կորո՛ զն՛ս յերկրէ, բաժանեա՛ և խա-
փանեա՛ զն՛ս ’ի կեանս իւրեանց։

Գաղտնեօք քովք լցան որովայնք նց,
յագեցան կերակրովք և թողին զմնաց-
ուածս տղայոց իւրեանց։

Ես արդարութ երևեցայց երեսաց քոց. և
յագեցայց յերևիլ փառաց քոց։

Դա՛տ արա ինձ տծ, և իրա՛ւ արա ինձ ’ի
դատաստանի իմում։

Յաղթէ որ ո՛չ է ոք, ’ի մարդոյ մեղա-
ւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս։

Դու Տծ հզօրիչ իմ ես՝ ընդէ՞ր մոռա-
ցար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես ’ի
նեղել թշնամւոյ իմոյ։

Առաքեա՛ տր զլոյս քո և զճշմարտութի
քո, զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն
զիս ’ի լեառն սբ և ’ի յարկս քո։

Մտից առաջի սեղանոյ տյ առ Տծ, որ
ուրախ առնէ զմանկութի իմ,

Խոստովան եղէց քեզ օրհնութ Տծ Տծ իմ

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ

ընդէ՛ր խռովես զիս. յուսա՛ առ Ա՟ծ, խոս-
տովանեմ նմա՝ փրկիչ երեսաց իմոց Ա՟ծ է

Ա՟ծ յօգնել ինձ նայեաց. և Տ՟ր յընկերել
ինձ փութա:

Ամաչեսցեն և յամօթ լիցին, որք խնդ-
րեն զանձն իմ. դարձցին յետս և ամա
չեսցեն, որք խորհէին ինձ չար:

Դարձցին առ ժամ՝ այն ամաչեցեալք. որք
ասէին ինձ վա՛շ վա՛շ:

Ցնծասցեն և ուրախ լիցին ՚ի քեզ ամենքին,
որք խնդրեն զքեզ Տէր:

Ասասցեն յա՟մ՝ ժամ՝ մեծ է Ա՟ծ. և որք
սիրեն զփրկութիւն քո:

Ես աղքատ և տնանկ եմ՝, Ա՟ծ օգնեա՛ ինձ
օգնական և փրկիչ իմ ես. և դու Տէր
իմ՝ մի՛ յամենար:

Տո՛ւր զօրու՟թ ծառայի քո. կեցո՛ զորդի
աղախնոյ քո. և արա՛ առ իս նշան բարու՟են:

Տեսցեն ատելիք իմ՝ և ամաչեսցեն զի դու
Տ՟ր օգնեցեր ինձ, և մխիթարեցեր զիս:

Փառք Հօր և Որդւոյ և:

## ԵՐԳ:

Շնորհեա՛ մեզ Տր, 'ի գիշերի զերկնային զխաղաղութի̅ քո. և պահեա՛ զմեզ 'ի պատրանաց թշնամւոյն՝ ամենայաղթ զօրութ̅ սբ խաչի քո: Տէր ած̅ փրկութ̅ իմոյ 'ի տուէ կարդացի՝ և 'ի գիշերի առաջի քո: Մտցեն աղօթք իմ առաջի քո տր. խոնարհեցո ունկն քո 'ի խընդ֊րուածս իմ: Եկեսցէ առ մեզ տր պահա֊պան 'ի քէն, և պահեսցէ զմեզ յամ̅ ժամ: Առաքեա՛ 'ի մեզ տր զզօրութի̅ սրբոյ խա֊չին որ պահեսցէ զմեզ յամ̅ ժամ: Ար֊ժանի արա տր զերեկս զայս խաղաղութ̅. և առանց փորձութ̅ անցո՛ զմեօք: Արժա֊նաւորեա՛ տր զգիշերս զայս խաղաղութ̅ և առանց մեղաց պահելով՝ զմեզ: Ընդ մեզ տր ած՝ գիտասջիք հեթանոսք և պար֊տեցարուք. զի ած ը̅ մեզ է: Եւ լուա֊րուք զայս 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի. զի ած: Եւ հզօրացեալքդ պար֊տեցարուք. զի: Եւ զի թէպէտ և դար

ձեալ զօրանայք՝ դարձեալ 'ի պարտուէ
մատնեսջիք. ղ.ի: Եւ զխորհուրդն զոր
խորհիք՝ խափանէ տր. ղ.ի: Եւ զբանն
զոր խօսիք մի՛ մնասցէ առ ձեզ. ղ.ի:
Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք ոչ
երկիցուք, և ոչ խռովեսցուք. ղ.ի: Եւ
զՏր ած մեր փառաւոր արասցուք, և նա
եղիցի մեզ յերկիւղ. ղ.ի: Եւ յուսայցեալ
եղիցուք մեք 'ի նա, և նա եղիցի մեզ
'ի սրբութի. ղ.ի: Եւ յուսացեալ եղիցուք
մեք 'ի նա, և նա եղիցի մեզ 'ի փրկութի
ղ.ի: Եւ ահաւասիկ ես և մանկունք իմ՝
զոր ետ ինձ ած. ղ.ի: Եւ ժողովուրդ
որ նստէր 'ի խաւարի՝ ետես զլոյս մեծ
ղ.ի: Եւ որ բնակեալդ էք 'ի խաւարի
և 'ի ստուերս մահու. լոյս ծագեսցի առ
ձեզ. ղ.ի: Եւ քանզի մանուկ ծնաւ, որ-
դի և տուաւ մեզ. ղ.ի: Եւ որոյ իշխա-
նութի իւր 'ի վր ուսոց իւրոց. ղ.ի: Եւ որ
կոչի անուն նր մեծի խորհրդոյ հրեշտակ
ղ.ի: Եւ սքանչելի խորհրդակից. ղ.ի: Եւ

ամ՟ հզօր իշխան. զի։ Եւ իշխան խա-ղաղութե հայր հանդերձելոյ յաւիտենին տէր ամ՟ ընդ մեզ է։

Եւ փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբ՟յ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## Սաղմոս։

Ի մերձենալ յերեկոյիս՝ համբառնամք զձեռս մեր ՚ի սրբութի. զոր ինչ մեղաք այսօր խորհրդով՝ բանիւ, կամ գործով. ՚ի յանկողինս մեր զղջալով. խոստո-վան լինելով զգաղտնիս սրտից մերոց ծածկագիտիդ այ. յուսալով յողորմութե քո։ Եւ մեք միաբան գոչեսցուք. յիշեա զմեղս մր՝ յորժամ գաս արքայութբ քով և ողորմեա մեզ։

## Քարոզ։

Եւ ես խաղաղութե զտէր աղս։

Գոհացարուք զտէ, որ լերով ողոր-մութբն առաջնորդեաց մեզ ՚ի գործս տուե-ջեան. և շնորհեաց մեզ միաբան գալ

հասանել՚ի հանգիստ գիշերիս: Եւ մեք յա͞մ ժամ՝ աղաչեսցուք զմարդասէրն ա͞ծ, լինել պահապան անձանց մերոց. և նա իւրով ողորմութ͞բն պահեսցէ զմեզ. և առաջնորդեալ հասուսցէ յիւր բարութ͞ն հանգիստն. զոր խոստացաւ սիրելեաց իւրոց Ճշմարիտն ա͞ծ յ͞ս ք͞ս. ո͞րն ամենակալ կեցուսցէ և ողորմեսցի: Օ՚ հանգիստ գիշերիս: Օ՚ հրեշտակ: Օ՚ քաւութ͞ն Օ՚ սբ͞յ: Եւ ևս: Օ՚ անձինս: Ողորմեա՛:

Աղօթք:

Տ͞Ր բարերար, որ մեծաւ գթութ͞բ քով պատրաստեցեր զյաւիտենական հանգիս
տըն առաքինութ͞բ աշխատելոյն. և կոչեցեր առ քեզ քաղցր ձայնիւ զծանրաբեռնեալսն և զտաժանեալսն մեղօք: հանգիստ նոցա խոստանալով: Շնորհեա՛ և մեզ տէր՝ անխռով խաղաղութ͞բ զգիշերս անցուցանել. և՚ի ծանրութ͞է մեղաց զաշխատեալքս՝ ապահովութեա՛ ողորմութ͞բ քով. և արժանաւորեա՛ մշտնջենա-

ւոր հանգստեանն է ա՟մ ո՟գս քո: Եւ գո-
հանալով փառաւորեսցուք զքեզ ը՟ հօր
և ամենասուրբ հոգւոյդ, այժմ և միշտ և:

Խաղաղութիւն ամենեցուն:

Պարգևատու բարեաց, և աղբիւր խա-
ղաղութե՟ որ ա՟ծ մեր. յա՟մ սատանայական
խռովութե՟ց խաղաղա՟յ զմիտս մեր, և
զխորհուրդս 'ի գիշերիս յայսմիկ, և յա՟մ
ժամանակի: Ով զի առաջնորդեալք
յանցաւոր կենցաղս՝ ժամանեսցուք
յաւիտենական երկնից արքայութե՟ քո.
զոր պատրաստեցեր 'ի սկզբանէ աշխար
հի սրբոց քոց: Եւ ընդ նոսին գոհանա-
լով փառաւորեսցուք զհայր և զորդի
և զսուրբ հոգին, այժմ և:

---

Սաղմոս. 26:

Տէր լոյս իմ և կեանք իմ՝ ես յում
մէ՞ երկեայց. որ ապաւէն կենաց ի-
մոց՝ ես յում մէ՞ դողացայց:
Ի մերձենալ առ իս չարաց ուտել զմար-

մին իմ, նեղիչք իմ և թշնամիք իմ՝
նոքա տկարացան և անկան:

Թէ պատրաստեսցի 'ի վերայ իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. և թէ յարիցէ 'ի վր իմ ճակատամարտ սակայն և այսու-ևս
'ի քեզ տր յուսացայ:

Զմի խնդրեցի 'ի տնէ, և զնոյն աղաչեմ. բնակել ինձ 'ի տան տն զմ ա-ւուրս կենաց իմոց:

Տեսանել ինձ վայելչուէ տն և հրաման տալ 'ի տաճարի նորա:

Ծածկեաց զիս 'ի խորանի իւրում յաւուր չարի. ընդ յարկաւ ապար զիս 'ի ծածկոյթ խորանի իւրում:

Ի վիմէ բարձր արարեր զիս. և այժմ բարձր արա զգլուխ իմ 'ի վր թշնա-մեաց իմոց:

Շուրջ եղէց՝ և մատուցից 'ի խորանի նր պատարագ օրհնութե. օրհնեցից և սաղմոս ասացից տեառն:

Լուր տր ձայնի իմում, զի կարդացի
առ քեզ. ողորմեա ինձ, և լուր ինձ զի
քեզ ասաց սիրտ իմ. և խնդրեցին երեսք
իմ, զերեսս քո տր խնդրեցից։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. և
մի՛ խոտորիր բարկութբ ՚ի ծառայէ քումմէ.

Օգնական իմ լեր տր՝ մի՛ անարգեր զիս,
և մի՛ թողուր զիս ած փրկիչ իմ։

Հայր իմ և մայր իմ թողին զիս, և տր
իմ ընկալաւ զիս,

Օրէնսդէր արա զիս ՚ի ճանապարհի
քում. և առաջնորդեա ինձ ՚ի շաւիղս
քո ուղիղս։

Վասն թշնամեաց իմոց, մի՛ մատներ զիս
՚ի ձեռս նեղչաց իմոց։

Յարեան ՚ի վերայ իմ վկայք մեղաց. և
ստեցին ինձ յանօրէնութ իւրեանց։

Հաւատայի տեսանել զբարութի տն յերկ
րին կենդանեաց, համբերէր տն և քաջալերեաց
զօրասցի՛ սիրտ քո և համբերէր տն։

Փառք հօր և որդւոյ և։

Լուգ աղէաան Ներսէսի։

Նայեա՛ սիրով հայրըդ գթած ՚ի քո ստեղծեալ գործս ձեռաց. և ընդ բանակըս հրեշտակաց տո՛ւր պահապան մեզ տըկարացս. փըրկեա՛ զանձինս ՚ի փորձանաց ՚ի խաւարի շրջօղ դիւաց. զի տուընջեան և գիշերի տայուք քեզ փառս անլըռելի։

Լին անեղ անըսկըզբան ծընունդ անձառ որդի և բան. որ արարեր ըզտիւ գործոյ և ըզգիշեր ՚ի հանգիստ քնոյ. տո՛ւր ՚ի ննջել աչաց մարմնոյ արթուն լինել մեզ ըստ հոգւոյ. զի։

Բաբուն հոգւոց բանաւորաց աղբիւր լուսոյ բաշխող շնորհաց. ՚ի փակել դըրանց բնութեան մարմնոյ լոյս տո՛ւր աչաց սըրտից մերոց. ՚ի գիշերայս առ քեզ կանխել ը̄ հրեղինաց օրհնաբանել. զի։

Սուրբդ սրբոց երրորդութի՛ զմեզ մաքրեա՛ քեզ բնակութի. շնորհեա՛ ը̄ մանկանցն

տառապատոլ՝ հանգչել ընդ քեզ 'ի յան-կողնի. տո՛ւր զհայցուած բարեկամին զփոխ երից նըկանակին. զէ։

Երեւելի լոյս ստեղծեր զտիւ եւ զգի-շեր բաժանեցեր. ծագեա՛ մեզ տ̃ր 'ի գի-շերի զճառագայթս իմանալի. տո՛ւր յամ ժամանակի՝ զպահպանող աջ քո հովանի. զէ։

Սիրով քո հուր արկեալ յերկիր բորբո-քեցի 'ի հոգիս մեր. զխորհուրդ սրտից մեր մաքրեսցէ զլոյս գիտու̃ն քո փայ-լեսցէ. 'ի քնոյ մահու զմեզ զարթուս-ցէ՝ զմիտս բոցով քո վառեսցէ. զէ։

Ի քեզ նայիմք լուսոյ անմատոյց՝ 'ի զգայական ծածկեալ լուսոյ. որ վ̃ն մեր եղար 'ի դէն եւ ննջեցեր 'ի տապանի. առ մեզ ննջեա՛ արթուն բնու̃թ՝ հերքեա՛ զչարին ներգործու̃թ. զէ։

Ընդ լուսոյ անստուերի պաղատանօք կամք առաջի. որ փակեալ դրամբ յե-րեկոյին երեւեցար մետասանին. ը̃ն Թով-

ձայն առ քեզ գոչեմք տ՟ր և տ՟ր զքեզ-
դաւանեմք. էջ և առ մեզ յերկնից և
տուր զողջոյն քո 'ի հոգիս։

Բամբելքս զքեզ տ՟ր աղաչեմք մեզ յօգնու-
նայեա հայցեմք. պահապանդ իսրայէլի
անձանց մերոց լեր հովանի. օգնեա՛ առ
մեզ խաղաղարար և ննջեսցուք անխռո-
վաբար. զի ը՟ առաւօտս կանխեսցուք
օրհնել զքեզ ը՟ հօր հոգւով։

Գոչմամբ փողոյն զարթիցէ որ 'ի վերջ-
նումն գիշերի. լսել արա՛ զմեզ արժանի
և աջակողմն օրհնեալ դասի. անշէջ վա-
ռեալ լոյս լապտերաց ը՟ իմաստուն հինգ
կուսանաց. զի ը՟ փեսայիդ 'ի յառագաստ
հարսունք հոգւոյ մտցուք 'ի փառս։

Հալածեա՛ 'ի մէնջ տ՟ր 'նշանաւ խաչի քո
զընդդիմամարտ և զաներևոյթ զազանն
և մի՛ տար յապականութ՟ն զքո ժառանգութ՟։

Բարեխօսեա՛ վ՟ն մեր ա՟ծածին մարիամ. որ
ծնար զտ՟ր ա՟ծ որ հովուեսցէ զիսրայէլ ա-
մենազօր սքանչելի փառօքն իւրովք։

Մաղթանք։

Տր̅ մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն որ բարերար աղաչեմ զքեզ, օգնական իմ լեր։ Տր̅ մի՛ անարգեր զիս և մի՛ թողուր զիս ա̅ծ փրկիչ իմ։

Քարոզ։

Աղաչեսցուք զամենակալն ա̅ծ. և խնդրեսցուք ՚ի նմանէ. զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան, որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս, ՚ի դիւական խաւարէ՝ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև ՚ի կատարումն ժամանակի ամայ մերոյ։ Ամենակալ ա̅ծ։

Աղօթք։

Շնորհատու բարերար՝ յա̅մի առատ անմահ որ աղաչեմք զքեզ փարատեա՛ յանձանց մերոց զաղջամղջն, և զխաւարային խորհուրդս։ ՚Ի պատրանաց բանսարկուին պահեա՛ զմեզ. և շնորհեա՛ մեզ հաւատով ապաւինել յամենաս̅բ երրորդութիւն՝ ՚ի հայր և յորդի և ՚ի ս̅բ հոգին. այժմ և։

## Սաղմոս ՃԺԸ:

Երանեալ են անբիծք ՚ի ճանապարհի, և որք գնան յօրէնս Տն̃:
Երանի՛, որք քննեն զվկայութիւնս նր̃. բոլորով սրտիւ խնդրեսցեն զնա:
Ո՛չ եթէ որք գործեն զանօրէնութիւն, ՚ի ճանապարհս նորա գնացին:
Դու պատուիրեցեր զպատուիրանս քո՝ ՚ի պահել յոյժ:
Երանի՛ թէ յաջողէին ճանապարհք իմ, ՚ի պահել զարդարութիւնս քո:
Յայնժամ ես ոչ ամաչէի, ՚ի զգուշանալ ինձ ՚ի պատուիրանս քո:
Խոստովան եղէց քեզ Տր̃ յուղղութիւն սրտի իմոյ. ուսայց զիրաւունս արդարութեան քո:
Զիրաւունս քո պահեցից. մի՛ թողուր զիս մինչ իսպառ:
Ի՞ւ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր, այլ ՚ի պահել զբանս քո:
Բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ

մի՛ մերժեր զիս ՚ի պատուիրանաց քոց։

Ի սրտի իմում թագուցի զբանս քո, ո՟պ
զի մի՛ մեղայց քեզ։

Օրհնեալ ես դու տ՟ր ուսո՛ ինձ զար-
դարութ՟իս քո։

Շրթամբք իմովք պատմեցից զա՟մ
իրաւունս բերանոյ քո։

Ի ճանապարհս վկայուե՟ց քոց զուար-
ճացայ, որպէս յա՟մ ՚ի մեծուե՟։

Ի պատուիրանս քո հոգացայ. և զգու-
շացայ ՚ի ճանապարհս քո։

Զիրաւունս քո խոկեցայ, և ո՛չ մոռա-
ցայ զբանս քո։

Հատո՛ ծառայի քում, զի կեցից և պա-
հեցից զբանս քո։

Զարթո՛ զաչս իմ, և նայեցայց ՚ի
սքանչելիս օրինաց քոց։

Պանդուխտ եմ ես յերկրի. մի՛ թագու-
ցաներ յինէն զպատուիրանս քո։

Փափագեաց անձն իմ, ՚ի ցանկալ ինձ
յիրաւունս քո յա՟մ ժամ։

Սաստեցեր ամբարտաւանից անիծեալք խոտորեցան 'ի պատուիրանաց քոց։

Ի բաց արա յինէն զնախատինս և զարհամարհանս. զի զվկայութիւնս քո խնդրեցի

Քանզի և նստան իշխանք՝ և չարախօսէին զինէն. այլ ծառայ քո խորհէր յիրաւունս քո։

Զի վկայութիւնք քո խօսք իմ էին. և խորհուրդք իմ արդարութիւնք քո։

Անձկեցաւ անձն իմ 'ի հող. տուր կեցո զիս ըստ բանի քում։

Զճանապարհս իմ պատմեցի քեզ և լուար ինձ. ուսո ինձ զարդարութիւնս քո։

Ի ճանապարհս արդարութեանց քոց իմաստուն արա զիս. և քննեցից զսքանչելիս քո։

Տքնեցաւ անձն իմ առ 'ի ձանձրանալ. հաստատեա զիս 'ի բանս քո։

Զճանապարհս մեղաց 'ի բաց արա յինէն. և յօրէնս քո ողորմեա ինձ։

Զճանապարհս ճշմարտութե՛ քո ընտրեցի
եւ զիրաւունս քո ես ոչ մոռացայ։

Մերձեցայ ես ՚ի վկայութիս քո, Տէր մի՛ յա
մօթ առներ զիս։

Ի ճանապարհս պատուիրանաց քոց ըն-
թացայ. զի անդորր արարեր սրտի իմոյ

Օրէնսդի՛ր արա զիս Տէր, ՚ի ճանապարհս
իրաւանց քոց. եւ խնդրեցից զնա յամ
ժամ։

Իմաստո՛ւն արա զիս. եւ քննեցից զօ-
րէնս քո, եւ պահեցից զնա բոլորով
սրտիւ իմով։

Առաջնորդեա՛ ինձ ՚ի շաւիղս պատուի-
րանաց քոց. զի ընդ նոսա հաճեցայ։

Խոնարհեցո՛ զսիրտ իմ ՚ի վկայութիս քո,
եւ մի՛ յագահութիւն։

Դարձո՛ զաչս իմ, զի մի՛ տեսից զնան-
րութի. ՚ի ճանապարհս քո կեցո՛ զիս։

Հաստատեա՛ ծառայի քում՝ զբան քո
յերկիւղ քո։

Հա՛ն յինէն զնախատինս, զոր եւ կար-

ծեցի· զի դատաստանք քո քաղցր են:

Ահա ցանկացայ պատուիրանաց քոց, յա-
րդարութեան քում կեցո զիս:

Եկեսցէ 'ի վերայ իմ ողորմուի̅ քո տ̅ր· և
փրկուի̅ քո ըստ բանի քում:

Տաց պատասխանի որք նախատեն զիս բա-
նիւք· զի ես 'ի բանս քո յուսացայ:

Մի՛ 'ի բացեայ առներ յինէն 'ի բերանոյ
իմմէ զբան ճշմարտութե̅ մինչև յոյժ· զի
յիրաւունս քո յուսացայ:

Պահեցի զօրէնս քո յամ ժամ, յաւի-
տեան և յաւիտեանս յաւիտենից:

Գնայի ես յանդորրու· զի զպատուի-
րանս քո խնդրեցի:

Խօսէի զվկայուի̅ս քո առաջի թագա-
ւորաց, և ոչ ամաչէի:

Խորհէի 'ի պատուիրանս քո զոր սիրեցի:
Համբարձի զձեռս իմ 'ի պտուիրանս քո
զոր սիրեցի· և խորհէի յարդարութե̅ քում:

Յիշեա զբան ծառայի քո, յոր և յու-
սացուցեր զիս:

Սա մխիթարեաց զիս 'ի խոնարհութե̅ իմում,

զի բան քո կեցոյց զիս։

Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ։

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից Տէր, և մխիթարեցայ։

Տրտմութիւն կալաւ զիս 'ի մեղաւորաց, և որք լքին զօրէնս քո։

Գովելի էին ինձ իրաւունք քո, 'ի տեղւոջ պանդխտութեան իմոյ։

Յիշեցի 'ի գիշերի զանուն քո Տէր. և պահեցի զօրէնս քո։

Այս եղև ինձ ճանապարհ 'ի կեանս. զի զարդարութիւնս քո խնդրեցի։

---

Բաժին իմ ես դու Տէր, ասացի պահել ինձ զօրէնս քո։

Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով. ողորմեա՛ ինձ ըստ բանի քում։

Խորհեցայ 'ի ճանապարհս իմ. և դարձուցի զոտս իմ 'ի վկայութիւնս քո։

Պատրաստեցայ և ոչ խռովեցայ. զի պա-

հեցի զպատուիրանս քո:

Տոռունք մեղաց պատեցան զինև. այլ
զօրէնս քո ես ոչ մոռացայ:

Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լինել
առ քեզ, վասն իրաւանց և արդարութեան քո:

Հաղորդ էի ես ամենայն երկիւղածաց քոց. ո-
րոց պահեալ էին զպատուիրանս քո:

Ողորմութեամբ տեառն լի եղև երկիր. զարդա-
րութիս քո ուսո ինձ:

Քաղցրութի արարեր ընդ ծառայի քում
տէր, ըստ բանի քում:

Զքաղցրութի, զխրատ, և զգիտութի
ուսո ինձ. զի ՚ի պատուիրանս քո ես հա-
ւատացի:

Մինչ չև խոնարհեալ էի ես՝ մեղայ. վասն
այսորիկ զբանս քո պահեցի յոյժ:

Քաղցր ես դու տէր, և քաղցրութեամբ քով
ուսո ինձ զարդարութիս քո:

Բազմացաւ յիս անիրաւութիք ամբարտա-
ւանից. այլ ես բոլորով սրտիւ իմով
քննեցի զպատուիրանս քո:

Մածան ոպ̃ կաթն սիրտք նոցա. այլ
ես զօրէնս քո խօսեցայ:
Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս
որպէս ուսայց զարդարութիւնս քո:
Բարի են ինձ օրէնք բերանոյ քո, քան
զհազարս ոսկւոյ և արծաթոյ:
Ձեռք քո արարին՝ և ստեղծին զիս իմաս
տուն արա զիս՝ և ուսայց զպատուիրանս
քո:
Երկիւղածք քո տեսցեն զիս՝ և ուրախ
եղիցին. զի ես ՚ի բանս քո յուսացայ:
Ծանեայ Տր զի արդարութիւն են դատաս
տանք քո. յիրաւի խոնարհեցուցեր զիս:
Եղիցի ողորմութիւն քո ՚ի մխիթարել զիս.
ըստ բանի քում, ծառայս քո:
Եկեսցեն յիս գթութիւնք քո՝ և կեցից. զի
օրէնք քո խօսք իմ էին:
Ամաչեսցեն ամբարտաւանք՝ որք ՚ի տա
րապարտուց անիրաւեցան յիս. այլ ես
հոգացայց ՚ի պատուիրանս քո:
Խրատեսցեն զիս երկիւղածք քո, և որք

Ճանաչեն զվկայութիւնս քո։

Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարութեան
քում. զի մի՛ ամաչեցից։

Կարօտացաւ անձն իմ 'ի փրկութիւն քո. զի
ես 'ի բանս քո յուսացայ։

Սպասեցին աչք իմ բանի քում. ասացի
երբ մխիթարեսցէ զիս։

Եղէ ես որպէս տիկ 'ի պարզի. զի զար-
դարութիւնս քո ես ոչ մոռացայ։

Քանի՞ են աւուրք ծառայի քո. երբ
արասցես ինձ իրաւունս 'ի հալածչաց իմոց

Պատմեցին ինձ անօրէնք զխորհուրդս.
այլ ոչ որպէս զօրէնս քո։

Ամ պատուիրանք քո ճշմարիտ են. 'ի
նանիր հալածեցին զիս օգնեա՛ ինձ։

Փոքր մի ևս՝ և կորուսանէին զիս յերկրէ
այլ ես ոչ թողի զպատուիրանս քո։

Ըստ ողորմութեան քում՝ կեցո՛ զիս. և պա
հեցից զվկայութիւնս բերանոյ քո։

Յաւիտեան Տէր՝ բան քո կայ յերկինս. ազ
գէ մինչև յազգ ճշմարտութիւն քո։

Հաստատեցեր զերկիր՝ և կայ։
Հրամանի քում մնայ տիւ. զի ամենե-
քեան ծառայք քո են։
Եթէ ոչ օրէնք քո խօսք իմ էին, կան-
խաւ ես արդեւք կորուսեալ էի ՚ի խո-
նարհութեան իմում։
Յաւիտեան ոչ մոռացայց զարդարութիւնս
քո. զի նոքօք կեցուցեր զիս։
Քո եմ ես և կեցո զիս. զի զարդա-
րութիւնս քո խնդրեցի։
Ինձ սպասեցին մեղաւորք ՚ի կորուսանել
զի զվկայութիւնս քո ես ՚ի միտ առի։
Ամ՝ կատարածի տեսի զվախճան. յոյժ
անդորր էին ինձ պատուիրանք քո։
Որպէս սիրեցի զօրէնս քո. զօրհանա-
պազ խօսք իմ էին։
Քան զթշնամիս իմ իմաստուն արա-
րեր զիս ՚ի պատուիրանս քո. զի յա-
ւիտեան իմ էին։
Քան զամ՝ ուսուցիչս իմ իմաստուն ե-
ղէ. զի վկայութիւնք քո խօսք իմ էին։

Քան զծերսն իմաստուն եղէ. զի զպա-
տուիրանս քո քննեցի։

Յա̃մ ճանապարհաց չարաց արգելի
զոտս իմ. ո̃վ զի պահեցից զբանս քո։

Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ. զի
դու օրէնսգէտ արարեր զիս։

Որպէս զի քաղցր են 'ի քիմս իմ բանք
քո քան զմեղր՝ բերանոյ իմոյ։

Ի պատուիրանաց քոց իմացեալ ատեցի
զա̃մ ճանապարհ չարաց. զի դու օրէնըս
գէտ արարեր զիս։

Ճրագ են բանք քո ոտից իմոց, և լոյս
տան շաւղաց իմոց։

Երդուայ և հաստատեցի. զի պահեցից
զա̃մ իրաւունս արդարութ̃ քո։

Խոնարհ եղէ մինչև յոյժ. տէր կեցո́
զիս ըստ բանի քում։

Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեսցի տէր
և զիրաւունս քո ուսո́ ինձ։

Անձն իմ 'ի ձեռս քո է յա̃մ ժամ. և զօ-
րէնս քո ես ոչ մոռացայ։

Եդին ինձ մեղաւորք որոգայթ. 'ի պատուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ։
Ժառանգեցի զվկայութիւնս քո յաւիտեան. զի ցնծութիւն է սրտի իմոյ։
Խոնարհեցուցի զսիրտ իմ, առնել զարդարութիւնս քո յաւիտեան, վ͞ն հատուցման։
Զանօրէնս ատեցի. եւ զօրէնս քո սիրեցի։
Օգնական եւ փրկիչ իմ ես դու. եւ ես 'ի բանս քո յուսացայ։
Ի բաց եղերուք յինէն չարք. եւ քննեցից զպատուիրանս ա͞յ իմոյ։
Օգնեա՛ ինձ ը͞ս բանի քում, եւ կեցո՛ զիս. եւ մի՛ յամօթ առներ զիս 'ի յուսոյ իմմէ։
Օգնեա՛ ինձ եւ ապրեցո՛ զիս. եւ խոնարհեցայց յիրաւունս քո յա͞մ ժամ։
Անարգեցեր զամենեսին՝ որք ապստամբք եղեն յարդարութեանց քոց. զի անիրաւութիւն էին խորհուրդք նոցա։
Յանցաւորս համարեցայ զա͞մ մեղաւորս երկրի. վ͞ն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Բեւեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ. ՚ի դատաստանաց քոյ երկեայց յոյժ։

---

Արարի իրաւունս և արդարութիւն. մի՛ մատնիր զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց։

Ընկա՛լ զծառայս քո ՚ի բարի. զի մի՛ ամբարտաւանք զրկեսցեն զիս։

Սպասեցին աչք իմ փրկութեան քում Տէր, և բանից արդարութեան քո։

Արա՛ ընդ ծառայի քում Տէր ըստ ողորմութեան քում. զարդարութիւնս քո ուսո՛ ինձ։

Ծառայ քո եմ ես, իմաստո՛ւն արա զիս և ծանեայց զվկայութիւնս քո։

Ժամ է պաշտել զՏէր. խափանեցին զօրէնս քո։

Վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո քան զոսկի և զտպազիոն։

Ամենայն պատուիրանք քո յաջողեսցին ինձ. զի ատեցի ես զճանապարհս չարաց։

Սքանչելի են վկայութիւնք քո, վասն այսորիկ քննեաց զնոսա անձն իմ։

Յայտնութիւն բանից քոց լուսաւոր է, և իմաստուն առնէ զտղայս։

Զբերան իմ բացի, և առի զհոգի. ՚ի պատուիրանս քո փափագեաց անձն իմ։

Նայեա՛ առ իս և ողորմեա՛ ինձ, ըստ իրաւանս սիրողաց անուան քո։

Զճանապարհս իմ ուղղեա՛ ինձ ըստ բանէ քում. և մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք։

Փրկեա՛ զիս ՚ի զրպարտութենէ մարդկան և պահեցից զպատուիրանս քո։

Երեւեցո՛ զերեսս քո ՚ի ծառայս քո, և ուսո՛ ինձ զարդարութիւնս քո։

Վտակք ջուրց իջին յաչաց իմոյ. զի ո՛չ պահեցին զօրէնս քո։

Արդար ես դու տէր, և ուղիղ են դատաստանք քո։

Պատուիրեցեր զարդարութիւն վկայութեանց քոց. և ճշմարիտ են յոյժ.

Մաշեաց զիս նախանձ քո, զի մոռացան զբանս քո թշնամիք իմ։

Ընտրեալ է բան քո յոյժ, և ծառայ քո սիրեաց զսա։

Մանուկ եմ ես և արհամարհեալ. և
զարդարութիս քո ես ոչ մոռացայ:
Արդարութի քո՝ արդարութի յաւիտենից.
և օրէնք քո ճշմարիտ են:
Նեղութիք և վիշտք գտին զիս. և պա-
տուիրանք քո խօսք իմ էին:
Արդարութի են վկայութիք քո յաւիտեան
իմաստուն արա և կեցո զիս:
Կարդացի առ քեզ բոլորով սրտիւ իմով
լուր ինձ տր, զի զարդարութիս քո խնդրեցի
Աղաղակեցի առ քեզ՝ և փրկեա զիս.
և փրկեցից զվկայութիս քո:
Կանխեցի տարաժամու՝ աղաղակեցի. և
ես 'ի բանս քո յուսացայ:
Կանխեցին աչք իմ առաւօտու. 'ի խօսիլ
ինձ զբանս քո:
Զայնի իմում լուր տր՝ ըստ ողորմութե
քում. և յիրաւունս քո կեցո զիս:
Մերձեցան զիս հալածիչք իմ զանօ-
րէնութի. զի յօրինաց քոց հեռի եղեն:
Մերձ ես դու տէր. և ամ պատուիրանք

քո ճշմարիտ են:

Ի սկզբանէ ծանեայ 'ի վկայութե̄ց քոց
զի յաւիտեան հաստատեցեր զնոսա:

Տե՛ս զխոնարհութի̄ իմ, և փրկեա՛ զիս.
զի զօրէնս քո ես ո՛չ մոռացայ:

Դատեա՛ զդատաստանս իմ, և փրկեա՛
զիս. և վ̄ն բանի քում կեցո՛ զիս:

Հեռի է 'ի մեղաւորաց փրկութի̄, զի
զիրաւունս քո ո՛չ պահեցին:

Գթութի̄ք քո բազում են Տ̄ր, և ըստ
իրաւանց քոց կեցո՛ զիս:

Բազում են որք հալածեն և նեղեն զիս
'ի վկայութե̄ց քոց ես ո՛չ խոտորեցայ:

Հայէի յանապորոյնս՝ և մաշէի, զի զպ-
պատուիրանս քո ո՛չ պահեցին:

Տե՛ս՝ զի զպատուիրանս քո սիրեցի. Տ̄ր
ողորմու̄թ քո կեցո՛ զիս:

Սկիզբն բանից քոց ճշմարտութի̄ է. յա-
ւիտեան են ա̄մ իրաւունք արդարութե̄ քո:

Իշխանք հալածեցին զիս 'ի նանիր. և
'ի բանից քոց երկեաւ սիրտ իմ:

Ցնծայայ ես 'ի բանս քո ոպ̄ այն, որ
գտանէ աւար բազում։

Զմեղս ատեցի և անարգեցի, և զօրէնս
քո սիրեցի։

Եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ,
վ̄ս իրաւանց և արդարութե̄ քո։

Խաղաղութ̄ի բազում է այնոցիկ, ովք սի-
րեն զօրէնս քո. և ոչ գոյ 'ի ն̄ս գայ-
թակղութիւն։

Սպասեցի փրկութե̄ քում տէր և զպա-
տուիրանս քո սիրեցի։

Պահեաց անձն իմ զվկայութ̄ս քո, և սի-
րեաց զնոսա յոյժ։

Պահեցից զպատուիրանս՝ և զվկայութ̄ս
քո. զի ա̄մ ճանապարհք իմ առաջի քո են։

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տ̄ր
ը̄ս բանի քում իմաստուն արա զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տ̄ր. և
բանիւ քո փրկեա զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութ̄ս քո.
յորժամ ուսուսցես ինձ զարդարութ̄ս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ա͞մ. պատուիրանք քո արդարութ͞ին են։

Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութ͞ե քում տէր, և օրէնք քո խօսք իմ են։

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զք՛զ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես ո՛պ զոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո, զի ի զպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ։

Փառք հօր և որդւոյ և։

Նո՛ զՀՆի ատի Ղարաշան։

Ի քէն հայցեմք հայր գթութեանց և ա͞ծ մխիթարութեանց. 'ի տխրական գիշերային մերձեալ ժամուս, մխիթարեա՛ զմեզ 'ի տրտմութեանց մերոց. և շնորհեա՛ զուրախութ͞ի գործովք արդարութեան. աղաչանօք ս͞բ. ա͞ծածնին և ա͞մ արդարոց։

Ըստ քաղցրագոյն ա͞ծային քո հրամանի

կոչման որդի տ՟յ, եկեալ եմք առաջի քո յերեկոյիս աշխատեալք, և ծանրաբեռնեալք. թեթևացո՛ ի ծանրութեց մեղաց զանձինս՝ և զօրացո՛ բառնալ կամաւ ըզքաղցր լուծ քոյ պատուիրանաց. աղա՜ Պաղատիմք առ քեզ հոգւով ի հանդըրձեան հասեալ ժամուս մարդասէր հոգի տ՟յ. յորժամ նորոգես զերեսս երկրի, և վերստին ստանաս զոգիս մարդկան, նորափետուր զարդարեա՛ զննջեցեալն մեր զծնեալսն ի քէն տ՟բ աւազանաւն. ա: Օ՟կենդանարար անարատ ծնողի քո արկանեմք առաջի անոխակալ տէրութեդ քո յորժամ գաս փառօք հօր դատել ըզթշնամին խաչի քո. ներեա՛ յանցանաց մերոց բարեխօսութ՟ մօր քո և կուսի. աղաչեմք զքեզ տ՟ր սպահպանեա՛ զմեզ ը՟ հովանեաւ խաչի քո սուրբ:

Զաղօթս արա և զմեզ տ՟ր, ը՟ սրբոց քոց առաքելոյն, որք արժանի եղեն տեսա-

նել զքեզ 'ի յարութեան քո. արժանաւորեա մեր տեսանել զքեզ 'ի միւսանգամ քո գալստեան. յօրհնութիւն առաքող լին 'ի բարձունս: Ի նստիլ քո յաջմէն դատաւոր ահեղ, աղաչանօք սբ ամենեցուն յիշեա զննջեցեալսն մեր, յորժամ գայցես անճառ փառօք. քանզի և քո են փառք յաւիտեանս. ամէն:

Մաղթանք:

Զոգւոցն հանգուցելոց քն տր՝ արա հանգիստ և ողորմութի. և մեզ մեղաւորացս շնորհեա զթողութի յանցանաց:

Քարոզ:

Եւ ևս խաղաղութե զտէր աղ:

Վասն հանգուցեալ հոգւոցն աղաչեսցուք զփրկիչն մեր քն. Տր ողմ:

Աղօթք:

Քրիստոս որդի այ անոխակալ և բարեգութ՝ գթա քո արարչական. Տր ողմ:

Օրհնեալ տէր մեր յս քս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես:

Կարգաւորութիւն հասարակաց աղօթից հանգստեան ժամուն. որ կատարի ՚ի դէմս հօր տէ. ըէ պահպանողական աղօթք միաբանին պահելոյ զմեզ ՚ի խաւարային գիշերի:

Առաքեա՛ տէր զլոյս քո՝ և զճշմարտութիւն քո. զի առաջնորդեսցեն ինձ և հանգիցես ՚ի լեառն սուրբ և ՚ի յարկս քո:

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած. որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ Աստուած Աստուած իմ:

Ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ նմա փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

Փառք հօր և որդւոյ և:

Եւ ես խաղաղութեան զտէր աղա:

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

## Սաղմոս. 118։

Եկեսցէ ՚ի վերայ իմ ողորմութի̃ քո տ̃ր·
և փրկութի քո ըստ բանի քում։
Տաց պատասխանի՝ ոյք նախատեն զիս
բանիւք. զի ես ՚ի բանս քո յուսացայ։
Մի՛ ՚ի բացեայ առներ ՚ի բերանոյ իմ-
մէ զբան ճշմարտութե̃ մինչև յոյժ. զի
յիրաւունս քո յուսացայ։
Պահեցի զօրէնս քո յա̃մ ժամ. յաւի-
տեան և յաւիտեանս յաւիտենից։
Գնայի ես յանդորրու՝ զի զպատուի-
րանս քո խնդրեցի։
Խօսէի զվկայութի̃ս քո առաջի թագաւո-
րաց, և ոչ ամաչէի։
Խորհէի ՚ի պատուիրանս քո, որ սիրեցի։
Համբարձի զձեռս իմ ՚ի պատուիրանս
քո, զոր սիրեցի և խորհէի յարդարութե̃
քում։
Յիշեա՛ զբան ծառայի քո տ̃ր և յու-
սացուցեր զիս։
Սա մխիթարեսցէ զիս ՚ի խոնարհութե̃ ի-

մում. զի բան քո կեցոյց զիս։
Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ. այլ յօրինաց քոց ես ո՛չ խոտորեցայ։
Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից Տէր, և մխիթարեցայ։
Տրտմութի՛ւն կալաւ զիս ՚ի մեղաւորաց. և որք թողին զօրէնս քո։
Գովելի են ինձ իրաւունք քո ՚ի տեղւոջ պանդխտութեան իմոյ։
Յիշեցի ՚ի գիշերի զանուն քո Տէր. և պահեցի զօրէնս քո։
Այս եղև ինձ ճանապարհ ՚ի կեանս. զի զարդարութիւնս քո խնդրեցի։
Զանօրէնսն ատեցի, և զօրէնս քո սիրեցի։
Օգնական և փրկիչ իմ ես դու. և ես ՚ի բանս քո յուսացայ։
Ի բաց եղերուք յինէն չարք, և քննեցից զպատուիրանս Աստուծոյ իմոյ։
Օնեա՛ ինձ ըստ բանի քում, և կեցո՛ զիս. և մի՛ յամօթ առներ զիս ՚ի յուսոյ իմմէ։
Օգնեա՛ ինձ և ապրեցո՛ զիս. և խոնարհե-

ցայգ յիրաւունս քո յա̄մ ժամ։
Անարգեցեր զամե̃ն՝ որք ապստամբք ե-
ղեն յարդարութե̃ց քոյ. զի անօրէնութի̃
էին խորհուրդք նոցա։
Յանցաւորս համարեցայ զա̄մ մեղաւորս
երկրի. վա̄ այսորիկ սիրեցի զպտ̄ուրանս քո
Բևեռեա՛ ը̄ երկիւղ քո զմարմին իմ, զի
'ի դատաստանաց քոյ երկեայց յոյժ։
Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տ̄ր
ըստ բանի քում՝ իմաստուն արա զիս։
Մտցեն աղօթք իմ առաջի քո տ̄ր. և
բանիւ քով փրկեա զիս։
Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութի̃ս քո.
յորժամ ուսուսցես ինձ զարդարութի̃ս քո։
Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ա̄մ
պատուիրանք քո արդարութի̃ են։
Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս. զի
զպատուիրանս քո ընտրեցի։
Ցանկացայ փրկութե̃ քում տ̄ր. և օրէնք
քո խօսք իմ էին։
Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և ի-

րաւունք քո օգնեսցեն ինձ:

Մոլորեցայ ես ոպ՟ զոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո. զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ:

Արդ՝ արձակեա՛ զծառայս քո. տր̃ ը̃ բանի քում ՚ի խաղաղուի̃. զի տեսին աչք իմ զփրկուի̃ քո, զոր պատրաստեցեր առաջի ամ̃ ժողովրդոց:

Լոյս յայտնեցեր հեթանոսաց. և փառք ժողովրդեան քում իսրայէլի:

փառք հօր և որդ:

Մաղթանք:

Անձն իմ ՚ի ձեռս քո է յամ̃ ժամ. և ՚ի մջ̃ խաչ̃ քո յուսացեալ իմ Թագաւոր երկնաւոր. զբազմու̃ն սր̃ց քոց բարեխօս ունիմք առ քեզ: Որ երկայնամիտդ ես առ ամենին, մի՛ անտես առներ զապաւինեալս ՚ի քեզ. այլ պահեա՛ պատուական, և մեք խաչիւ քով ՚ի խաղաղութեան:

Քարոզ:

Աղաչեսցուք զամենակալն ած̃ և խնդ-

րեսցուք ’ի նմանէ, զի առաքեսցէ ըզ-հրեշտակ խաղաղութեան, որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս. ’ի դիւական խռովութենէ՝ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև ’ի կատարումն ժամանակի սմայ մերոյ. ամենակալն տէր

Զհանգիստ գիշերիս խաղաղութեամբ:

Զհրեշտակ: Զքաւութիւն: Զսրբոյ: Եւ ևս

Զանձինս: ողորմեայ:

Աղօթք:

Տէր Աստուած մեր դու պահեա զմեզ խաղաղութեամբ ’ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի: Ընդ որք երկիւղ քո բնակեալ պահեա զմիտս և զխորհուրդս մեր: Որ զի յամենայն ժամ քև պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն: Եւ քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյդ Սրբոյ. այժմ և միշտ և:

Խաղաղութիւն ամենեցուն:

Հրեշտակի խաղաղութեան յանձն արա զանձինս մեր տէր զօրութեանց. որ եկեալ պա-

հեսցէ զմեզ անխռովս 'ի տուէ և 'ի գիշերի, յարթնումն և 'ի հանգստեան մերում. զի դու ես արարիչ լուսոյ, և հաստիչ գիշերի: Եւ այժմ՝ աղաչեմք ըզ քեզ Տէր Աստուած մեր, զհանգիստ գիշերիս շնորհեա խաղաղութեան անցուցանել. և հաստատել 'ի պաշտօն առաւօտու յերկրպագութեան և 'ի փառաբանութեան ամենասուրբ երրորդութեանդ. այժմ և:

## Մաղթանք:

Անկանիմք առաջի քո որք ծառայեն և աղաչեմք զանարատ զկոյսդ. բարեխօսեա վասն անձանց մերոց, և աղաչեա ըզ միածին որդիդ. փրկել զմեզ 'ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

Որ արձակիչդ ես կապելոց պարգևատու ամենեցուն, այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա և զիս զբազմամեղս 'ի կապից մահու 'ի կեանն յաւիտենից:

Մաղթանս զօրաւորս ընդդէմ արհաւրաց գիշերայնոց. սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն։

ԺԲ։

Ընկալ քաղցրութեամբ Տէր ամենահզօր, զդառնացողիս զաղաչանս. մատի՛ր գթութեամբ առ պատկառեալս դիմօք. փարատեա՛ ամենապարգև՝ զամօթալից տրտմութիւնս. բարձ յինէն ողորմած զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա՛ հնարաւոր՝ զմահացու կըրթութիւնս. աւերեա՛ միշտ յաղթօղ զխաբողին հաճութիւնս. բացադրեա՛ վերնային ըզդիմելոյն մառախուղ. կնքեա՛ կեցուցիչ զկորուսչին ընթացմունս. ջրեա՛ ծածկատես զըմբռնողին չար դաւմունս. խորտակեա՛ անքննելին զմարտողին դիմեցմունս Տեառնագրեա քո անուամբդ՝ զլուսանցոյց երդ յարկիս. պարփակեա՛ քո ձեռամբդ՝ պատուաստող տաճարիս. գծագրեա՛ քո արեամբդ՝ զմուտ սեմոյ սենեկիս. կերպացո՛ զքո նշանդ՝ ՚ի հատս ելից մաղթողիս. ամրացո՛ քո աջովդ՝ զհան-

զատեանս լսշտի· մաքրեսցես ՚ի հաղբեց
զծածկարան անկողնոյս· պահեսցես քո
կամօքդ՝ զտառապեալ անձն ոգւոյս· ան-
խարդախ արասցես՝ զքո շնորհեալ շունչ
մարմնոյս· կացուսցես շրջափակ՝ զպար
զօրուդ երկնայնոյ· կարգեսցես ՚ի դիմի
ընդդէմ դիւացն դասու: Տո՛ւր հանգիստ
բերկրութե̃ մահահանգոյնս նիրհման ՚ի
խորուե̃ զիշերիս· բարեխօսու̃ք հայցուա-
ծոյ սր̃բ ա̃ծածնիդ՝ և ա̃մ ընտրելոց:
Ամ̃փրկեալ պարուրեա՛ զպատուհան տե
սուե̃ց՝ զզայարանայս իմաստից՝ անզղար
հուրե̃լ զետեղմամբ՝ ՚ի ծփական խռո
վուե̃ց, կենցաղական զբաղմանց, անըր
ջական երազոց, խօլականաց կնորից, յի
շատակաւ քո յուսոյդ՝ անմխասելի պաշտ
պանեալ: Եւ սթափե̃լ վերստին ՚ի նընջ
մանէ ծանրուե̃՝ ամենազգաստ արթնու̃ք
հոգենորոգ զուարթու̃ք ՚ի քեզ արձա-
նացեալ զայս ձայն մաղթանաց բուր-
մամբ հաւատոյ քեզ ամենօրհնեալ թա

գաւոր փառաց անճառելիփառաբանողաց երկնագումար խումբից երգակցեալ լեր կենս առաքել։ Զի դու փառաւորեալ ես յամ արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

Նորին սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն. ԽԱ։

Որդի այ կենդանւոյ օրհնեալ յամ. հօրդ ահաւորի՝ անքննելի ծնունդ. որ տկարանայ առ 'ի քէն և ոչ ինչ։ Որ 'ի ծագել անստուեր նշուլից՝ ողորմութե քո փառաց, հալին մեղք։ հալածին դեւք. ջնջին յանցանք. լուծին կապանք. խորտակին շղթայք. կենդանածնին մահացեալք բժշկին հարուածք. ողջանան վէրք. բառնին ապականութիւնք. տեղի տան տըխրութիւնք. նահանջին հեծութիւնք. փախնու խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն. փարատի մառայլն. սպառի աղջամուղջն վերանայ մութն. դայ գիշերն. տարագրի տագնապն. չքանան չարիքն. հալածին

յուսահատութիւնս. և լծապաւորէ ձեռն քո ամենակալ, քաւիչդ իմ։ Որ ո՛չ եկիր կ'որուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. լծո՛ղ ինձ զանլծիւ չարիսն իմ՝ բազումողորմութ̄դ. զի դու միայն ես յերկնի անճառ՝ և յերկրի անզննելի ՚ի տարր գոյի՝ և յեզերս ծագաց աշխարհի. սկիզբն իմ և յիմի. իմ՝ լրմամբ օրհնեալ ՚ի բարձունս։ Եւ քեզ ը̄ն հօր և հոգւոյդ ս̄բյ փառք յաւիտեանս. ամէն։

---

Աղօթք [illegible] անձին հաւատացելոց ՚ի Քրիստոս. զոր ասացեալ է սրբոյն Ներսէսի հայոց կաթողիկոսին։

Հաւատով խոստովանիմ՝ և երկիր պագանեմ՝ քեզ, հայր և որդի և ս̄բ հոգի. անեղ և անմահ բնութ̄ի. արարիչ հրեշտակաց և մարդկան և իմ՝ եղելոց և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս։

Հաւատով խոստովանիմ՝ և երկիրպագա-

նեմ քեզ անբաժանելի լոյս միասնական ած երրորդութի. և մի ածութի. արարիչ լուսոյ և հալածիչ խաւարի. հալածեա՛ ՚ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և անգիտութե. և լուսաւորեա՛ զմիտս իմ ՚ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ՚ի հաճոյս և ընդունիլ ՚ի քէն զխնդրուածս իմ. և:

Հայր երկնաւոր ած ճշմարիտ, որ առաքեցեր զորդին քո սիրելի ՚ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առաջի քո. ընկա՛լ զիս ոպ զանառակ որդին. և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառաջին, զոր մերկացայ մեղօք. և ող:

Որդի այ ած ճշմարիտ, որ խոնարհեցար ՚ի հայրական ծոցոյ, և առեր մարմին ՚ի սրբոյ կուսէն Մարիամայ վն մերոյ փրկութե խաչեցար թաղեցար և յարեար ՚ի մեռելոց. և համբարձար փառօք առ հայր մեղայ յերկինս և առաջի քո յիշեա՛ զիս ոպ զաւազակն, յորժամ գաս արքայութեամբ քով. և ող:

Հոգի ոյ ած ճշմարիտ, որ իջեր 'ի յորդանան և 'ի վերնատունն. և լուսաւորեցեր զ՚իս մկրտութ սբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա՛ զիս վերստին ածային հրով քով որ հրեղէն լեզուօք զառաքեալսն. և ող:

Անեղ բնութ, մեղայ քեզ մտօք իմովք հոգւով և մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վն անուանդ քում սրբոյ. և ող:

Տէրօղ ամի, մեղայ քեզ խորհրդով՝ բանիւ, և գործով. ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա՛ զանուն իմ 'ի դպրութ կենաց. և ող:

Քննօղ գաղտնեաց, մեղայ քեզ կամայ և ակամայ, գիտութ և անգիտութ, թողութ շնորհեա՛ մեղաւորիս. զի 'ի ծննդենէ սբ աւազանին մինչև ցայսօր մեղուցեալ եմ առաջի ածութ քո զգայարանօք իմովք և ամ անդամօք մարմնոյս. և ող:

Ամենախնամ տր, դի՛ր պահապան աչաց

իմոյ զերկիւղ քո Տէր՝ ոչ ևս հայել յարատ. և ականջաց իմոց ոչ ախորժել լսել զբանս չարութեան. և բերանոյ իմոյ ոչ խօսել զստութիւն. և սրտի իմոյ ոչ խորհել զչարութիւն. և ձեռաց իմոց ոչ գործել զանիրաւութիւն և ոտից իմոց ոչ գնալ ՚ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զշարժումն սոցա լինել ըստ պատուիրանաց քոց յամենայնի. և ող։

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քոյ, զոր արկեր յերկիր՝ բորբոքեա յանձն իմ. զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ. և սըրբեսցէ զխիղճ մտաց իմոց. և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ. և վառեսցէ զլոյս գիտութեան քո ՚ի սրտի իմում. և։

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ զիմաստութիւն զբարիս խորհել և խօսել և գործել առաջի քո յամենայն ժամ. ՚ի չար խորհրդոց ՚ի բանից և ՚ի գործոց փրկեա զիս. և ող։

Կամեցող բարեաց Տէր կամ արար, մի՛ թո-

զուր զիս 'ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ
կամաց քոց բարեսիրաց. և։

Արքայ երկնաւոր՝ տուր ինձ զարքայութի քո. զոր խոստացար սիրելեաց քոց, և զօրացո զոգիս իմ՝ ատել զմեղս և սիրել զքեզ միայն, և առնել զկամս քո. և։

Խնամօղ արարածոց՝ պահեա նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ 'ի պատրանաց մեղաց, 'ի փորձութեց դիւաց՝ և 'ի մարդոց անիրաւաց, և յամ՟ վտանգից
հոգւոյ և մարմնոյ. և ող։

Պահապան ամի քո, աջ քո հովանի լիցի 'ի վր իմ 'ի տուէ և 'ի գիշերի՝ 'ի նստել 'ի տան՝ 'ի գնալ 'ի ճանապարհ, 'ի ննջել և 'ի յառնել, զի մի՛ երբէք սասանե-
ցայց. և։

Ած իմ որ բանաս զձեռն քո, և լնուս զամ արարածս ողորմութբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա և պատրաստեա

զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմ-
հետէ մինչև յաւիտեան. և:

Դարձուցիչ մոլորելոց՝ դարձո զիս 'ի չար
սովորութեանց իմոց 'ի բարի սովորութիւն. և բե-
ւեռեա 'ի հոգի իմ՝ զսոսկալի օր մահուն. և
զերկիւղ գեհենոյն, և զսէր արքայութեան.
զի զղջացայց 'ի մեղաց, և գործեցից
զարդարութիւն. և:

Աղբիւր անմահութեան՝ աղբերացո 'ի սրտէ
իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս
պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ
յառաջքան զելանելն իմ յաշխարհէս. և
Պարգևիչ ողորմութեան՝ պարգևեա ինձ ուղ-
ղափառ հաւատով և բարի գործով, և սրբոյ
մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ գալ
առ քեզ. և:

Բարերար Տէր՝ հրեշտակի բարւոյ յանձն
արասցես զիս քաղցրութեամբ աւանդել ըզ-
հոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չա-
րութիւն այսոցն. որք են 'ի ներքոյ երկնից. և:
Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա ըզ-

Հոգի իմ՝ ուրախութ տեսանել զԼոյս փառաց քոց ՚ի կոչման աւուրն. և հանգչել յուսով բարեաց յօթեւանս արդարոց մինչև յօր մեծի գալստեան քո. և։

Դատաւոր արդար՝ յորժամ գաս փառօք Հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս մի՛ մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում. այլ փրկեա զիս ՚ի յաւիտենական հրոյն. և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութդ. և։

Ամենողորմ տէր՝ ողորմեա ամ հաւատացելոց ՚ի քեզ, իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութի, որ առ իս յանցանաց. և դարձո զնս ՚ի չարեայն՝ զոր ողորմութ քում՝ արժանի եղիցին. և։

Փառաւորեալ տէր՝ ընկալ զաղաչանս ծառայիս քո և կատարեա ՚ի բարի խնդրուածս իմ. բարեխօսութ սրբուհւոյ Ածածնին և յովհաննու մկրտչին. և սրբոյն

Ստեփաննոսի Նախավկային, և սրբոյն գրի
գորի մերոյ Լուսաւորչին, և սրբց առա-
քելոց, մարգարէից, վարդապետաց, մար
տիրոսաց, հայրապետաց, ճգնաւորաց, կու
սանաց, միանձանց, և ամ՝ սրբոց քոց
երկնաւորաց և երկրաւորաց։ Եւ քեզ
փառք և երկրպագութի անբաժանելի սբ
երրորդութդ՝ յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

Մաղթանք։

Վս սրբուհւոյ անարատ մօր քո և կուսի
տր ընկալ զաղաչանս մեր և կեցո զմեզ

Քարոզ։

Սուրբ զածածնին և զամ՝ սբս բարե-
խօս արասցուք առ հայր ՚ի յերկինս. զի
կամեցեալ ողորմեսցի և գթացեալ կե-
ցուսցէ զարարածս իւր, ամենակալ տր ած

Աղօթք։

Ընկալ տր զաղաչանս մեր բարեխօսութբ
սրբուհւոյ ածածնին անարատ ծնողի մի-
ածնի որդւոյ քոյ. և աղաչանօք ամ սրբց

քոյ. և որոց այսօր է յիշատակ։ Լո՛ւր մեզ տէր, և ողորմեա՛ ներեա՛ քաւեա՛ և թո՛ղ զմեղս մեր։ Արժանաւորեա՛ գոհութ̅ փառաւորել զքեզ ը̅ որդւոյ և ը̅ սբ̅յ հոգւոյդ. այժմ և միշտ և։

Օրհնեալ տր̅ մեր յս̅ քս̅. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես։

Մաղթանք։

Զհանգստեան զաղօթս և պաղատանս ընկա՛լ մարդասէր ած̅ 'ի հաճոյս բարե-րար կամաց քոց. Եւ մեր մեղաց և բազում յանցանացն թողութի՛ շնորհեա՛։ Եւ քեզ փառք յաւիտեանս ամէն։

փառք քեզ տր̅ ած̅, որ պարգևեցեր զօրս զայս բարեաւ և խաղաղութ̅ անցուցանել։ Մարդասէր ած̅՝ զառաջիկայ գիշերս՝ որ 'ի վր̅ մեր գալոց է, 'ի մեղաց փրկեա՛, 'ի չարեաց ազատեա՛, և 'ի գործս բարիս առաջնորդեա՛։ Առաւօտու օրհնութե̅ն և փառաբանութե̅ն արժանի՛ արա զամ̅ հաւատացեալս անուամբդ քում սբ̅յ

և պահեա՛ 'ի խաղաղութ՟ն։ Տ՟ր ա՟ծ մեր՝ Տո՛ւր զքո խաղաղութի՟դ ա՟մ՝ աշխարհի. բա՛րձ զյասութ՟ս և զպատուհասն 'ի յարարածոյ։ Ողորմեա՛ց հարց և եղբարց մերոց կենդանեաց և հանգուցելոց։ Ողորմեա՛ց զեկեղեցի շինողաց, երախտաւորաց, պտղատուից՝ սպասաւորաց. և այնոցիկ՝ որք ը՟ հովանեաւ ս՟րյ տաճարիս են հանգուցեալ։ Տ՟ր ա՟ծ՝ օգնեա՛ թագաւորաց քրիստոնէից. և իշխանացն բարեպաշտից. զօրաց և զաւագաց նոյին պահելով 'ի խաղաղութ՟ն։ Տ՟ր ա՟ծ մեր՝ պահեա՛ զառաջնորդս և զեղբայրութի՟ս մեր ամբողջ և անխռով 'ի կամս ողորմութ՟ն քո։ Նշանաւ ս՟բ և պատուական խաչիւ քո հալածեա՛ զերևելի և զաներևոյթ թշնամին 'ի սահմանաց մերոց և 'ի բնակութ՟էս մերմէ, փրկեա՛ զմեզ 'ի հրոյն յաւիտենից.

Եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Օրհնե՟լ եղերուք 'ի շնորհաց ս՟բ հոգւոյն հանգերուք խաղաղութ՟բ. և Տ՟ր եղիցի ընդ ամենեսեանդ. ամէն։

## Դարական Հաղբատեցին, յորդորան զղջման:

Խորհուրդ խորին անհաս անսկիզբն
որ զարդարեցեր զվերին պետութիւն
'ի յառագաստ անմատոյց լուսոյն. գերա-
պանծ փառօք զդասս հրեղինաց: Ան-
ճառահրաշ զօրութ. ստեղծեր զադամ՝
պատկեր տիրական. և նազելի փառօք
զգեստաւորեցեր. 'ի դրախտն եդենի տե-
ղի բերկրանաց: Չարչարանօք քո նոր
միածնին. նորոգեցան արարածք ամ. և
վերստին մարդն անմահացաւ. զարդա-
րեալ 'ի զգեստ անկողոպտելի. Անձրև-
ածին բաժակ հրահոսան. որ հեղեր
յառաքեալսն 'ի սուրբ վերնատանն.
հեղ և 'ի մեզ հոգիդ սուրբ քո. ընդ
պատմուճանի զքո զիմաստութիւն: Տան
քում վայել է սրբութի. որ զգեցար ըզ-
վայելչութի. սրբութե փառաց ընդ մէջ քո
ածեալ. պատեա զմեզ մեր ճշմարտութբ:

Որ զարարչագործ բազուկս քո. տա-
րածեցեր ընդդէմ աստեղայ. հաստա-
տեա՛ զբազուկս մեր կարօղութ. համ-
բարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդիլ
Խիւսմամբ Թագ 'ի գլուխ. պատեսցես
զմիտս և զգայարանս. խաչանիշ ուրար
մամբ ըստ աչարոժմի. ծածկեալ յուսկե-
թել 'ի զարդ խորանի: Բամիյ բոլո-
րից տիրապէս ամծպետական. Նախորստա-
պատ սիրով զմեզ զկեստաւորեցեր.
քում սուրբ խորհրդոյդ լինել սպասա-
ւոր: Թագաւոր երկնաւոր. զեկեղեցի քո
անշարժ պահեա՛. և զերկրպագուս անո-
ւանդ քում պահեա՛ 'ի խաղաղութեան:

| Ամք տն. և լուսնական հայոց: | Ոսկի թիւ | Հանգստեան | Ամսական թիւ | Տանուտէր: |
|---|---|---|---|---|
| 1852. ռյա. | ժլ | բգ | ժթ | Ձուկ |
| 1853. ռյբ. | " | ե | լ | Խոյ |
| 1854. ռյգ. | յ | է | ժա | Ցուլ |
| 1855. ռյդ. | զ | զ | իբ | Երկաւոր |
| 1856. ռյե. | ալէ | էա | դ | Խեցգետին |
| 1857. ռյզ | ձ | բ | ժդ | Առիւծ |
| 1858. ռյէ. | բ | գ | իե | Կոյս |
| 1859. ռյը. | ն | ե | զ | Կշիռ |
| 1860. ռյթ. | ծլ | էզ | ժէ | Կարիճ |
| 1861. ռյժ. | կ | է | իը | Աղեղնաւոր |
| 1862. ռյժա. | զ | ա | լ | Այծեղջիւր |
| 1863. ռյժբ. | ժ | բ | իա | Ջրհոս |
| 1864. ռյժգ. | վս | գե | բ | Ձուկ |
| 1865. ռյժդ. | ծ | է | ժգ | Խոյ |
| 1866. ռյժե. | զ | զ | իդ | Ցուլ |
| 1867. ռյժզ | ալ | է | է | Երկաւոր |
| 1868. ռյժէ. | իժ | աբ | ժզ | Խեցգետին |
| 1869. ռյժը. | վ | գ | իէ | Առիւծ |
| 1870. ռյժթ | ն | ե | ը | Կոյս |
| 1871. ռյի. | է | է | ժթ | Կշիռ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1872. ռյիա. | ջպ | զէ | լ | Կարիճ |
| 1873. ռյիբ. | զ | ա | ժա | Աղեղնաւոր |
| 1874. ռյիգ. | ժ | բ | իբ | Այծեղջիւր |
| 1875. ռյիդ. | հ | գ | գ | Ջրհոս |
| 1876. ռյիե. | կծ | դե | ժդ | Ձուկ |
| 1877. ռյիզ. | զ | զ | իե | Խոյ |
| 1878. ռյիէ. | պ | է | զ | Ցուլ |
| 1879. ռյիը. | ի | ա | ժէ | Երկաւոր |
| 1880. ռյիթ | տվ | բգ | իը | Խեցգետին |
| 1881. ռյլ. | ն | դ | ժ | Առիւծ |
| 1882. ռյլա. | ե | ե | իա | Կոյս |
| 1883. ռյլբ. | ջ | զ | բ | Կշիռ |
| 1884. ռյլգ. | ճղ | էա | ժգ | Կարիճ |
| 1885. ռյլդ. | գ | բ | իդ | Աղեղնաւոր |
| 1886. ռյլե. | հ | գ | ե | Այծեղջիւր |
| 1887. ռյլզ. | կ | դ | ժզ | Ջրհոս |
| 1888. ռյլէ. | փւ | եզ | իէ | Ձուկ |
| 1889. ռյլը. | ճ | է | ը | Խոյ |
| 1890. ռյլթ | ի | ա | ժթ | Ցուլ |
| 1891. ռյխ. | տ | բ | լ | Երկաւոր |
| 1892. ռյխա | հկ | գդ | ժա | Խեցգետին |
| 1893. ռյխբ | ե | ե | իբ | Առիւծ |
| 1894. ռյխգ. | ջ | զ | գ | Կոյս |
| 1895. ռյխդ | լ | է | ժդ | Կշիռ |
| 1896. ռյխե. | դգ | աբ | իե | Կարիճ |
| 1897. ռյխզ. | հ | գ | զ | Աղեղնաւոր |

| Գիր տարւոյ: | Օր յայտնութեան: | Միջոց ուտից, օր | Առաջաւորաց Բա | Բուն բարեկենդան | ԶԱՏԻԿ | Երեւման խաչ | Համբարձումն | Հոգեգալուստ | Սբ Գրիգ՛՛ Բար՛՛ | Վարդավառ: |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | յունվ | փետր | մարտ | ապր | ապր | մայ | մայ | յունի |
| Ա | գշ | զ | ժա | ա | իբ | ժը | լ | ժ | լ | իը |
| Բ | բշ | է | ժբ | բ | իգ | ի | մայ ա | ժա | յուն ա | իթ |
| Գ | կիր | ը | ժգ | գ | իդ | իա | բ | ժբ | բ | լ |
| Դ | շբ | թ | ժդ | դ | իե | իբ | գ | ժգ | գ | յուլ ա |
| Ե | ուր | ժ | ժե | ե | իզ | իգ | դ | ժդ | դ | բ |
| Զ | եշ | ժա | ժզ | զ | իէ | իդ | ե | ժե | ե | գ |
| Է | դշ | ժբ | ժէ | է | իը | իե | զ | ժզ | զ | դ |
| Ը | գշ | ժգ | ժը | ը | իթ | իզ | է | ժէ | է | ե |
| Թ | բշ | ժդ | ժթ | թ | լ | իէ | ը | ժը | ը | զ |
| Ժ | կիր | ժե | ի | ժ | լա | իը | թ | ժթ | թ | է |
| Ի | շբ | ժզ | իա | ժա | ապր ա | իթ | ժ | ի | ժ | ը |
| Լ | ուր | ժէ | իբ | ժբ | բ | լ | ժա | իա | ժա | թ |

| Ս. Իտոց Հրեշ. պահ | Լուսաւորչաց Գիւտ | Ս. Իջ.՛՛ Հրեշ. պահ | Սուրբ Խաչ | Ս. Գէորգ. Զօր.՛ | Ս. Իջման Սաղ. Հե | Վերա Խաչ | Յիսնակաց Զատ. | Մ. Յակոբեայ Զա. | Ս. Իջման Սաղ., օ. | Օր Զատկի՛՛ յայտ՛՛ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգս | | մրտ | մրտ | | յնս | մայ | փետ | | |
| դ | ժզ | դ | ժգ | ե | ե | իե | ժե | զ | ժը | գշ |
| դ | ժէ | դ | ժդ | ժա | ե | իզ | ժզ | ե | ժէ | դշ |
| դ | ժը | դ | ժե | ժը | ե | իէ | ժէ | ը | ժզ | կիր |
| զ | ժթ | ե | ժզ | ժգ | ե | իը | ժը | թ | ժդ | շբ |
| զ | ժգ | ե | ժէ | ժդ | ե | իթ | ժթ | ժ | ժգ | ուրբ |
| զ | ժդ | դ | ժա | ժը | ը | իգ | ի | ա | ժդ | եշբ |
| զ | ժե | դ | ժթ | ժթ | ը | իդ | իա | ժթ | ժթ | դշ |
| զ | ժզ | դ | ժգ | ե | ե | իե | ժե | զ | ժը | գշ |
| զ | ժէ | դ | ժդ | ժա | ե | իզ | ժզ | ե | ժէ | դշ |
| զ | ժը | դ | ժե | ժը | ե | իէ | ժէ | ը | ժդ | կիր |
| ե | ժթ | ե | ժզ | ժգ | ե | իը | ժը | թ | ժգ | շբ |
| ե | ժգ | ե | ժէ | ժդ | ե | իթ | ժթ | ժ | ժբ | ուրբ |

| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | Օ.ՂՏԻԿ | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ջուղ | ձեռ | տայ | Տայ | Տայ | Տայ | յ՚ ե՛ | յ_ե |
| Խ | ·չէ | ժը | իգ | ժգ | գ | ա | ժբ | իբ | ժբ | ժ |
| Ծ | ·չ | ժթ | իդ | ժդ | դ | բ | ժգ | իգ | ժգ | ժա |
| Կ | էչ | ի | իե | ժե | ե | գ | ժդ | իդ | ժդ | ժբ |
| Հ | էչ | իա | իզ | ժզ | զ | դ | ժե | իե | ժե | ժգ |
| Ձ | չէր | իբ | իէ | ժէ | է | ե | ժզ | իզ | ժզ | ժդ |
| Ղ | չէ | իգ | իը | ժը | ը | զ | ժէ | իէ | ժէ | ժե |
| Ճ | ու-ր | իդ | իթ | ժթ | թ | է | ժը | իը | ժը | ժզ |
| Մ | էչէ | իե | լ | ի | ժ | ը | ժթ | իթ | ժթ | ժէ |
| Յ | էչ | իզ | լա | իա | ժա | թ | ի | լ. | ի | ժը |
| Ն | էչ | իէ | ·ա | իբ | ժբ | ժ | իա | լա | իա | ժթ |
| Շ | էչ | իը | բ | իգ | ժգ | ժա | իբ | ·ա | իբ | ի |
| Ո | չէր | իթ | գ | իդ | ժդ | ժբ | իգ | բ | իգ | իա |

| Ս. Էջ՝ շաբթ. պաս | Աստուածածին | Ս. Էջ՝ շաբթ. պաս | Սուրբ Խաչ | Ս. Գէորգայ, Բար. | Ս. Էջ՝ ուտիս, շբ | Գիւտ խաչ | Յիսնակաց Բար՛ | Ս. Յակոբայ Բար՛ | Ս. Էջ՝ ուտիս օր | Օր Բարեկ՝ յայտ՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ոգ. | | ապրլ | ապրլ | | յուն | յուլ | օգս | | |
| ե | ժգ | է | ժա | ժը | ը | իգ | ի | ժա | ժգ | եշբ |
| դ | ժե | է | ժբ | ժթ | ը | իգ | իա | ժբ | ժբ | դշբ |
| ե | ժզ | . | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | [illegible] |
| ե | ժէ | . | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | [illegible] |
| ե | ժը | լ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | [illegible] |
| է | ժթ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | [illegible] |
| է | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | [illegible] |
| է | ժդ | է | ժա | ժը | ը | իգ | ի | ժա | ժգ | [illegible] |
| է | ժե | է | ժբ | ժթ | ը | իգ | իա | ժբ | ժբ | [illegible] |
| է | ժզ | է | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | [illegible] |
| զ | ժէ | է | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | [illegible] |
| է | ժը | է | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժա | [illegible] |

| Գիր տարւոյ | Օր յայտնութե՛ | Մէջ՛ ուտից օր | Առաջաւո՛ր պահ | Բուն բարեկենդ | ԶԱՏԻԿ | Արեւման պահ | Համբարձման | Հոգեգալստեան | Ս. Գրիգորի բա | Վարդավառ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փետ | փետ | ապր | մայ | մայ | յունի | յունի | յուլ |
| Ձ | շբ | լ | դ | իե | ժե | ժգ | իդ | գ | իդ | իբ |
| Գ | կիր | լա | ե | իզ | ժզ | ժդ | իե | դ | իե | իգ |
| Ջ | բշբ | լբ | զ | իէ | ժէ | ժե | իզ | ե | իզ | իդ |
| Ռ | գշ | լգ | է | իը | ժը | ժզ | իէ | զ | իէ | իե |
| Ս | դշ | լդ | ը | մրտ | ժթ | ժէ | իը | է | իը | իզ |
| Վ | եշ | լե | թ | բ | ի | ժը | իթ | ը | իթ | իէ |
| Տ | ուր | լզ | ժ | գ | իա | ժթ | լ | թ | լ | իը |
| Ր | շբ | լէ | ժա | դ | իբ | ի | լա | ժ | յլս | իթ |
| Ց | կիր | լը | ժբ | ե | իգ | իա | յնս | ժա | բ | լ |
| Ւ | բշբ | լթ | ժգ | զ | իդ | իբ | բ | ժբ | գ | լա |
| Փ | գշ | խ | ժդ | է | իե | իգ | գ | ժգ | դ | օգ |
| Ք | դշ | խա | ժե | Զ. Փոխեալն՝ ի միւսումն տես։ | | | | | | |

| Մեծ' շենի պա' | Նատատուածածնեն | Մէջ շենի պա'' | Մուտք Եաշ | Մէ Գէորգայ Եա | Մէջ ուտեխ շենի | Վէտա եաշ | Յինանցայ Եռըլ | Մէ յակոբեայ Եար | Մէջ ուտեխ օր | Օր Եկր'' յայտա'' |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | օգս | | սեպ | սեպ | | հոկ | նոյ | դեկ | | |
| դ | ժբ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | շբթ |
| դ | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | ուր |
| դ | ժդ | դ | ժա | ժը | ը | իգ | ի | ժա | ժգ | եշէ |
| գ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | դշէ |
| գ | ժզ | դ | ժգ | ի | է | իե | ժե | զ | ժը | գշէ |
| գ | ժէ | դ | ժդ | իա | է | իզ | ժզ | է | ժէ | բշէ |
| գ | ժը | դ | ժե | իբ | է | իէ | ժէ | ը | ժզ | կիր |
| բ | ժբ | ե | ժզ | իգ | է | իը | ժը | թ | ժե | շբթ |
| բ | ժգ | ե | ժէ | իդ | է | իթ | ժթ | ժ | ժդ | ուր |
| բ | ժդ | դ | ժա | ժը | ը | իգ | ի | ժա | ժգ | եշէ |
| բ | ժե | դ | ժբ | ժթ | ը | իդ | իա | ժբ | ժբ | դշէ |



225+189+9415

189
94
5

1022

2789
34567
3210

6612

5 1851095

m

m

g g

g

g

g

g g

g

այնք, ո

Ը երեար

Ա էա, ա., եւ եա, եա եւ, էէէ,

համ, եւ համ, համ էէ, ևա եւ, եւեա,

... իսկ յովհաննէս իր-

կամ ծա-

ուք

ռաջին»,

չէ յետին

էին 'ի կանայ․․ ռաջին հակ

մարդն ոչ յերկնից․․

ջին․․․,'ի չորրորդում

սա յս․․․ հանգեաւ

եւրդ

[illegible]

[illegible] 277 [illegible]

[illegible] 10 [illegible]